


Ն. ԳՈԽՉԱՐՈՎ

Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐԿՈՄԻ ԿՈՒԼՏՈՐՈՂԱԳԻՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ  
ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵջ



ՊԵՏՑՐԱԾ

1933

ՅԵՐԵՎԱՆ

77 20.JUL 2010

Ն. ԳՈԽԱՐՁ

6  
9.77

45

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ  
ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵջ

2488  
11789  
37



ԽԵԶԲԱՆ

1933

ՅԵՐԵՎԱՆ

21 MAR 2013

97

Ընկ. Գանչարովն իր այս գրքույկը գրել և ծանր Արդյունաբերության ժողկոմատի տեխնպոպի հատուկ հանձնարարությամբ։ Այս գրքույկը հրատարակելուց մենք հետապնդել ենք այն նպատակը, վոր մեր ձեռնարկությունների տեխնիկական ակտիվին և տեխնպոպագանդի կազմակերպիչներին տանք աշխատանքի համար ավելի լիակատար ձեռնարկ, վորը կիրարինի տասնյակ հրահանդներ, կանոնադրություններ և այլն։ Այդպիսի գրքույկի անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացել է։

Մենք կանգ առանք՝ Ավելիաքիմի անվան գործարանի փորձի վրա այն պատճառով, վոր այդ գործարանի տեխնիկական ակտիվին և տեխնպոպին հաջողվել է մի շարք անխուսափելի վրիպումներ և սխալներ անելով հանդերձ, վորնք անխուսափելի յեն գործի սկզբում, մոտենալ մեր հիմնական խնդրի լուծմանը—տեխնիկական պլրոպագանդը կոնկրետ կերպով շաղկապել բրիգադի, ցեխի, ամբողջ գործարանի արտադրական կյանքի հետ, ընդ վորում գործարանում տեխնպոպագանդը ծավալվել է չափազանց բազմապիսի ձևերով՝ սկսած տեխնիկական տոնակատարություններից ու կոնֆերանսներից և վերջացրած անհատական տեխնիկական հրահանդապորումով և արտադրության հիվանդութ կողմերի գիտական եքսպերտիզայով։

Ընկ. Գանչարովի գրքույկի արժանիքը նրանումն է, վոր նրան հաջողվել է պարզ ու կոնկրետ կերպով նկարագրել տեխնպոպագանդի կազմակերպման գործարանային փորձը, առանց թագցնելու նրա մեջ յեղած սխալները։

Պատ. Խմբագիր — Մ. Դավթյան  
Քարգանիչ Յարշտու և Ա. Ռիսայան  
Տեխ. Խմբագիր — Գ. Զենյան  
Սրբագրեց — Գար. Հակոբյան  
Հանձնված ե արտադրության 11 հունիսի 1933 թ.  
Ստորագրված ե ապելու 14 հունիսի 1933 թ.

Գետրհատի տպարան, Գլավիլս № 8185,  
Հբատ. № 2614, Պատվիր № 1442, Տիրաժ 3000

ՄԵՆՔ կուզենայինք գրքույկի մեջ նշել մի շարք մոմենտներ, վորոնք արժանի յեն ձեռնարկությունների աշխատողների հատուկ ուշադրությանը:

Ամենից առաջ—դա տեխնիկական ակտիվի միաձուլման ու կազմակերպման հարցն ե: Այն փաստը, վոր Ավիաքիմի անվան գործարանում ստեղծվել ե բազմամարդ ճարտարագիտական-տեխնիկական ակտիվ, վը առական հանգամանք ե, վորով և բացատրվում են գործարանի հաջողությունները տեխնիկական կազմակերպման ասպարիգում: Զի կարելի պատշաճ կերպով դնել տեխնիկական դիմումական աշխատանքն առանց գործարանի արտադրական-տեխնիկական կարիքներն իմացող ակտիվը համախմբելու տեխնիկական շուրջը, վորը ժամանակին ազդանշում ե այն կետերը, վորոնց վրա պետք ե կենարոնացնել ուշադրությունը:

Սակայն պետք ե ասել, վոր Ավիաքիմի անվան գործարանումն ել այդ ուղղությամբ արված են միայն առաջին քայլերը: Ընթացիկ տարում մեր առաջ ծառացած լոնդիրները՝ պայքարի ծավալումը տեխնարդֆինալանի համար, ձեռնարկության կարևորագույն և ամենապատսխանատու կետերում տեխնիկմումի արմատացումը, տեխնիկական կազմակերպումը ճարտարագետների և տեխնիկների մեջ, վարպետների, յերեխաների մեջ և այլն—այս ամենը պահանջում են հարցուրավոր և հազարավոր տեխնիկական ակտիվի համախմբումը ձեռնարկությունների տեխնիկական դուրս: Դրա համար ամենակարեւոր լծակներից մեկը պետք է հանդիսանա ՏՏԲ-ների և ՆԻՇՈ-ների վրա խոչընդուռ ուշադրություն դարձնելը, նրանց կոնկրետ ողնություն և աջակցություն ցույց տալը:

Հսկայական նշանակություն ունի ձեռնարկության մեջ տեխնիկական պլանը մշակելու բնույթն ու կարգը: Այստեղ վոչ ճիշտ ճանապարհով գնալը նշանակում է անշուշտ կործանել գործը: ՄԵՆՔ պատահական չեն, յերբ պաշտպանում ենք այդպիսի մասշտաբով ստեղծել այդ լծակները,

տեխնիկական պլանը պետք է լինի տեխնարդֆինալանի մի որգանական մասը: Տեխնիկական պլանը պետք է հանդիսանա մի ծրագիր կոնկրետ միջացառումների, վորոնք կապված են տեխնոլոգիական պրոցեսի ճիշտ կազմակերպման խնդիրների հետ, վոչ թե ընդհանրապես, այլ առանձին ցեխերի, առանձին ագրեգատների, արտադրության հիվանդություն կետերի առումով: Տեխնիկական պլանը պետք է հանդիսանա արտադրության մեջ նոր տեխնիկական մեթոդներ և ձեւեր արմատացնելու համար մղվող պայքարի պլան, ոյուտարարությունների իրացման, նոր տեխնիկայի յուրացման համար մղվող պայքարի պլան:

Ինչպես և այն բոլորը, ինչ վերաբերում է արտադրության տեխնիկային, պլանը պետք է լինի ճգրիտ, պետք է ունենա վորոշակի ժամկետներ, կոնկրետ կատարողների լայն մասսաների և ՃՏԱ-ի անդամների կարծիքները, նկատառումներն ու փորձը հաշվի առնելու հիման վրա: Ուստի և անհրաժեշտ ե, վորպեսզի պլանի մշակման գործին իրոք մասնակցեն և նրա հետ ծանոթանան ձեռնարկության աշխատողների ամենալայն խավերը:

Ավիաքիմի անվան գործարանի փորձը չափաղանց գնահատելի յե այն տեսակետից, վոր գործարանը կարողացել է իր ուժերով ստեղծել տեխնիկական կազմական նյութական լծակներ: Արտադրական կարինետի, տեխնիկական գրադարանի, Փոտո-լաբարատորիայի, մոդելների արտադրության, ուղղիո-սարքավորման և կինո-կարինետի ստեղծումը չափաղանց եական մոմենտներ են գործարանի աշխատանքի մեջ: Տեխնիկական պատման տալ իսկական մասսայական թափ, ապահովել նրա մատչելիությունն ու առարկայական լինելը—այդ կարելի յե անել միայն ստեղծելով և ողտագործելով մասսայական տեխնիկական դիմումուն տեխնիկական միջոցները: ՄԵՆՔ նոր ենք ակտում այդպիսի մասշտաբով ստեղծել այդ լծակները,

Վորոնք համապատասխանում են յեղած և աճող պահանջներին։ Առանձին գործարանների նախաձեռնությունը, վորոնք իրենց ուժերով ստեղծում են տեխպրոպագանդի՝ իրենց հարկավոր միջոցները, պետք ե ըստ ամենայնի վողջունել, իսկ նրանց վորձը հանձնարարել ուրիշ գործարանների։

Ներկայումս պետք ե հատուկ ուշադրություն դարձնել արտադրական հրահանգներին։ Ստալինգրադի տրակառային և Նիժեգորոդի ավտոմոբիլային գործարանների վորձը ցույց է տալիս, թե ինչքան շատ բան էնք կորցնում մենք չնորհիվ նրա, վոր չենք կարողանում ոգտագործել գոյություն ունեցող հրահանգները։ Պետք է լայնորեն կիրառել տեխպրոպագանդի այդ ձևը և ամենից առաջ կարեռագույն ճակատամասերը, աղբեկատներն ու մեքենաներն ապահովել գիտականորեն ստուգված այնպիսի արտադրական հրահանգներով, վորոնք կազմված են ՃՏԱ-ի, հին բանվորների և գիտա-հետազոտական ինստիտուտների մասնակցությամբ։

Ընկ. Գանչարովի գրքույկում նշված՝ մասսայական-տեխնիկական պրոպագանդի ձևերն այն ժամանակ միայն եֆեկտավոր կլինեն, յեթե նրանք նախապատրաստվեն ամենահոգատար կերպով։ Շատ հեշտ կերպով կարելի յե վարկարեկել ամեն մի մասսայական միջոցառում։ Յուրաքանչյուր տեխնիկական վրիպում, զեկավարների վոչ բավականաչափ իրազեկություն, վորձի թույլ հաշվառում ապիկար են դարձնում այդ մասայական միջոցառումները։

Միջանկյալ, մենք ամբողջովին բաժանում ենք ընկ։ Գանչարովի տեսակետը տեխնիկական կոնֆերանսների վերաբերյալ։

Վերջապես մի քանի նկատողություններ այն մասին, թե ինչն ե թույլ արտացոլվել այս գրքույկում։

Վոչ գործարանի մեղքով՝ թույլ ե լուսաբանվել ՔՏՈՒՀ-ի և գիտահետազոտական ինստիտուտի դերը։

Թույլ ե լուսաբանված նաև տեխնիկական գրքի և նրա վրա աշխատելու հարցը, գործարանի մասնակցության հարցը տեխնիկական գրականություն ստեղծելու գործում։

Հրատարակելով այս դիրքը վորպես ուղեցույց ձեռնարկություններում աշխատելու համար, մենք չենք ուղղում անել, թե ուրիշ ձեռնարկություններում չկա այնպիսի փորձ, վորը պետք ե ընդհանրացնել։ Մենք սպասում ենք, վոր այս գրքույկի յերևան գալով մի շարք գործարաններ նույնպես կցուցաբերեն իրենց վորձը։

Ի վերջո անհրաժեշտ ե նշել, վոր իր հաջողությունների համար գործարանը պարտական ե ճիշտ կուսակցական ղեկավարությանը, գործարանային հասարակայնության ակտիվ աջակցությանը և այն ուշադրությանը, վորը գործարանի վարչությունը դարձել ե տեխպրոպագանդի հարցերի վրա։

ԽՍՀՄ ԾԱԺԿ ՏԵԽՊՐՈՊ

„ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՏԻՐԱՊԵՏԵՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ“

ԱՏԱԼԻՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1931 թ. վետրվարի 4-ին, տնտեսավարների խորհրդակցության ժամանակ ընկ. Ստալինը խոչը-րագույն հատակությամբ առաջ քաշեց տեխնիկային տիրապետելու խնդիրը: «Տեխնիկան վերակառուց-ման շրջանում վորոշում ե ամեն ինչ», — այս դրույթը խսկույն և գարձավ բանվորների և ճարտարագետ-տեխնիկան աշխատողների պայքարի մարտական ծրագիրը:

17-րդ կուսակցական կոնֆերանսն իր բանաձեռ-րում արձանագրեց, վոր «Փողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման բայլշենիկյան տեմպերը պահանջում են վորակյալ աշխատանքի հսկայական վե-րած և արդյունաբերության տեխնիկական կադրերի ա-րագ աճում: Այդ չտեսնված տեմպերը, ինչպես և բան-վորների և ճարտարագետ-տեխնիկական աշխատողների լայն խավերի կողմից, վորոնց թվում նաև նոր բանվոր-ների հսկայական մասսաների կողմից նոր տեխնիկական պրոցեսները յուրացնելու անհրաժեշտությունը պահանջ է դնում՝ բացի ստացիոնար ուսուցման վողջ սիատեմում կադրերի պլանային պատրաստումից, լայնորեն գար-գացնել արտադրական-տեխնիկական պրոպանգեդը՝ ընդգծումը մերն ե»:

Ավելաքիմի անվան գործարանը բայլշենիկորեն մոտե-

յավ այդ պատասխանատու քաղաքական խնդրի լուծման գործին։ Գործարանի նվաճումները՝ հնգամյակի կատարումը Յ ու կես տարում, 1932 թ. առաջին կիսամյակի ծրագրի կատարումը 106,4 տոկոսով, մի շաբք նոր տեխնոլոգիական պրոցեսների արմատավորումն արտադրության մեջ, պլաստիկ մասսաների, ձնշման տակ ձուլելու, մետաքսե սղոցների և այլն տեխնիկային տիրապետելը—կազմում են գործարանի կոլեկտիվի կողմից, կունկազմակերպությունների ղեկավարությամբ՝ հանուն ընկ. Ստալինի Յ պայմանների, հանուն տեխնիկայի տիրապետման մղած պայքարի հանրագումարը։

Տեխնիկական պրոսպահնդի ասրաբատները՝ տեխնորոպները, վորոնք ձեռնարկություններում ստեղծվել են ընկ. Ստալինի լողունգի կենսագործման կարգով,—ամրապնդվում և լայնորեն զարգացնում են իրենց աշխատանքը։ Ավիագիմի անվան մեր գործարանում տեխպրոպն իր կուս-պրոֆկազմակերպության ղեկավարությամբ կարողացել է ձեռք բերել զգալի նվաճումներ։ Դրա գուցանիշներն են հանդիսանում այնպիսի փաստերը, ինչպես կաղապարային խմբակի աշխատանքը գործիքային ցեխում, վորը տվեց աշխատանքի արտադրականութայն 20 տոկոսյա աճում, չնայած այն բանին, վոր կաղապարային արհեստանոցում կան մեծ քանակությամբ նոր, չլարտված բանվորներ. խոտանի իջեցումը յեռուցման արհեստանոցում, մեր աշխատանքը՝ ձնշման տակ ձուրիվածքից և պլաստմասսայից ղետախներ արտադրելու բնագավառում, խոտանի կրկնակի իջեցումն արմանային գաղղահների վրա, գործիքային ցեխի խոտանի կորագծի իջեցումը հունվարի 8,03 տոկոսից մինչև 5,35 տոկոս—ապրիլին և այլն։

Տեխնիկային տիրապետելու համար մղվող պայքարը դարձավ մասսայական շարժում։ Տեխնիկայի համար մղվող պայքարի կենարոնական դեմքերը դարձան բանվորն ու ճարտարագետ հարվածայինը։ Այն փաստը, վոր գործարանի տեխպրոպի շուրջը ստեղծվել է ճար-

տարագետների, վարպետների և հարվածային բանվորների ակտիվ, վորոնք յեռաղագին աշխատում են վորպես խմբակների ղեկավարներ, ծրագրեր կազմողներ, տեխնոտոյին, սցենարիաների կազմողներ, այն փաստը, վոր հարյուրավոր գյուտարարներ և ռացիոնալիզատորներ ակտիվ կերպով մասնակցում են գործարանի վերակառուցմանը, վոր միայն տեխպրոպի կազմակերպած խոտանի կենտրոնական ցուցահանդեսի նյութերի հիման վրա հավաքած առաջարկությունները տալիս են 50.000 ռուբլու տնտեսում, այն փաստը, վոր հարվածային բանվորների ճնշող մեծամասնությունը մտել ե տեխնիկայի տիրապետման ընկերության կազմի մեջ, վերջապես գործարանի ամբողջ կոլեկտիվի լայն մասնակցությունը տեխպլան կազմելու գործին, մոտ մեկ միլիոն ռուբլու տնտեսումը, վոր ստացվել է բանվորական առաջարկությունների չորսհիվ, ցայտուն կերպով պատկերագորում են տեխնիկայի համար մղվող պայքարի ծավալը մեր գործարանի փորձի հիման վրա։

Սակայն մեզ մոտ տեղ չունի «առհասարակ տեխնիկայի համար» մղվող պայքարը։ Տեխպրոպն անց է կացնում գործարանի կուս-կազմակերպության դիրեկտիվն այն մասին, վոր «տեխպրոպի ամբողջ աշխատանքը պետք է շաղկապլամ լինի գործարանի հերթական խոնդիրների հետ։ Ծավալելով տեխնիկական պրոպագանիզմի մասսայական-իմբակային, բրիգագային և անհատական ձեւերը անհատեցն ե այդպիսիները հագեցնել արդինալիանի կատարման, արտադրանքի վորակերպարագման և ինքնարժեքի իջեցման թվերով։ Յուրացնելով ժամանակակից ոտարերկրյա տեխնիկան, ուսումնասիրելով առանձին ձեռնարկությունների փորձը, աշխատելով լերակառուցման, գյուտարարության, տեխնոլոգիական պրոցեսների բարելավման վերաբերյալ արտադրական խոնդիրների լուծման գործի վրա, անհրաժեշտ է հիշել, վոր այդ բոլորը պետք է ապահովի ար-

աադրական-պլանային առաջադրանքների կատարումն ու գերակատարումը. Հարկավոր ե տեխսպրոպագանդիքազմապիսի ձևերի ամբողջ մասսաներ հագեցնել կուսակցականության վոգով և կուսկազմակերպության ընթացիկ խնդիրներով: Հարկավոր ե վճռական պայքար հայտարարել աջ թեքման դեմ տեխսպրոպագանդիք բնադավառում, վորն արտահայտվում է տեխսպրոպագանդիք դերի թերագնահատումով տվյալ ետապում, մյուս կողմից անհրաժեշտ է վճռական հակահարված տալ այն փորձերին, վորոնց նպատակն է տեխսպրոպագանդը դարձնել, ինքնանպատակ, այդպիսին կտրելով բրիգադի, հերթափոխության, ցեխի ամենակենսական խնդիրներից. տեխսպրոպագանդն ակադեմիզացիայի յենթարկել, կտրել դազդյահի, ագրեգատի աշխատանքի հարցերից—նշանակում ե նրա եյությունը հավասարեցնել զերոյի», (գործարանի կուսակցական-տեխնիկական կոնֆերանսի բանաձելից):

Արդինպես համար մղվող պայքարի այդպիսի՝ կուսակցականության վոգով և հազեցած յեղել մեր ձեռնարկության մեջ տեխնիկային տիրապետելու համար մղվող պայքարն:

Այս գիրքը վորպես փորձի փոխանակություն մենք նվիրում ենք աշխատանքի այն կոնկրետ ձևերի ու մեթոդների նկարագրման գործին, վորոնք կիրառվել են մեր ձեռնարկության մեջ, 1931 թ. հոկտեմբերից մինչև 1932 թ. ապրիլը—կիսամյակում, այդ աշխատանքի դրական և բացասական կողմերի նկարագրմանը:

Մեր աշխատանքի հիմքում ընկած ե յեղել ընկ. Ստալինի 6 պայմանների կատարումը: Դիմազգիկության և հավասարեցման դեմ մղվող պայքարն իր արտահայտությունը գտել ե նաև տեխնիկական պրոպագանդի մեջ: Յերիտասարդ, խորհրդային մասնագետներ պատրաստելու հարցում, հին մասնագետների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցում կուսակցության առաջդրած դրույթների կատարումն ապահովեց տեխ-

նիկական պրոպագանդի լայն զարգացումը: Պետք ե ասել, վոր Հենց մեր կուս. և պրոֆկազմակերպությունների կողմից ընկ. Ստալինի ցուցումների վոգով վերակառուցված ձջմ.-յի բյուրոն դարձավ առաջատար առանցք տեխսպրոպի պրակտիկայում:

## ՏԵԽՊՐՈՊԸ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵջ

Զեռնարկություններում մղվող տեխնիկական պրոպագանդը նոր գործ է, սակայն արդեն նրա ծավալման համեմատաբար կարճ ժամանակաշրջացքում կուտակվել է զգալի փորձ, վորը պետք է ընդհանրացնել:

Յերբ մենք սկսեցինք տեխսպրոպագանդի աշխատանքը Ավիագիմի անվան գործարանում, այդ ժամանակ դեռ ճգրիտ չեյինք պատկերացնում վոչ այն, թե ինչ պետք է անել, վոչ ել այն, թե ինչպես պետք է կենսագործենք մեր առաջ դրված խնդիրները: Մեր տրամադրության տակ կար մեկ յեզակի փաստաթուղթ՝ կուսակցության կենտրոնի ոգոստոսի 5-ի վորոշումը և ընկ. Բուխարինի զեկուցագիրը:

Նախ և առաջ հարկավոր եր կազմել տեխնիկական պրոպագանդի պլանը: Սկսած ոգոստոսի 5-ից մեր գործարանում կազմվեց այդպիսի 4 պլան: Քանի վոր տեխսպրոպագանդի պլանը վորոշում ե՝ նրա բովանդակությունը, ուղղությունը, ձևերը, մեթոդները, տեղը ձեռնարկության սիստեմում, այդ պատճառով ել մենք մեր նկարագրությունն սկսում ենք տեխնիկական պրոպագանդի այն բոլոր պլանների վերլուծությունից, վորոնք մենք կազմել ենք: Այդ պլանների վրա կարելի յե ակնքախ կերպով տեսնել մեր աճումը, տեսնել տեխնիկական պրոպագանդի կազմակերպման գործին՝ տիրապետելու պրոցեսը:

Տեխնիկական պրոպագանդի պլանը: Առաջին պլանը, վորը կազմվել է անցյալ տարվա ոգոստոսին, դեռևս մինչև տեխսպրոպի կազմակերպումը, իրենից ներկա-

յացնում եր մի փորձ՝ վորոշակի ձևերի մեջ դնելու ընկ. Բուխարինի գեկուցադրի մեջ նշված այն առաջադրանքները, վորոնք համապատասխանում են գործարանի արտադրական պլանին։ Քանի վոր այդ խնդիրները խորապես և կոնկրետ կերպով չելին ուսումնասիրվել, չկար նաև տեխնիկական պրոպագանդի փորձ, այդ պատճառով ել պլանն ուներ այն պակասությունը, վոր նրա մեջ կային բազմաթիվ զուտ կազմակերպչական միջոցառումներ, թվարկված ելին աշխատանքի շատ ձևեր և չեր պոաջադրված վոչ մի կոնկրետ արտադրական խնդիր տեխնիկական պրոպագանդի համար։ Այդ պլանն այդպես ել մնաց չիրագործված։

Հոկտեմբերի 1-ին գործարանում ստեղծվեց տեխնիկական պրոպագանդի ապարատ՝ տեխնոգրոպ։ Տեխնոգրոպը կազմեց նոր պլան։ Այդ պլանը հիմնականում հանդում եր այն բանին, վոր նրա մեջ ուրվադժված ելին մի շարք կազմակերպչական միջոցառումներ՝ առանց այդպիսիները սրելու վորեւե վորոշակի արտադրական խընդիրների կապակցությամբ, թեև այդ պլանում արդեն ավելի ճշգրիտ ելին արտահայտված այն խնդիրները, վորոնք դրված ելին տեխնոգրոպի առաջ ժամանակի տվյալ հատվածում։ Յերկրորդ պլանը գրեթե ամբողջովին իրացվեց։ Սակայն մինչև հունվար մենք զգացինք, վոր ու եխնիկական պրոպագանդը միայն այն ժամանակ կրառնա արդի ֆինավանների կատարմանն ոժանդակող, արտադրության տեխնիկային տիրապետելու գործին ոժանդակող ուեալ մի ուժ, յերբ նա—տեխնիկական պրոպագանդը—սևեռովի վորոշակի, ճշգրիտ արտահայտված կոնկրետ արտադրական առաջադրանքների վրա։

Գործարանի տեխնիկական պրոպագանդի 3-րդ պլանի մասին կարելի յեղատել նրանից արված հետեւալ քաղվածքի հիման վրա՝

ՏԵԽՈՐՈՊԻ ՅԵՎ ՃՏԱ. ԲՅՈՒՐՈՅԻ ՏԵԽՈՐՈՊԱԳԱՆԴԻ  
ՊԼԱՆԸ 1932 թ. ԱՌԱՋԻՆ ՅԵԽԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

## I. Աշխատանքի բովանդակություն.

1. Տեխնոգրոպի հիմնական աշխատանքը կենտրոնացնել հետեւալ ուղղություններով՝

ա) տիրապետել ավտոգենային և ելեկտրայեռուցման տեխնիկային։ խոտանի վերացում յեռուցման ցեխնություն։

բ) տերմիք արտադրության տեխնիկայի տիրապետում։ խոտանի վերացում տերմիք շիկարանում։

գ) հավաքող ցեխերի աշխատանքի վորակի բարձրացում։ գործարանի վորքը վերակառուցման պլանի պրոպագանդ։

դ) պլանավորման բարելավում գործիքային ցեխում։

ե) ցեխային ՏՊՄԲ (տեխնոլոգիական պրոցեսի սահմանման բյուրոյի) արմատացումը։

զ) ՏՊԲ-ի աշխատանքի պրոպագանդ։

է) ԳԿԲ-ի (գծանկարային-կոնստրուկտիվ բյուրոյի) արտադրողականության բարձրացում։

ը) պայքար մեխանիկական և փականագործական ցեխերի խոտանի դեմ։ \*

թ) ՎՀԲ-ի (վերահսկողական-հետազոտական բաժին) կոնսուլտացիոն ոժանդակությունը։

2. Ամբողջ աշխատանքը կառուցել տեխնիկայի տիրապետման մասսայական, բանվորական ընկերության հիման վրա։

## II. ԽՄԲԱԿԵՐ, ՍԵՄԻՆԱՐՆԵՐ և բրիգադաներ

1. Տեխնիկային տիրապետելու խմբակների մեջ ընդունել՝

ա) յեռուցման ցեխի բոլոր բանվորներին 4 խմբակ

բ) շիկարանի բոլոր բանվորներին . . . . .	3 խմբակ
դ) փականագործական ցեխը . . . . .	6 »
դ) մեխանիկական ցեխը . . . . .	8 »
ե) ատաղձագործական ցեխը . . . . .	4 »
դ) հավաքումը . . . . .	5 »
ը) վերանորոգման ցեխը . . . . .	4 »
թ) փայտի ցեխը . . . . .	2 »
ժ) պղնձի ցեխը . . . . .	2 »
ի) գործիքային ցեխը . . . . .	8 »
լ) գրոշմադրման . . . . .	2 խմբակ
Ընդամենը . . . . .	43 խմբակ

## 2. Սեմինարներում ընդդրկել

ա) ԳկԲ—ի (աշխատողների սիմինարներում . . .	35 հոգի
բ) ճարաարագետների սիմինարներում . . .	15 »
Ընդամենը . . . . .	2 սեմինար— 50 հոգի
3. Սիրողների խմբակներում ընդդրկել	
ա) Փոտո—սիրողների խմբակներ . . . . .	4 խմբակ
բ) ռազիո—սիրողների . . . . .	2 »
պ) դադայաներ և հարմարանքներ պատրաստողների . . . . .	1 »

Ընդամենը 7 խմբակ— 130 հոգի

4. Կազմակերպել տեխնիկայի տիրապետման բրիգադաներ՝	
ա) հարմարանքների և գործիքների ոգտագործման վրա վերահսկող բրիգադներ . . . . .	10 բրիգադ
բ) պլանային— ոպերատիվ բրիգադներ . . . . .	6 »

Ընդամենը 16 բրիգադ— 125 մարդ

Ընդամենը 68 խմբակ, սեմինարներ և բրիգադներ

## III Կոնյակովացիոն աշխատանք

1. Կոնսուլտացիոն աշխատանքով ընդդրկել բանվորների 50 տոկոսից վոչ պակաս, յեռամսյակում 400 կոնսուլտացիա տալու հաշվով:

2. Կոնսուլտացիաների բովանդակությունն ամբող-

ջովիկին յենթարկել արտադրական ծրագրի կատարման ընթացքին:

3. Վորապես հիմնական կոնսուլտացիոն ոբյեկտներ վերցնել՝

ա) մեխանիկական ցեխը.

բ) փականագործական ցեխը.

շ) յեռուցման ցեխը.

դ) շիկացման արհեստանոցը.

ե) գործիքային ցեխը.

զ) դրոշմագրումը.

է) հավաքումը.

ը) ատաղձագործական—հավաքման ցեխը.

թ) ԳկԲ—ն և կվիմի:

ժ) կենտրոնացված կոնսուլտացիաներ ՃԱՏ—ի և վորակյալ բանվորների անհատական պահանջների համաձայն:

4. ԳկԲ—ին ամբացնել մշտական կոնսուլտանտ—կոնսուրուլատորներ:

## 11937 IV. Յուցահանդեսներ

1. Կազմակերպել հետևյալ տեխնիկական ցուցահանդեսները՝

ա) խոտանի կենտրոնական ցուցահանդես՝ հարվածայինների ճաշարանին կից.

բ) խոտանի դեմ պայքարելու ցեխային անկյուններ ըոլոր ցեխներում.

շ) պլանայինային յեռուցում յեռուցման ցեխում.

դ) տերմիկ արտադրությունը շիկարանում.

ե) նոր տեխնոլոգիական պրոցեսների մշտական ցուցահանդես տեխնիկական կարիքներում և այլն:

## V. Ֆուսո

1. Բաց թողնել ֆուսոյի հետեյալ սերիաները՝

ա) ինչպես կարդալ գծանկարը,

բ) չափական գործիքից սպավելը.

դ) նոր տեխնոլոգիական պրոցեսը.



## VI. Ռադիո

1. Անցկացնել արտադրության ներածական կուբումբ ռադիոյով:

2. Ռադիոյի միջոցով կազմակերպել տեխնիկական սաղիոթերթի 18 համարների հրատարակում:

3. Կազմակերպել 30 տեխնիկական ինֆորմացիաների բացթողնում ռադիոյով:

4. Կազմակերպել ԾԱԺԿ-ի տեխնիկական գեկուցումների հաղորդում և ունկնդրում.

## VII. Տեխնիկական գրադարան

1. Կենտրոնական տեխնիկական գրադարանը լրացնել մինչև 1500 հատոր գրքերով:

2. Ցեխային տեխ. գրադարանները լրացնել մինչև 3000 հատորով:

3. Առաջին հերթին կատարել յեռուցման, մեխանիկական, փականագործական, գործիքային և հավաքման ցեխերի տեխնիկական գրադարանների լրացումը:

4. Ավարտել կենտրոնական տեխնիկական գրադարանի գրացուցակի կազմումը:

5. Կազմակերպել վոչ պակաս քան 15 հոդվածների թարգմանություն՝ մասսայական ողատագործման համար:

6. Բաց թողնել ինֆորմացիայի բաժնի 6 բյուլետեն:

7. Գործարանի շենքում կազմակերպել տեխնիկայի վերաբերյալ նոր գրքերի մշտական ցուցահանդես:

8. Կազմակերպել 10 վիճուրինա և 4 տեխնարար վերեւում նշված հիմնական ցեխերում:

## VIII. Մամուլ

1. Լույս ընծայել 10 տեխնիկական եջ, վորոնցից 2-ը յեռուցման և տերմիկ մշակման հարցերի շուրջը, մեկը մեխանիկական ցեխի, մեկը—փականագործական, 2-ը—նոր տեխնոլոգիական պրոցեսների, մեկը—հարմա-

բանքների և դործիքների վերաբերյալ, 2 ճարտարագիտական թերթեկի և 3-ը ռեզերվ:

2. Բարելավել տեխնիկական անկյունների վորակը պատի թերթերում՝ մեխանիկական, յեռուցման, գործիքային, փականագործական, հավաքման ցեխերում. կազմակերպել հատուկ տեխնիկական պատի թերթերի հրատարակում: Տեխնիկակիցների թիվը հասցնել մինչև 120 հոգու:

3. Լույս ընծայել մեկ տեխնիկական թռուցիկ յեռուցման և տերմիկ մշակման հարցերի շուրջը և մեկն՝ այն հարցի շուրջը թե «ինչ բան է կոնսորտուկտիվ հանդույցը»:

**IX. գասախոսություններ, եվսկուրսիաններ, կոնֆերանսներ և գործուղումներ**

1. Կազմակերպել 20 տեխնիկական գասախոսություն:

2. Կազմակերպել 3 արտադրական-տեխնիկական խորհրդակցություն (յեռուցում, շիկացում, մեխանիկական, փականագործական, գործիքային և փայտի ցեխի):

3. Կազմակերպել 5 փոքր տեխնիկական կոնֆերանսներ:

4. Փետրվարի վերջին կազմակերպել համագործանային տեխնիկական կոնֆերանս:

5. Գործուղել 15 ՃՏԱ. և 15 բանվորներ ուրիշ քաղաքների ձեռնարկություններ:

6. Կազմակերպել եքսկուրսիանների սերիա՝ տերմիկ արտադրություն,

բ) յեռուցում,

բ) արտադրության կազմակերպում և այլն:

**X. Մանկական տեխնիկական պրոպագանդ**

1. Կազմակերպել մանկական տեխնիկական 5 յերեկություններ:

2. Առանձնացնել մանկական-տեխնիկական գրադարան:

3. Կազմակերպել մանկական ֆոտո-ռադիո և մուգելային խմբակներ:

4. Բոլոր յերեխաներին եքսկուրսիա տանել համանման դարձարան:

Խ1. Կազմակերպչական մասսայական աշխատանք

1. Մինչև փետրվարի 1-ը բոլոր ցեխերում կազմակերպել ՏՏԸ (տեխնիկայի տիրապետման ընկերության) բջիջներ:

2. Մինչև փետրվարի 1-ը կազմակերպել ՆԻՏՈ-ի բջիջներ:

3. Առաջին յեռամսյակում ավարտել տեխարդֆինպլանի մշակումը:

4. Կազմակերպել համամիութենական ավիացուահանդեսի աջակցության խմբակ:

5. Կազմակերպել կոնկուրս լավագույն մողելի համար:

6. Կազմակերպել կոնկուրս լավագույն չիկացնողի համար:

Այս պլանով կատարված աշխատանքը տվել է դրական եֆեկտ, վորն անդրադարձել է արտադրության վրա, այդ մասին մանրամասն կպատմենք ստորև: Սակայն, այս պլանում ևս բավականաչափ հստակ կերպով չեն դրվել տեխարուպի արտադրական խնդիրները: Տեխարուպը դեռևս իր ուժերն ու ուշադրությունը ցրում է մեծաքանակ հարցերի վրա, վորոնցից վոչ բոլորն են հանդիսանում ակտուալ գործարանի համար տվյալ ժամանակակիցներ:

Տեխնիկական պրոպագանդի 4-րդ պլանը՝ ընթացիկ 1932 թվականի 2-րդ յեռամսյակի պլանն արդեն կազմվել է ամբողջ նախընթաց աշխատանքի հիման վրա և իր բովանդակությամբ հանդիսանում է շատ ավելի կոնկրետ, և ձեռով շատ ավելի հստակ պլան: Այդ պլանում տրված

է արտադրության վիճակի կարճ վերլուծությունը և դրա հիման վրա տեխարուպի առաջ 2-րդ յեռամսյակում դրված ե ընդամենը 4 հիմնական-տեխնիկական խնդիր և նշված ե 5 հիմնական ցեխ, վորոնք պետք է 2-րդ յեռամսյակում դառնան ուշադրության կենտրոն տեխարուպի աշխատանքում: Այդ պլանում ամենից ավելի ցայտուն և ճշգրիտ կերպով բնութագրված են տեխարուպի կողմից արտադրանքի վորակի համար մղվող պայքարի միջոցառումները, այդ ե գործարանի հիմնական խնդիրը տվյալ ետապում:

Հստ ձեմի պլանը բաժանվում է հետեւյալ բաժինների՝  
ա) գործարանի արտադրական ծրագրի կատարման կարճ վերլուծություն, բ) տեխարուպագանդի հիմնական բովանդակությունը հետեւյալ յեռամսյակում, գ) աշխատանքի հիմնական որյեկտները, դ) տեխարուպագանդի միջոցառումների թվարկումը հետեւյալ բաժանումներով՝ 1. միջոցառումի բովանդակությունը, 2. միջոցառումի որյեկտը (այն մարդկանց խմբակները, վորոնց համար այդպիսին նախատեսված ե), 3. այն ցեխերը, վորոնց համար նախատեսվում են տվյալ միջացառումները, 4. այն ձեռերը, վորոնց ոգնությամբ կենսագործվելու յեն՝ այդ միջոցառումները, 5. քանակը, 6. յենթադրվող ընդգրկումը, 7. կատարման ժամկետները և 8. այն անձինք, վորոնք պատասխանատու յեն այդպիսիների կատարման համար:

Գործարանի տեխարուպի և ՏՏԸ-ի բյուրոյի տեխնիկական պրոպագանդի պլանը 2-րդ յեռամսյակի համար.

Առաջին յեռամսյակը հանդիսացավ վճռական յեռամսյակ պլանի կատարման գործում: Սակայն, յեթք քանակական պլանը կատարված է, արտադրանքի վորակը և վորակական ցուցանիշները գեռես պետք ե բարձրացնել: Վորակի հարցերին առընթեր գործարանի առաջ կանգնած եր պլանավորման հետազա ամբանդման աշխատանքի արտադրականության բարձրացման, գործարանի փոքր վերակառուցման պլանի իրաց-

ման, նոր տեխնոլոգիական պրոցեսների արմատացման և պարապուրդների կրծատման խնդիրը:

Տեխնոլոգագանդի ծավալումն առաջին յեռամսյակում տվեց մի շարք դրական արդյունքներ, վորոնք զգալի դարձան առանձին արտադրական ճակատամասերում (յեռուցում, գործիքային յեխ, դրոշմաղբում և այլն):

Սակայն առաջիկա աշխատանքում տեխնոլոգագանդի բնագավառում յեղած մի շարք կազմակերպչական թերությունների լիկվիդացիայի հետ միասին անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել առաջատար արտադրական խնդիրների վրա:

(Աղյուսակները տես 23—29 հջերը)

Տեխնիկական պրոպագանդի այսպիսի պլանի կազմումը չի կարող անցկացվել կարինետային կարգով։ Այսպիսի պլանը պետք է լինի լայնորեն մշակված բանվորների իրենց կողմից ճարտարագետ-տեխնիկական և վարչա-տնտեսական աշխատողների մասնկացությամբ։

Գործարանի տեխնիկական պրոպագանդի պլանի կազմման կարգը հետեյալն է՝ գործարանի տեխնիկական պլանի հիման վրա՝ յերբեմն խորհրդակցությունների միջոցով, յերբեմն ել ուղղակի զանազան բաժինների ցեխերի ու աշխատողների հետ զրուցելու միջոցով քննարկվում են այն միջոցառումները, վորոնք պետք է դրվեն տեխնոլոգի առաջ։ Այսպիսի կազմակերպությունները, ինչպես տեխնոլոգիական պրոցեսի սահմանման բյուրոն, լարարատորիաները, տեխնիկական նախապատրաստության բաժինը, ՃՏԱ-ի բյուրոն, աղմինիստրացիան, առաջատար ցեխերի ճարտարագետ-տեխնիկական կազմը, գործարանային կոմիտեն, կուսակցական կոմիտեն և այլն տեխնոլոգին տալիս են իրենց առաջարկությունները տեխնիկական պրոպագանդի բովանդակության և միջոցառումների մասին։ Նշում ենք՝ չվարժված բանվորների հիմնական խմբակը յերիտասարարդությունն է։ Կոմյերիտմիությունը հանդիսանում է առաջատար ժամանակական տեխուսուցման ծավալման գործում։

## ՀԽՄԱՎԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Պատարագների գորակը և աջմատանքը՝ այտադրականությունը՝ գծանկարային դրադիտարթյուն,
- Անսանկարգ և մասակրայից սպառիլուս կարողություն,
- Գաղղրահների ուսումնակարուս և նրանց բնամքը,
- աշխատանքի գայլը կազմակերպում և աջմատանքը՝ կազմակերպում,
- Հորթիականություն կանոնու կոտրել հանդույցի հետ,
- Անդամություն կանոնու կոտրել հանդույցի հետ,
- Համարքման և հավաքման ցեխերի անդամումը հասնեքային սեսսենտի.

## ԱՇԽԱՎԱՆ ՀԽՄԱՎԱՆ ՈՐՅԵԿՑՆԵՐԸ

Միջոցառմություն	Օբյեկտ	Ցեղական	Ցեղական	Քանակի նշանակումը	Ժամկեցներ	
1	2	3	4	5	6	7
1. Տեխնիկական աշխատանքի լինիստանություն	Ցեղականագույն	Ցեղականագույն	Ցեղականագույն	47	—	հոգիութեան 1
լինիստանություն	Համարքման և հավաքման գործությունները					
լինիստանություն	Համարքման և հավաքման գործությունները					
լինիստանություն	Համարքման և հավաքման գործությունները					

2. Վելլահակիչների բարձրացման ման կողման բարձրացման կողմանը	վերահակիչները բարձրացման ման կողման բարձրացմանը	ման, ինստիտուտներ դպրության ման բարձրացմանը	ման, ինստիտուտներ դպրության ման բարձրացմանը	100 հոգի հունիսի 10
2. Պահանջողների կողմանը	պահանջողների տանքի համարագումանը նաև յիշ ուղերատանը ինքանիներ	լուսային առինա- պահանջողների տանքի համարագումանը նաև յիշ ուղերատանը ինքանիներ	լուսային առինա- պահանջողների տանքի համարագումանը նաև յիշ ուղերատանը ինքանիներ	45 մարդ հունիսի 1
3. Նորագործության վորակակագործ- ման սեփական	3. Նորագործության վորակակագործ- ման սեփական	3. Նորագործության վորակակագործ- ման սեփական	3. Նորագործության վորակակագործ- ման սեփական	15 մարդ հունիսի 1
5. Ռատարելիքայ մեջուների սեփական	5. Ռատարելիքայ մեջուների սեփական	5. Ռատարելիքայ մեջուների սեփական	5. Ռատարելիքայ մեջուների սեփական	25 մարդ հունիսի 1
6. Արտադրության կազմ- մակի բարձրացման սեփականը	6. Արտադրության կազմ- մակի բարձրացման սեփականը	6. Արտադրության կազմ- մակի բարձրացման սեփականը	6. Արտադրության կազմ- մակի բարձրացման սեփականը	1 մարդ հունիսի 1
7. Մասսայական կրնառու- ասցիա արտիլերիայի գործակի վերաբերյալ.	7. Մասսայական կրնառու- ասցիա արտիլերիայի գործակի վերաբերյալ.	7. Մասսայական կրնառու- ասցիա արտիլերիայի գործակի վերաբերյալ.	7. Մասսայական կրնառու- ասցիա արտիլերիայի գործակի վերաբերյալ.	1 մարդ մայիս
8. Կետրոնացված կոռուու- ռացիաները	8. Կետրոնացված կոռուու- ռացիաները	8. Կետրոնացված կոռուու- ռացիաները	8. Կետրոնացված կոռուու- ռացիաները	—

1	2	3	4	5	6	7
9. Գործադրությունի ուրիշ ձևն, վարպետները քաղաքաների ձեռնարկութեա բարձրացմանը թյուններ	12 մարդ հունիսի 12					
10. Տեխնոլոգիաների կրու- ճի համարականութեա	8 մարդ —					
11. Տեխնիկական եքամուրու- թյանը	11. Տեխնիկական եքամուրու- թյանը	11. Տեխնիկական եքամուրու- թյանը	11. Տեխնիկական եքամուրու- թյանը	—		
ա) Գործադրությունի բ) Համարականութեա	ա) Գործադրությունի բ) Համարականութեա	ա) Գործադրությունի բ) Համարականութեա	ա) Գործադրությունի բ) Համարականութեա	500 մարդ հունիսի 500		
12. Դրարանի սառա եշտ- կում	75 մարդ հունիսի 75					
13. Տաք դրամագուռում	13. Տաք դրամագուռում	13. Տաք դրամագուռում	13. Տաք դրամագուռում	45 մարդ հունիսի 45		
14. Ելեկտրակառուցում	14. Ելեկտրակառուցում	14. Ելեկտրակառուցում	14. Ելեկտրակառուցում	100 մարդ հունիսի 100		
15. Աշխատանքի կազմու- կերպման ռացիոնալ	100 մարդ հունիսի 100					

1	2	3	4	5	6	7
16. <i>Տեխնիկական նորմատիվությունների գործառք</i>	ՃՇԱ, նորմատիվությունների հարթ և լուսայինը կամացական	—	դասական	1	100 ժամուտ	—
17. <i>Մարդաբանական գործառքի հարթ և կուսականը անհանդիւան</i>	ճՇԱ և կուսականը	—	—	2	300 ժամուտ	—
18. <i>Չափահան գործիքի հարթ և կուսականը անհանդիւան</i>	բանականը կամ կուսականը	գործառք	100	—	—	—
19. <i>Բարձրացանհիլիք կուսականը կամ անհանդիւանը կամ ծառականը</i>	բանականը կամ կուսականը	գործառք	20 ակր	—	—	—
20. <i>Դաշտական կուսականը ձեռքբան բանականը կամ անհանդիւանը</i>	բանականը կամ անհանդիւանը	գործառք	10 ակր	—	—	—
21. <i>Վորամի աշխատանք</i>	բանականը կամ անհանդիւանը	գործառք	36	—	—	—
Կազմական կուսականը	կուսականը կամ անհանդիւանը	գործառք	—	—	—	—
անհանդիւանը կամ անհանդիւանը	գործառք	—	—	—	—	—
22. <i>2-րդ կուսականի անհանդիւանը</i>	—	—	—	—	մայլիսի 10	—
սիկտիկան պատմանը	—	—	—	—	—	—

1	2	3	4	5	6	7
23. <i>2-րդ կուսականի անհանդիւանը</i>	—	—	մեխանիզմի անհանդիւանը	—	—	մայլիսի 10
24. <i>Տեխնիկական նորմատիվությունների գործառք</i>	—	—	մշակութայի անհանդիւանը	—	—	հանդիսի 10
25. <i>Վորամի գործառքի գործառք</i>	բանականը կամ անհանդիւանը	բանականը կամ անհանդիւանը	բանականը կամ անհանդիւանը	30	—	—
26. <i>Զամփիչ գործիք</i>	բանականը կամ անհանդիւանը	—	մեխանիզմի անհանդիւանը	1	—	մայլիսի 25
27. <i>Համբարչիլիք սղում</i>	բանականը կամ անհանդիւանը	—	—	—	—	—
28. <i>Համբարչիլիք սղում</i>	—	—	—	—	մայլիսի 15	—
29. <i>Գաղղայահիլիք սղում</i>	—	—	—	—	հանդիսի 15	—
30. <i>Վորամի գործառքի անհանդիւանը</i>	բանականը կամ անհանդիւանը	բանականը կամ անհանդիւանը	բանականը կամ անհանդիւանը	15	—	—
31. <i>Բարձրացանհիլիք սղում</i>	բանականը կամ անհանդիւանը	—	—	—	մայլիսի 20	—

1	2	3	4	5	6	7
պլանավորում, գրքի էլեկտրոնական գործառնություններ գործակ	—	—	—	—	—	—
31. Փականաբարութական ցեղական գործառնություններ իմշ պլանավորություններ	պլանավորութական ցեղական գործառնություններ ձՏԱ, բանկվաճառքը	կահանութայիցի անհերթ հետա- զոտություններ- ներ և արտա- դրանքան-առելի- նելիքավաճառքը հըլկավաճառքը հըլկացու- թյունները	—	—	—	—
32. Մեխանիկական ցեղական ցեղական գործառնություններ պլանավորություններ	պլանավորութական ցեղական գործառնություններ ձՏԱ, բանկվաճառքը	կամականադրություններ կամականադրություններ ձՏԱ,	կիշտու- ացենարիթմում ըլի մշակում	կիշտու- ացենարիթմում պատրաստել մակորժական մակորժական	—	—
33. Դադարգանին ձեռագիրն և գործադրման վարում	բանկվաճառքը բանկվաճառքը	հակաբաման և պարբռ- ձագործական միխանիկականներ, փաս- կանագործություններ, մարդաբանություններ, հանգարկ- մաններ, փայտու- թոք ծլքային, յեռու- ցումներ	մշակում ըլի մշակում	ցուցահանդես ներ	2	—
34. Հոռանքային սիստեմ	բանկվաճառքը բանկվաճառք	կահանութականներ, փաս- կանագործություններ, մարդաբանություններ, հանգարկ- մաններ, փայտու- թոք ծլքային, յեռու- ցումներ	—	—	—	—
35. Խոռոչն	—	—	—	—	—	—

1	2	3	4	5	6	7
36. Տեխնուրաքիմիան պլան- աշաներ	բանկվաճառքը	նորման	նորման	10	—	—
37. Սաստանակեր	»	հակաբանություններ	»	1	—	—
38. Գյուղական բանական ցեղական գործառնություններ	»	» կամ մշակում	»	—	—	—
39. Բանկվոր, հեռուստականներ	»	կահանութականներ	»	1	38 մ.	—
40. Տեխնուրաքանառ բանական գործառնություններ (հաստուկ պահանջանառ)	»	կահանութականներ	»	500	6	—
41. Ցեղական սեփական գործառնություններ	բանկվաճառքը	ցեղական դրագարսանի	»	1500	6	—
42. Տեխնուրաքան գործառնություններ ցեղական սեփական գործառնություններ, ուղա- ցիւսնաւթափական ցեղական գործառնություններ	»	հեռուստական ցեղական	»	»	20	—
43. Քրքի պլանականներ	»	»	»	»	»	—
44. Սարքավորումներ կորպակը առաջինաւայման աշխատա- տանը բանական ցեղական գործառնություններ	»	»	»	»	20	—

տեխպրոպն ստեղծվել ե Համ ԼկթեՄ Կոմիտեյի նախաձեռնությամբ, նրա կադրերն առաջ են քաշված կոմյերիտության կողմից, սակայն, գործարանի կոմյերիտական կազմակերպության առաջ դեռևս հսկայական աշխատանք կա յերիտասարդությանը տեխնիկայի համար պայքարի հանելու գործը կազմակերպելու բնագավառում: Մտցված առաջարկությունները մեթոդական բյուրոյում քննարկելուց հետո, այդպիսիները քննարկվում են արտադրական բրիգադներում և միայն դրանից հետո ի մի յեն գումարվում և հաստատվում գործարանի տեխնիկական խորհուրդի (տեխպրոպագանդի խորհուրդ), գործարանային կոմիտեյի և կուսկոմիտեյի կողմից: Պլանի կազմման այդպիսի սիստեմը շատ ժամանակ է խլում և պահանջում է մեծ կազմակերպչական աշխատանք, սակայն դրանից չպետք է վախենալ, քանի վոր ստացված պլանը շատ ավելի կոնկրետ է լինում և մաքսիմալ չափերով պատասխանում և արտադրության խնդիրներին:

Յերկրորդ յեռամսյակի պլանի կազմման ժամանակ մենք արդեն ունեցել ենք փորձ, վորը ցույց տվեց, վորքանը բանակության մեջ չե, այլ այն կետերի կանոնավոր ընտրության մեջ, դեպի վորպիսիներն ուղղվում են տեխպրոպի գործողությունները: Նկարագրված կարգը մեջ համար յերաշխալվորում և ուժերի գործադրման կետերի ճիշտ ընտրություն:

Սշխատանքի ձեւերի ընտրության ժամանակ մենք հիմնվել ենք նախընթաց փորձի վրա և աշխատանքի այս կամ այն ձեւերի ընտրությունն արդեն կատարվել ե նախընթաց ամիսների ուսումնասիրության հիման վրա: Մտորե նշվելու յե աշխատանքի բազմազան ձեւերի գործադրման մեր փորձը և այն արդյունքը, վորը մենք ստացել ենք այդպիսիները գործադրելով զանազան պայմաններում և բազմապիսի պարագաներում:

Յեթե կանոնավոր կազմված պլանը հանդիսանում և աշխատանքի հաջողության հիմնական պայմանը, ապա

յերկրորդ պայմանը հանդիսանում է մարդկանց և ապարատի կազմակերպումն այդ պլանի կենսագործման համար: Տեխնիկական պրոպագանդի՝ սկզբից մինչև վերջը կոնկրետ պլանը միայն այն ժամանակ է կարող հաջողությամբ կինսագործվել, յեթե նրա համար պայմար մդեն տասնյակ և հարյուրավոր նարտարագետ տեխնիկական աշխատողներն ու բանվորները: Առանց լայն տեխնիկական ակտիվիտե, առանց իրենց իսկ բանվորներին տեխնիկական սլրոպագանդի՝ մեջ ներդրավելու, անհնարին և նրա քիչ թե շատ լայն և բավականաչափ արդյունավետ գրվածքը:

Բայց ակտիվը կազմակերպելու, մարդկանց կազմակերպելու, նրանց արվող ոժանդակությունը կազմակերպելու համար, նրանց նախաձեռնության ծավալմանն աջակցելու և վերջապես պլանի կատարման վրա հասարակական վերահսկողություն կազմակերպելու համար— անհրաժեշտ է իհարկե, լավ կազմակերպված ապարատ:

Մեր ապարատը 5 ամսվա ընթացքում յենթարկվել է մի քանի վերակառուցումների: Այդ վերակառուցումները շատ բնորոշ են, վորովհետև նրանք ըստ եյության հանդիսացել են ապարատի կազմակերպման ամենից ավելի ուսումնալ ձեւերի վորոնումներ գործարանի պայմաններում:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԱՊԱՐԱՏ

Գործարանում տեխնիկական պրոպագանդը կուսակցության կենտրոնի 1931 թ. ոգոստոսի 5-ի վորոշման համաձայն՝ ղեկավարում է դիրեկտորի՝ արտադրական խորհրդակցությունների գծով աշխատող ողնականը: Նա ունենում է ապարատ՝ կազմված հետեւյալ աշխատողներից՝ տեխպրոպի պետ, խմբակային և կոնսուլտացիոն աշխատանքի հրահանգիչ, լեկցիոն-եքսկուրսիոն աշխատանքի հրահանգիչ, մամուլի հրահանգիչ, ցուցաշխատանքի հրահանգիչ: Բացի այդ,

տեխսպրոպի հաստիքի մեջ ե մտնում կենտրոնական տեխնիկական գրադարանը, արտադրական-տեխնիկական կաբինետը, ռադիոկայանը, Փոտո-լաբորատորիան և առարկայական ձեռնարկների վոչ մեծ արհեստանոցը։ Այդ բոլոր կազմակերպություններում աշխատում են հաստիքային-աշխատողներ, վորոնց թիվը մեր բազմազար գործարանում հասնում է 7 հոգու։ Գործարանում տեխսպրոպագանդի ընդհանուր ղեկավարությունը կենսագործվում է տեխսպրոպի խորհրդի միջոցով, վորի նախադահը հանդիսանում է գործարանի ղեկավարը։

Խորհրդի կազմի մեջ մտնում են ցեխերի ներկայաց-  
ցուցիչները (ցեխերի պետերը, լավագույն բրիգադիր-  
ները, արտադրական սեկտորների նախագահները և  
այլն), հասարակական կազմակերպությունների ներկա-  
յացուցիչները, այն ե՝ գործարանային կոմիտեյի, կոո-  
սակցական կոմիտեյի, կամյերիտական կոմիտեյի, ա-  
կումբի, ՊԱ.Ձ.Ա.Վիճակիմի, ՃՏԱ-ի բյուրոյի և այլնի  
ներկայացուցիչները, զանազան տեխնիկական բաժին-  
ների՝ ուսցիոնալացման, պլանային-արտադրական,  
տեխնիկական պրոցեսի սահմանման բյուրոյի և այլնի  
ներկայացուցիչները։ Խորհրդի մեջ մտնում են նաև  
ՖԶՍ-ի, ՖԶՈՒ-ի գպրոցի ուսումնական կոմբինատի-  
ներկայացուցիչները և դրանց հետ կապված կազմա-  
կերպությունների ներկայացուցիչները, վորոնք մեզ ող-  
նում են աշխատանքի ընթացքում (գիտա-հետազոտա-  
կան ինստիտուտներ, ԲՈՒՀ-եր)։ Խորհուրդը բաղկացած  
է 7 հոգուց։ Նա հավաքվում է վոչ հաճախ քան յերկու  
անգամ յեռամսյակի ընթացքում և իր նիստերում քննում  
է տեխնպոպագանդի, ամբողջությամբ առած, դրու-  
թյունը և առանձին ցեխերի հաշվետվությունները, հաս-  
տատում է պլանները, նախահաշվինները, քննում է հատ-  
կապես կարևոր հարցերը, որինակ՝ գործարանի տեխ-  
պայմանի կազմումը և այլն։

Ընթացիկ մեթոդական աշխատանքը ղեկավարում է մեթոդական բյուրոն, վորն աշխատում է անմիջապես

գործարանի տեխնպոպին կից։ Մեթոդական բյուրոյի կազմի մեջ մտնում են առանձին խմբակների ղեկավարները, ճարտարագետ-տեխնիկական ակտիվի, ուսումնական կոմիտենատի, տեխնպոպի ներկայացուցիչները և մի շարք ցեխային աշխատողներ, վորոնք ակտիվ աշխատանք են կատարում տեխնիկական պրոպագանդի բնագավառում։ Բացի մեթոդական բյուրոյի մշտական անդամներից մեթոդ-բյուրոյի նխատերին հրամիլիրվում են նաև ուրիշ ընկերներ, վորոնք կարող են ողտակար լինել առանձին հարցերի քննարկման ժամանակ։ Մեթոդ բյուրոն բաժանվում է յերկու սեկցիայի՝ ծրագրա-մեթոդական աշխատանքի սեկցիա և մասսայական աշխատանքի սեկցիա։ Այդ յերկու սեկցիաները նախապահուառապում են ներկայացնուամ են մեթոդբյուրոյին ի հաստատություն՝ պլաններ, աշխատանքի ծրագրեր, հաշվետվություններ աշխատանքի դրության մասին, հետապոտություններ և զանազան տեսակի ղեկավար փաստաթղթեր։ Մեկթողբյուրոյի պլենումը հրամիլրվում ե ամսական յերկու-յերեք անդամ, նայած պահանջին։ Սկզբում մեթոդբյուրոն հավաքվում եր յուրաքանչյուր 5 որը մեկ անդամ։ Դա մի շրջան եր, յերբ մենք գեռես չունենք վոչ խմբակների ծրագրեր, վոչ դասախոսական-եքսկուրսիոնն և այլ աշխատանքի պլաններ։ Մեթոդ-բյուրոն հավաքվում ե կանոնավոր կերպով։ Նրա հաճախումը լավ է, և մեթոդբյուրոյի անդամները մեծ հետատաքարություն են հայտաբերում դեպի բյուրոյի աշխատանքը։

Սակայն տեխնոլոգի ապարատն ի վիճակի չե ամբողջ աշխատանքը կազմակերպելու սոսկ միայն հաստիքային աշխատողների միջոցով։ Ուստի և ապարատի մեջ մտնում են մի շարք սեկտորներ, վորոնց գլխավորում են հասարակական կարգով աշխատող ընկերութ։ Այդպիսի սեկտորներ են՝ խոտանի դեմ պայքարող սեկտորը, համագործարանային՝ «Զավողսկայա Պրավդա» լրագրի բաղկացուցիչ մասը հանդիսացող տեխնիկական եջի

խմբկոլեգիան, ցուցահանդեսների համար նյութեր պատրաստող սեկտորը, Փոտո և այլն։ Այդ սեկտորները կարող են ստեղծվել վորքան ուղես, նրանց կարիքն առաջանալու դեպքում։ Դրանք մի ինչ փոր մշտական բան չեն, այլ ստեղծվում և վերացվում են նայած ժամանակի տվյալ հատվածում ծագած այս կամ այն հարցերին։ Այդպիսի սեկտորներն ըստ եյության հանդիսանում են մեթոդական բյուրոների բաղկացուցիչ մասերը, ունենալով միայն այն առանձնահատկությունը, վոր, բացի մեթոդական աշխատանքից, նրանք ողնում են նաև կազմակերպչական կարգի աշխատանք տանելու գործին։

Այդպիսով տեխնոլոգին իր աշխատանքը կատարելիս հենվում ե հասարակական ակտիվի վրա, վորը հանդիսանում ե հիմնական ուժը։ Հասարակական ակտիվի կազմակերպումը կատարվում ե հասարակական կազմակերպությունների միջոցով և հիմնականում ձՏԱ սեկցիաների և տեխնիկայի տիրապետման ընկերության միջոցով։ Խմբակների ղեկավարները, ծրագրերի կազմողները, ստորին ողակների կազմակերպիչները, խորհրդատունները, սցենարիաներ կազմողները և այլն և այլն ճարտարագետներ, տեխնիկներ, վարպետներ ու բանվորներ են վորոնք այդ աշխատանքը հիմնականում կատարում են հասարակական կարգով։ Հասարակական ակտիվին ներդրավելու նպատակով տեխնոլոգը ձՏԱ-ի բյուրոյի հետ միասին լայնորեն գործադրում ե խրախուսումների սիստեմը (կարմիր տախտակ, պարզեատրումներ, խոկ յերբեմն նաև մասնակի դրամական հատուցում)։

Մասնակի դրամական հատուցումը մենք գործադրում ենք այն ղետքերում, յերբ կարիք ե լինում միենույն ընկերոջ հանձնարարել մի շարք զուգահեռական աշխատանքների կատարում (դասախոսություններ, կոնսուլտացիաներ, խմբակների ղեկավարություն, նյութերի մշակում և այլն)։ Մեծ բեռնվածության պայմաններում՝ մասնավանդ ճարտարագետ-տեխնիկա-

կան կազմի՝ կոմպենսացիան միանգամայն անհրաժեշտ է։

Գործարանավարչությանը կից ապարատ կազմակերպելն այնքան ել դժվար խնդիր չե։ Ավելի դժվար ե տեխնիկական պրոպագանդի հստակ ապարատի կազմակերպումը ցեխում։ Գործարանի ցեխերում տեխնիկական պրապարանդի դրվածքի և նրա կազմակերպման համար պատասխանատու յեն ցեխերի պետերի՝ արտադրական խորհրդական խորհրդակցությունների գծով աշխատող ոգնականները (արտադրական սեկտորների նախագահահները), վորոնց ղեկավարում և դիրեկտորի՝ արտադրական խորհրդակցությունների գծով աշխատող ոգնականը։ Մեզ մոտ ցեխերում արտադրական սեկտորներին ոգնելու համար առանձնացված են ցեխային տեխպրոպներ։ Նրանք անմիջապես յենթարկվում են արտադրական սեկտորների նախագահահներին և կազմակերպական աշխատանք են տանում տեխնոլոգականուի բնագավառում։

ՀՐԱՀԱՆԴ ԳՈՐԾԱՐԱՆԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ, ՆՇԱՆԱԿՎԱԾ ՑԵԽԱՅԻՆ ՏԵԽՊՐՈՊԻՆ

I. Ցեխի պետի՝ արտադրական խորհրդակցությունների և տեխնիկական պրոպագանդի գծով աշխատող ոգնականին վորպես ոգնություն յուրաքանչյուր ցեխում և հերթափխության մեջ նշանակվում է տեղակալ տեխնիկական պրոպագանդի կազմակերպման համար (ցեխային տեխպրոպ)։

II. Պետի ոգնականի՝ արտադրական խորհրդակցությունների և տեխնոլոգական պրոպագանդի գծով տեղակալ նշանակելը (ցեխային տեխպրոպ) ընալ վոչ մի չափով լիակատար և միանձնյա պատասխանատվությունը չի վերացնում ցեխի պետի՝ արտադրական խորհրդակցությունների գծով աշխատող ոգնականի վրայից (արտադրական սեկտորի նախագահ) տեխնոլոգականուի դրվածքի համար։

III. Յեխային տեխալրոպի պարտականությունների մեջ մտնում ե՝

1. Տեխնիկայի տիրապետման խմբակներ կազմակերպելու աշխատանքը՝

ա) նոր խմբակների կազմակերպում.

բ) խմբակների պարագմունքների ապահովումը՝ խմբակների անդամների հաճախումով, նրանց հայտնելու միջոցով.

գ) ղեկավարների հաճախման ապահովումը և նոր ղեկավարների ընտրությունը.

դ) չենքով ապահովելը.

ե) ուսումնական ձեռնարկներով ապահովելը.

զ) հոկողություն հաշվառման վիճակի և խմբակների ծրագրի կատարման վրա:

2. Տեխնիկական զրույցների և դասախոսությունների կազմակերպում ցեխում:

3. Յեխային տեխնիկական եքսկուրսիաների կազմակերպում:

4. Յեխային տեխնիկական ցուցահանդեսների կազմակերպում:

5. Արտադրական-տեխնիկական խորհրդակցությունների կազմակերպում:

6. Տեխնիկական կոնսուլտացիաների կազմակերպում ցեխում:

7. Տեխնիկական հաղորդումների ռադիո-ունիտը-ժան կազմակերպում:

8. Տեխնիկական վիկտորինաների և տեխմարտերի կազմակերպում:

9. Պատի թերթում տեխանկյան կազմակերպում:

IV. Յեխային տեխալրոպն անմիջականորեն յենթարկվում է արտադրական սեկտորի նախադահին և աշխատում է լիակատար համաձայնությամբ՝ կուսրջիջի, տեխալրոպի, ՃՏԱ. բյուրոյի և կոմյերիտական բջիջի հետ, ցեխում կազմվող՝ տեխալրոպագանդի միասնական պլանի հիման վրա:

V. Յեխային տեխալրոպն իր շուրջը հավաքում է ակտիվ, վորը հավաքագրվում է տեխնիկայի տիրապետման ընկերության անդամներից (ՏՏՀ):

VI. Մեխանիկական, փականագործական, ատաղագործական պարագման և հավաքման ցեխերում ցեխային տեխալրոպներն որական յերկու ժամով աղատվում են արտադրական աշխատանքից:

VII. Յեխային տեխալրոպն անպայման ունենում է իր աշխատանքային որացուցային պլանը և տանում է ցեխի տեխալրոպագանդի հաշվառման որագիրը՝ այդպիսին լրացնելով ամեն որ:

VIII. Ցուրաքանչյուր յեռամսյակի աշխատանքի վերջում աշխատանքի լավագույն ցուցանիշներ տված տեխալրոպներն ստանում են պարզեատրություն 300 ուորլու սահմաններում:

IX. Յեխային տեխալրոպներն աղատվում են ամեն տեսակի ուրիշ հասարակական աշխատանքներից:

X. Յեխային տեխալրոպների նշանակում կատարում է ցեխի պետը, համաձայնեցնելով կուսրջիջի բյուրոյի և ցեխի ցեխկոմի հետ:

XI. Յեխային տեխալրոպին աշխատանքից հանելը կարող է կատարվել միայն ցեխի պետի կողմից՝ Համ. Կ(բ)Կ բջիջի բյուրոյի և ցեխկոմի հետ համաձայնեցնելուց հետո:

Ավիոֆիլմի անվան գործարանի դիրեկտոր  
(ստորագրություն)

Սակայն վոչ բոլոր ցեխերում են ցեխային տեխալրոպներն աղատվում որական 2 ժամով: Այդպիսի աղատումը տրվում է միայն մեծ, առաջատար ցեխերի ցեխային տեխալրոպներին, այն ցեխերի, վորոնք տվյալ ցեխային տեխալրոպներին, այն ցեխերի, վորոնք տվյալ տեսապում վճռական դեր ունեն ծրագրի կատարման գործում:

Տեխալրոպներով ցեխում չի սպառվում տեխնիկական պլանագանդը ղեկավարող կազմակերպությունների շանցը: Կուսակցական կոմիտեյին կից կա կուսկոմի

տեխաղոս, վորը կենսագործում են տեխնիկական պրո-  
պագանդի կուսակցական ղեկավարությունը: Ցեխնրում  
նույնպես կուսքիջներն առանձնացնում են տեխաղոս-  
ներ, վորոնք մտնում են բջիջի բյուրոյի կազմի մեջ:

Ցեխային տեխաղոսներն աղմինխստրատիվ գծով  
տանում են իրենց աշխատանքը՝ հենվելով հասարակա-  
կան կազմակերպությունների վրա, վորոնք են՝ տեխ-  
աղոպագանդի սեկտորը ՃՏԱ-ի բյուրոյին կից, կադ-  
րերի, կրթության և տեխաղոպագանդի սեկտորը կոմ-  
յերիտմիության բջիջներին կից, տեխնիկական պրոպա-  
գանդի սեկտորը ՊԱԶՀ-Ավիաքիմի բջիջներին կից  
(վորոնք ի դեպ նոր միայն կազմակերպվում են) և առա-  
ջին հերթին տեխնիկայի տիրապետուման ընկերության  
(ՏՏԸ) բջիջները:

Տեխնիկայի տիրապետուման ընկերությունը գործա-  
բանում կազմակերպված է վերջերս միայն և դեռևս լայ-  
նորեն չի ծավալել իր գործունեյությունը: Մակայն ար-  
դեն ընկերության գործունեյության առաջին շրջանում  
նա սկսում է իր ձեռքում կենտրոնացնել հասարակական  
նախաձեռնությունը և տեխնիկական պրոպագանդի հա-  
սարակական ակտիվիտին:

Վորպես որինակ կարող է ծառայել գործարանի մե-  
խանիկական ցեխը: Մեխանիկական ցեխը, վորն աշխա-  
տում է ամբողջ գործարանի պայմաններից տարբերվող  
սպայմաններում՝ քառարբիգագաղյին որացուցակ, աշ-  
խատանքի յերեք հերթափոխություն, բանվորների բա-  
ժանումը ցեխում 5 խմբերի և այլն, մինչև վերջին ժա-  
մանակներս տեխաղոսի համար հանդիսացել է խանդա-  
րիչ հանգամանք: Շատ յերկար ժամանակի ընթացքում  
մեզ վոչ մի կերպ չեր հաջողվում կարդի բերել աշխա-  
տանքի սիստեմը մեխանիկական ցեխում: Առանձին ցե-  
խային աշխատողներ ասում ենին, թե քառարբիգագաղյին  
որացուցակի դեպքում հնարավոր չել կազմակերպել տեխ-  
նիկայի տիրապետուման խմբակների քիչ թե շատ լուրջ  
ցանց: Այդ խոսակցություններն այժմ արմատապետ

վերացված են: Սկսած այն ժամանակից, յերբ մեխա-  
նիկական ցեխում կազմակերպվեց ՏՏ ընկերությունը  
և նշանակվեցին ցեխային տեխաղոսներ (նրանք նշա-  
նակված են բոլոր հերթափոխություններում և բոլոր  
խմբակներում), մեխանիկական ցեխում ստեղծված ե  
տեխնիկական ուսուցման կազմակերպված ցանց և այն-  
տեղ սկսվում է ծավալվել մասսայական աշխատանքը:

Մեր աշխատանքի առաջին կիսամյակի հաջողու-  
թյունները, վորոնք անդրադարձն արտադրական ծրա-  
դրի կատարման վրա և արտահայտվեցին խոտանի նվա-  
զումով առանձին ճակատամասերում, աշխատանքի ար-  
տադրողականության քարձրացումով բանվորների ա-  
ռանձին խմբերի մոտ, կոտրվածքների կրծապումով մի-  
քանի ազրեղատաներում և այլն— մեր գործարանի տեխ-  
աղոպագականության: Միանդա-  
մայն բնական է, վոր ոկզրնական ժամանակներում, յերբ  
մենք սկսում ենինք մեր մշխատանքները, դեպի մեզ վե-  
րաբերություն վոչ բավականաչափ վատահությամբ:

Այն հաջողությունները, վոր մենք ունենք մեր աշ-  
խատանքում, բացարձում են նրանով, վոր գործարանի  
կուսակցական, արհմիութենական և կոմյերիտական  
կազմակերպությունները կազմակերպվեցին տեխնիկական  
պրոպագանդի սիստեմատիկ ղեկավարություն. Հսկա-  
պայմանական ակտիվությունը կազմակերպությունը հա-  
յական դեր խաղաց նաև լիակատար և գործարան հա-  
մաձայնությունը տեխաղոսի և ՃՏԱ-ի բյուրոյի աշխա-  
տանքում:

ՏԵԽՈՐՈՊԱԳԱՆԴԻ ԲԱՆԱԿՈՐ ՅԵՎ. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ  
ԶԵՎԵՐԸ

Չեռնարկության մեջ աշխատող յուրաքանչյուրին  
հայտնի յե, թե ինչ բան է գործարանային որացուցը:  
Գործարանում ապրում և գործում են շատ հասարակա-  
կան կազմակերպություններ: Յուրաքանչյուր հասարա-  
կական կազմակերպություն գործարանային որում գրա-  
վում է իր տեղը և շատ դժվար և այդ որացուցում դանել  
ժամանակի աղատ հատվածներ: Գործարանն ապրում ե

իիակատար, լարմած կյանքով։ Հենց դրա համար ել, յերբ մենք գործ ենք ունենում ձեռնարկության պրակտիկայի մեջ մասսայական աշխատանքի զանազան ձևերն արմատացնելու հետ, միշտ կանդ ենք առնում այդ աշխատանքի համար ժամանակ գտնելու հարցի առաջ։ Ահա թե ինչու հայմի առնելով գործարանի կյանքի դասավորման բոլոր առանձնահատկությունները՝ մենք հատուկ ուղարկություն ենք դարձրել պրոպագանդի առարկայական ձևերին, վորոնք կարող են առանց բանվորից լրացուցիչ ժամանակ խելու, նրա՝ գործարանում դանված ժամանակաշրջանից դառնալ տեխնիկային տիրապետելու ազդու գործիք։

Մենք խոսում ենք տեխնիկական լուսանկարչության, տեխնիկական գրքի, տեխնիկական թուցիկի, տեխնիկական լրագրի, տեխնիկական ցուցահանդեսի, ռադիոյի և այլնի մասին։ Սակայն այդ չի նշանակում, վոր բանավոր ձևերին նվազ նշանակություն ունեն։ Նրանց թերապնահատումը նշանակում է տեխնլուպագանդի միջոցների շարքից համել մարդկանց հետ անմիջական հաղորդակցություն ունենալը։ Մենք բանավոր տեխնիկական պրոպագանդի այդպիսի ձևերի շարքն ենք դասում նախ և առաջ տեխնիկայի տիրապետման խմբակները, տեխնիկական դասախոսությունները, տեխնիկական եքսկուրսիաները և տեխնլուպագանդի փոքր ձևերը։

## ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

Ներկա մոմենտում գործարանում աշխատում են տեխնիկայի տիրապետման 42 խմբակ։ Ի՞նչ խմբակներ են դրանք, ի՞նչպես են աշխատում դրանք և ինչպի՞սին են նրանց գործունեյության արդյունքը։

Որինակի համար վերցնենք մամուլների ուսումնա-

սիրության խմբակը դրոշմագրման ցեխում։ Այդ խմբակը համախմբում է 20 բանվոր, մեծ մասամբ յերիտասարդ։ Խմբակը կանոնավոր կերպով պարապում է 10 որը մեկ անգամ։ Խմբակը հերթափոխային է, նրա պարապմունքները կառուցվում են հետեւյալ կերպ՝ պարապմունքները տեղի յեն ունենում կոտրվածքների պատճառով վերանորոգման արված մամուլների շուրջը, վորոնք արդեն քանդված են վերանորոգման ցեխի կողմից։ Խմբակի ղեկավարը բացատրում է կոտրվածքների պատճառը, ցուցադրում է դադդյանի կոտրված մասերը, պատմում է դագդյանի մասերի փոխվործողության մասին, միաժամանակ խմբակի անդամներին տալով մի ամբողջ շաբք տեսական գիտելիքներ մեխանիկայի և կինեմատիկայի վերաբերյալ։ Այն գեպքերում, յերբ այդպիսի պատկերավոր նյութ չի լինում, խմբակն ուսումնասիրում է դրոշմների կառուցվածքը և տիրապետում է զծանկարային գործին։ Խմբակը ղեկավարում է ցեխային վարպետը։ Խմբակն ունի իր կազմած և մեթոդյուրոյի մշակած ծրագիրը։ Այդ խմբակը հսկայական հաջողություն ունի։ Նրա հաջողությունների պատճառը կայանում է այն գիտելիքների կոնկրետության մեջ, վորպիսիները ձեռք են բերում խմբակի անդամները։ Այդ խմբակի աշխատանքի արդյունքներն անհապալ յերեան յեկան այն բանում, վոր դագդյանների կոտրվածքները նվազեցին, աշխատանքի արտադրողականությունն աճեց։ Դրոշմագրման ցեխում կա այդպիսի 4 խմբակ։

## ՊԱՐՍՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԴՐՈՇՄԱԴՐՄԱՆ ՑԵԽՆԵՐԻ ՏԵԽՆԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

Ա. Մամուլների տիպերը—4 ժամ։

1. Ֆրիկցիոն։
2. Ծունկավոր։
3. Եկոնցենտրիկային։
4. Կրկնակի գործողության, ձգող։
5. Թեք՝ դուրս մղիչներով։

6. Մամուլների կինեմատիկ սխեմաներ:

Բ. Զեռքի մամուլներ— 5 ժամ:

Յուրաքանչյուր տիպի մամուլների շուրջն անցկացնել պարագմունք հետևյալ թեմաներով՝

1. Մամուլի կառուցվածքը՝ առարկայական կերպով ծանոթացնելով քանդելու և հավաքելու հետ, բացատրելով յուրաքանչյուր մասը:

2. Մամուլի խնամքը, յուղելը, ստուգումը:

3. Մամուլի կարգավորումը՝ պահանջվող չափով բարձրացումով:

4. Մամուլի համար անհրաժեշտ գործիքները և ինչպես ոգտագործել այդպիսիները (բանալիներ, հեղուններ, փամփուշաներ, ճարմանդներ):

5. Մեխանիզմների կոտրվածքը—մաշումը, տեղեդնելը:

6. Մամուլների ավարիաները, նրանց նորոգման արժեքը:

Դ. Դրոշմներ— 9 ժամ.

1. Կոնտուրի և ծալուքների պարզեցրած կտրումը:

2. Կոնտուրի գործիքային կտրումը:

3. Կոնտուրի կտրումը ծակատման հետ միաժամանակ:

4. Զդողական:

5. Ծակատող:

Դրոշմների յուրաքանչյուր տիպի շուրջն անցկացնել պարագմունքներ, բացատրություններ տարրի հետևյալ թեմաների մասին՝

6. Այն նյութերը, վորոնցից պատրաստվում են դրոշմները, նրանց արժեքը:

7. Դրոշմների պատրաստումը, սառը և տաք մշակումը, կոփումը, պատրաստման ճշտությունը:

8. Դրոշմի տեղակայումը, դրոշմակի և մատրիցիայի ամրացումը:

9. Առաջին դետալի ստուգումը (վարպետ-կանոռով):

10. Վերջնական ստուգումը, դրոշմի տեղակայումը և դետալի պատրաստման ճշտությունը, խոտան, դրոշմի կոտրվելը:

Դ. Նյութի պատրաստումը և կտրումը—3 ժամ.

1. Մարկա:

2. Չափը՝ ըստ հաստության:

3. Նյութի արժեքը (պարզեատրում տնտեսման համար):

4. Նյութի կտրումը Փիզուրային դետալների:

Ե. Անվտանգության տեխնիկա—6 ժամ.

1. Մամուլների շրջափակումը:

2. Մամուլների յերկրուցումը:

3. Դետալների մատուցումը դրոշմակրման համար, ուղղումը, ծալումը, ծակումը.

4. Հատուկ հարմարանքներ ձեռների հեռացման համար:

5. Ավտոմատիկ մատուցում, այդպիսիների դորձագրումը մեր պայմաններում:

6. Ներքին կարգ ու կանոնները վորակես հիմնական պայման դժբախտ պատահարների առաջն պանելու համար:

Բնդամենը 27 ժամ. :

Մյուս խմբակը՝ գծանկարման ուսումնասիրության խմբակն ե վայսամշակման ցեխում։ Այստեղ պետք է ասել, վոր ընդհանրապես գծանկարային գրագիտությունը հիմնադրու տեղ ե հանդիսանում արտադրության մեջ։ Մի անգամ չե, վոր մենք արշավ ենք հայտարարել ընդհանուր անդրադիտության վերացման համար։ Ժամանակն ե արշավ հայտարարել նաև գծանկարային անդրադիտության վերացման համար։

Խոտանի հսկայական քանակությունն ստացվում ե հենց այն պատճառով, վոր չեն կարողանում կանոնավոր կարգավ գծանկարները։ Մեղ մոտ գոյություն ունեցող

խմբակների մոտ 50 տոկոսն այդ պատճառով ել սովորում են գծանկարների ընթերցումը: Պետք ե ասել, վոր գծանկարների ընթերցման խմբակները կազմակերպվում են բանվորների իրենց իսկ կողմից մասսայական չափերով: Նկարագրենք գծանկարման խմբակի աշխատանքը:

Խմբակը չի զբաղվում գծանկարի ուսումնասիրությամբ ընդհանրապես: Նրա խնդիրն ե—բանվորներին ծանոթացնել գծանկարման հիմնական ձևերի հետ, նրանց սովորեցնել գլուխ հանել գծանկարներից և անձամբ կազմել ամենահասարակ գծանկարները: Խմբակն ուսումնասիրում ե այն կոնկրետ դետալների գծանկարները, վորոնց հետ բանվորը գործ ունի արտադրության մեջ ամեն որ: Այն հանդամանքը, վոր գծանկարային գրադիտության ուսուցման նյութը հանդիսանում են գծանկարները, վորոնց հետ բանվորները գործ են ունենում իրենց աշխատանքի ընթացքում, ապահովում ե խմբակների աշխատանքի հետաքրքրությունը և նրանց մեծ արտադրական եֆեկտը: Յեղել են դեպքեր, վոր բանվորները, վորոնք զանազան տեսակի դպրոցներում ուսումնասիրում ելին գծանկարումը, այդպիսիներից անցել են մեր խմբակները հենց այն պատճառով, վոր վերջիններում ծրագրերը յեղել են կոնկրետ:

Յերրորդ խմբակը Փրեզերային գործի ուսումնասիրման խմբակն ե մեխանիկական ցեխում: Նա բաղկացած է յերիտասարդ Փրեզերողներից, վորոնք չունեն վոչ բավականաչափ պրակտիկա, վոչ ել բավականաչափ գիտելիքներ իրենց գործում:

Այդ խմբակն իր աշխատանքը կառուցում ե հետևյալ սկզբունքով (նա զբաղվում է յուրաքանչյուր 5 որը մեկ անգամ): մեկ պարապմունք նվիրվում ե այն կոնկրետ արտադրական դժվարությունների վերլուծմանը, վորոնց հանդիպել են խմբակի անդամներն իրենց աշխատանքում: Հետեւյալ պարապմունքը նվիրվում է Փրեզերային գործի թեորետիկ տիրապետմանը: Այդպիսի հաջորդականությամբ ձեռք ե բերվում թե խմբակի

անդամների տեսական մակարդակի բարձրացում և թե դորձական սովորույթների յուրացում, ընդ վորում խմբակի ծրագրերը կազմված ե այնպես, վորպեսզի ապահովված լինի նրա տեսական մասի մաքսիմալ արտադրողականությունը: Ծրագրից գուրս են հանված այն տեսական հարցերը, վորոնց վրա կարելի յե կանգ չառնել, առանց վորեկե վնաս կրելու:

Յերրորդ խմբակը պարզվում է, վոր տեխնիկայի տիրապետման խմբակն ամենից առաջ իր բովանդակությամբ պետք ե լինի մաքսիմալ չափով կոնկրետ և վոչ միայն կոնկրետ, այլև մաքսիմալ չափով արտադրական: Այնուհետև նա պետք ե կազմակերպված լինի այնպիսի բանվորներից, վորոնք իսկապես կարիք ունեն ավագանություն: Խմբակի կազմը պետք ե մեծապես միատեսակ լինի: Խմբակի զեկավարը պետք ե ինքն արտադրության մեջ աշխատող լինի և միաժամանակ պետք ե ունենա գիտելիքների համապատասխան մակարդակ: Խմբակի աշխատանքի տեղականությունը պետք է, ինի կարծ—30—40 ժամ: Սրանք են այն հիմնական պահանջները, վորպիսները մենք պետք ե առաջարկենք տեխնիկայի տիրապետման խմբակներին:

Խմբակի աշխատանքը մեծ չափով վորոշվում ե նրա ծրագրով: Վոչ մի դեպքում չի կարելի թույլատրել խմբակների կազմակերպում՝ առանց հստակ մշակված ծրագրի առկայության: Խմբակի ծրագրում պետք ե ձգրիտ նշված լինի նրա աշխատանքի բովանդակությունը, այն հարցերի ծավալը, վորոնք պետք ե մշակվեն և այն հիմնական մեթոդներն ու նյութերը, վորոնց վրա խմբակն աշխատելու յե: Վորպես կանոն, ծրագրերը կազմվում են խմբակի ղեկավարի կողմից՝ խմբակի անդամների պահանջներն ուսումնասիրելու հիմն վրա: Ղեկավարը միշտ ընտրվում է տվյալ ցեխի աշխատողներից կամ մեր գործարանի աշխատողներից և միայն ծայրահեղ ղեկավում են ղիմում կողմնակի ոգնության: Այդպիսի հաջորդական թելադրում ե նրանով, վոր մեր ղեկանգամանքը թելադրում է նրանով, վոր մեր ղեկա-

վարն ավելի լավ է խմանում մեր կոլեկտիվի պահանջները, նրա հետ գործ ունենալը հեշտ է և վերջապես նրա վրա կարելի յե դնել խմբակի աշխատանքի մի յերկրորդ խնդիր ևս, այն ե՝ անընդհատ կոնսուլտացիոն ողնության կազմակերպումը խմբակի անդամների համար պարապմունքներից դուրս, նրանց արտադրական աշխատանքի պրոցեսում։ Ղեկավարի անընդհատ կապի պահանումը խմբակի հետ չափազանց նպատակահարմար ե և հսկայական ողուտ ե տալիս։ Վորպես որինակ կարող են ծառայել մեր հնոցապանների խմբակները, վորոնք զգալի չափով բարձրացըել են կաթսայանոցի աշխատանքի արտադրողականությունը, յեռուցիչների խմբակները, վորոնք մեծապես նվազեցըել են խոսանը, մետաղների ջերմամշակման ռեժիմների ուսումնասիրության խմբակը, ավտոմատների կառուցվածքի ուսումնասիրության խմբակները։ Բացի ծրագրի կազմելուց, մեր մեթոդական աշխատանքի սիստեմի մեջ մըտնում ե նաև գրականության ընտրությունը, առարկայական ձեռնարկների ընտրությունը խմբակների համար և վերջապես ղեկավարների հետ տարբող աշխատանքը։ Ղեկավարների հետ տարբող աշխատանքը մենք կենսագործում ենք հատուկ արտադրական խորհրդակցությունների միջոցով, վորտեղ տեղի յե ունենում վորձի վոխանակություն, նրանց աշխատանքի գծով։

Սակայն, խմբակների աշխատանքի մեջ ամեն ինչ ել պատշաճ բարձրության վրա չի։ Լինում են պարապմունքների խախտումներ։ Այդ խախտումների պատճառները մեծ մասամբ կազմակերպչական են և վոչ թե մեթոդական։ Այդպիսիները պետք ե լավ հայտնի լինեն բոլոր նրանց, վորոնք աշխատում են տեխպրոպագանդի ձակատում։ Դրանց թվին են պատկանում՝ չենքերի բացակայությունը, խախտումներ հասարակական կազմակերպությունների վերաբերմունքի պատճառով, վորոնք

խմբակների պարապմունքների որերին կազմակերպում են մասսայական ժողովներ, ղեկավարների բացակայությունը, յերեկոյան և գիշերային հերթափոխություններում աշխատող բանվորներին հավաքելու դժվարությունները։

Այստեղ մենք հիշատակում ենք այն միջոցառումների մի մասը, վորոնք գործադրվում են նման կազմակերպչական թերությունների վերացման համար։

Տեխնիկական խմբակների աշխատանքի համար կուսակցական կոմիտեն հաստատել ե 5 կայուն որ՝ ամսվաբնթացքում, ընդ վորում նա բոլոր հասարակական կազմակերպություններին պարտավորեցրել ե այդ որերը չղբաղեցնել վորևե մասսայական ժողովների կամ խորհրդակության համար։ Փետք ե ասել, վոր լինում են դեպքեր, յերբ ցեխային կազմակերպությունները հաշվի չեն առնում կուսկոմի այդ վորոշումը, սակայն այդպիսի դեպքերը հիմա մասսայական բնույթ չեն կրում, ինչպես այդ որինակ անցյալ տարվա ղեկտեմբերին եր և դրանց դեմ կուսակցական կոմիտեն անողոք պայքար և մղում։

Խմբակների հաճախումն ուժեղագնելու համար մենք կազմակերպել ենք մի կողմից՝ պայմանագրերի կնքումը խմբակների և աղմինիստրացիայի միջև և մյուս կողմից, զանազան ցեխերի խմբակների միջև սոցմքման պայմանագրերի կնքումը։ Յեխի աղմինիստրացիայի և խմբակի միջև կնքված պայմանագրով խմբակների անդամները պարտավորվում են ճշտությամբ հաճախել պարապմունքներին, տանը մշակել տրված նյութերը և այլն։ Աղմինիստրացիան պարտավորվում ե խմբակի անդամների կողմից համապատասխան ստուգումները տալուց հետո նրանց փոխադրել ավելի բարձր կարգերը, վորպիսի հանդամանքը խմբակի անդամներին նյութապես խթանում ե տեխնիկային տիրապետելու։

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ԴՐՈՇՄԱԴՐՄԱՆ ՑԵԽԻ ԳԾԱՆԿԱՌՄԱՆ  
ՏԵԽՆԻԿԱՑԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՑԵՎ ԴՐՈՇՄԱԴՐՄԱՆ ՑԵԽԻ ՊԵՏԻ ՄԻՋԵՎ

Կասակցությունը բանվոր գասակարգի առաջ գրել  
ե տեխնիկային տիրապետելու խնդիրը: «Կերակուու-  
ման շրջանում տեխնիկան վորոշում ե ամեն ինչ» (Ստա-  
լին):

Գծանկարային տեխնիկային տիրապետելու հա-  
մար, խոտանի վերացման, պարապուրդներն ու սար-  
քավորման կոտրվածքները մինիմումի հասցնելու հա-  
մար, աշխատանքի արտադրողականությունը մաքսի-  
մումի հասցնելու համար կազմակերպվում ե գծանկար-  
ման տեխնիկային տիրապետելու խմբակ:

Խմբակայինների պարտավորությունները

Մենք, խմբակայիններա պարտավորվում ենք՝

1. Ճշտապահ, առանց բացթողումների հաճախել  
խմբակի բոլոր պարապմունքներին:

2. Լավագույն կերպով յուրացնել ծրագիրը, ուշա-  
դրությամբ մշտիկել զեկավարների տված առաջադր-  
բանները:

3. Խմբակում ստացած գիտելիքները գործադրել  
արտադրական աշխատանքի մեջ:

4. Աշխատել հարգածային կերպով, սոցմրցման  
մեջ մտնել տեխնիկային լավագույն կերպով տիրապե-  
տելու համար:

5. Տալ աշխատանքի արտադրողականության բարձ-  
րացում 5 տոկոսով և խոտանի իջեցում 0,2 տոկոսով:

Ցեխի պետի պարտավորությունները

Յես, ցեխի պետս պարտավորվում եմ՝

1. Այն բոլոր խմբակայիններին, վորոնք լիակա-  
տար կերպով կյուրացնեն ծրագիրը և կկատարեն իրենց  
պարտավորությունները, փոխադրել համապատասխան  
կարգերը, նրանց պարապատությունը վորակավորման  
Հանձաժողովում ստուգելուց հետո:

48

2. Պարզեատրել լավագույն խմբակայիններին:
3. Խմբակի ապահովել շենքով և ձեռնարկներով:
4. Արտադրությունը լիովին ապահովել գործիքնե-  
րով:

Խմբակի դեկանարի պարտավորությունները՝

Յես, խմբակի զեկավարս պարտավորվում եմ՝

1. Կանոնավոր կերպով զբաղվել խմբակի հետ, բաց  
չթողնելով պարապմունքները:

2. Զեռք առնել բոլոր միջոցները, վորագույնի խըմ-  
բակի ծրագիրը լավ մշակված լինի:

3. Խմբակայիններին ապահովել կոնսուլտացիանե-  
րով՝ նրանց արտադրական աշխատանքի պրոցեսում:

4. Պայմանագիրն ուժի մեջ ե մինչև 1932 թ. հու-  
լիսի 1-ը:

Ստորագրություններ

Ղեկավարների աշխատանքը խրախուսելու համար  
մեր կողմից կազմակերպված ե սոցմրցում զեկավարնե-  
րի միջև, նրանցից լավագույններին պարզեատրելու և  
վատերի վրա հասարակական ներգործություն անելու  
պայմանով: Այդպիսին են նախազգուշացման այն մի-  
ջոցները, վորոնք մենք գործադրում ենք աշխատանքի  
ընթացքում: Ի հարկե, աշխատանքն այնքան ել սա-  
հուն չի գնում, ինչպես այդ կարող ե թվական մար-  
դուն, վորն առաջին անդամ ե ծանոթանում տեխպրո-  
պագանդի հետ այս գրքով: Կան հակայական դժվարու-  
թյուններ և դրանք հաճախ ծագում են անսպասելի կեր-  
պով, սակայն խմբակների նկատմամբ՝ ոպերատիվ ճը-  
կուն աշխատանքի առկայության գեպքում, ներքեից  
մինչև վերև ամենորյա հոգտարություն ցուցաբերելու  
գեպքում, խմբակների աշխատանքի վիճակն տոկոսը  
շարունակ իջնում ե, և այստեղ մենք ունենք այնպիսի  
գրություն, յերբ տեխուսուցման յուրաքանչյուր որ 42  
խմբակներից վիժում ե վոչ ավելի քան 3-5 խմբակների

49

տշխատանքը : Իսկ աշխատանքի սկզբում յեղել են այն-պիսի որեւ, յերբ վիժել ե խմբակների աշխատանքը 60-70 տոկոսով :

Մենք արդեն խոսել ենք արտադրական այն արդյունքների մասին, վորոնք ստացվում են խմբակների աշխատանքի հետևանքով։ Զափազանց դժվար ե գնել խմբակի աշխատանքի արտադրական եֆեկտի լավ հաշվառումը, սակայն մենք մեր փորձի հիման վրա կարող ենք ասել, վոր չնորհիվ խմբակների աշխատանքի՝ կապակցված տեխնպրոպագանդի մի ամբողջ շարք ուրիշ միջոցառումների հետ, մենք ունենք խոտանի իջեցում ջերմարհեստանոցում, աշխատանքի արտադրողականության բարձրացում Փրեզերողների և արմատուրչիկների առանձին խմբակներում, բանվորների գծանկարային դրագիտության աճում, կոտրվածքների կրծատում դրոշմադրման ցեխում, կաթսայանոցի արտադրողականության աճում, յուղիչների աշխատանքի բարելավում վերանորոգման ցեխում, ելեկտրոմանտյորների աշխատանքի վորակի բարձրացում և այլն։

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱԾ

Բացի խմբակներից, աշխատանքի կարևորագույն  
ձև են հանդիսանում տեխնիկական կոնսուլտացիաները։  
Կոլլունտացիաներն այն առավելությունն ունեն, վոր-  
նաբանք հնարավորություն են տալիս առավելագույն չա-  
փով կոնկրետացնելու պրոպագանդի բովանդակու-  
թյունը, ըստ վորում կոնկրետացնելու հատկապես հենց  
իրենց բանվորների պահանջների համեմատ։ Թվում ե,  
թե կոնսուլտացիոն աշխատանքը պետք է լայն թափ-  
գտներ, սակայն հատկապես հենց կոնսուլտացիոն աշ-  
խատանքի կազմակերպման մեջ գտնվեցին առավելա-  
գույն քանակով դժվարություններ։ Ի հարկե, կոնսուլ-  
տացիոն աշխատանքը գործարանում ընթանում ե ան-  
ընդհատ, սակայն այդ աշխատանքը տեխնպաթի աշխա-

տանքը չէ: Բանվորներն ամբողջ ժամանակ դիմում են  
վարպետներին ու ճարտարագետներին իրենց աշխա-  
տանքի ընթացքում պարզաբանելու այս կամ այն հար-  
ցերը: Ամբակավարները իրենց խմբակի անդամներին  
հանդիպում են խմբակների մեծ մասում սիստեմատիկա-  
բարը: Նման տարերային կոնսուլտացիոն աշխատանքի  
նկատմամբ տեխնպրոցես կարող ե ազդեցություն ունե-  
նալ միայն վարպետների, վորակյալ բանվորների, ճար-  
տարագետների վրա այն տեսակետից, վոր նրանք ա-  
զելի գիտակցորեն վերաբերվեն դեպի բանվորների պա-  
հանջների բավարարումը: Նա կարող է նույնպես նրանց  
ոգնել, կազմակերպելով հատուկ կոնսուլտացիաներ,  
այսպես կոչվող՝ կոնսուլտացիաներ հրամանատարական  
կազմի համար:

Հունվար ամսին մենք մի փորձ արինք կազմակերպ պելու կոնսուլտացիոն աշխատանքի սիստեմ։ Սակայն մենք հենց միանդամ ից կանգ առանք կոնսուլտացիայի համար հատկացվող ժամանակի հարցի առաջ (նման ժամանակ չգտնվեց), կոնսուլտացիաների համար շենքի հարցի առաջ (շենքեր չկային), և այդ հանգամանքը ստիպեց նվազեցնել կոնսուլտացիաների քանակը։ Հունվար ամսին և վետրվարի առաջին կիսին մենք անցկացրինք ցեխերում ընդամենը 32 կոնսուլտացիա, ընդողիեւով 302 հոգի։ Բուն կոնսուլտացիաներն անցնում ենին չափազանց ակտիվ և անկասկած մեծ ողուտ տվին արտադրությանը։ Այսպես որինակ, արձանադրված են դեպքեր, յերբ կոնսուլտացիայի ընթացքում ընդունվում ենին ուացիոնալացման առաջարկներ, վարոնց արդյունքը յեղափ չպարի արհեստանոցում խոտանի հոկակայական ինեցումը։ Հավաքման ցեխում կոնսուլտացիայի ընթացքում վերանորոգված են և գործի յեն դըրված յերկու կարի մեքենա։

Սակայն մեղ չեր բավարարում այն հանգամանքը,  
վոր մենք չկարողացանք կոնսուլտացիոն աշխատանքը  
դնել սիստեմի ու պլանի ռելակերի վրա։ Մենք սկսեցինք  
գործադրել յերկու տիպի կոնսուլտացիաների կազմա-

կերպում .—մասսայական կոնսուլտացիաներ և անհատական կոնսուլտացիաներ՝ բարձր տեխնիկական կազմի համար : Ի հարկե , մասսայական կոնսուլտացիան ունի մի շարք պակասություններ՝ համեմատած խմբակային կամ անհատական կոնսուլտացիայի հետ , սակայն նա ունի այն առավելությունը , վոր մենք կարող ենք նրանով ընդգրկել մեծ քանակով կոնսուլտացիայի յենթարկվողների , ստեղծել փորձի փոխանակման կետ , կրծատել կոնսուլտացիաների քանակը և պլանավորել կոնսուլտացիաները ցեխի որագրացուցակում :

Մասսայական կոնսուլտացիան պահանջում է մանրազնին նախապատրաստություն : Գործարանում ընդունված է մասսայական կոնսուլտացիաների կազմակերպման հետեւյալ կարգը .—կոնսուլտացիայի որվա մասին Հայտարարվում է ցեխում մոտավորապես 10—12 որ առաջ : Հայտարարման ժամանակ մանրամասնորեն պարզաբանվում է տվյալ կոնսուլտացիայի խնդիրը և նշվում է մոտավորապես նրա թեմատիկ պլանը : Այնուհետև 10 որվա ընթացքում բրիգադներում հավաքվում են այն հարցերը , վոր ուղղվելու յեն կոնսուլտանտներին , ըստ վորում , յերբ հարցերը չափազանց կարեւոր են և շտապ պատասխան են պահանջում , այդ պատասխանները տրվում են մոտական 1—12 որվա ընթացքում , իսկ հարցերի հիմնական մասսան ընդունվում է տեխնոլոգում , բուն մասսայական կոնսուլտացիան անցկացնելուց մի քանի որ առաջ : Այնուհետև հարցերը բաժանվում են ըստ խմբերի , հարցերի յուրաքանչյուր խումբ ծանոթացման համար հանձնվում է համապատասխան կոնսուլտանտին և վերջապես՝ հենց կոնսուլտացիայի որը , վորպիսին վաղորոք ապահովված է նրանով , վոր այդ որը վորեւ այլ մասսայական ժողովներ չկան , միաժամանակ 5—6 կոնսուլտանտներ (նայած անհրաժեշտության) պատասխանում են բանվորների կողմից նրանց տրված հարցերին : Այդպիսի կոնսուլտացիաներում լինում են 100—200 հարց , նման կոնսուլտացիանե-

րին մասնակցում են 70—150 հոգի , տրված հարցերին պատասխաններ են տրվում վոչ միայն հատկապես դրա համար նշանակված որը , այլև մի քանի որվա ընթացքում՝ ճաշի ընդումներին (ընդհանրապես ճաշի ընդմիջումների ոգտագործումը չափազանց կարևոր պրոբլեմ է տեխնպրոպների աշխատանքներում) :

Տեխնիկական կոնսուլտացիաների մյուս ձեր , —անհատական կոնսուլտացիան բարձր տեխնիկական կազմի ու վորակյալ բանվորների համար , —անց ե կացվում կանոնավոր պլանով , վորը հայտարարվում է միանգամից մի ամբողջ յեռամսյակի համար : Այդ կոնսուլտացիաներն անց են կացվում արտադրական տեխնիկական կանոննետում : Վորպես կոնսուլտանտներ , հրավիրվում են բարձրորակ մասնագետներ , վոչ միայն մեր գործարաններից , այլև հրավիրվում են այլ ձեռնարկություններից : Եթե կամ գիտական-հետազոտական ինստիտուտներից : Այդպիսի կոնսուլտացիաների համար ուղարկվում են անհատական հրավիրատոմսեր գործարանի առանձին աշխատողներին : Յուրաքանչյուր կոնսուլտանտին վեց կազմակերպում է կոնսուլտացիա անել 2—6 հոգու : Յերկու ամսակիվում է կոնսուլտացիա անել 2—6 հոգու : Բերկու վայր ընթացքում մենք անց ենք կացը 50 այդպիսի կոնսուլտացիա , ընդգրկելով 210 հոգի , նույն այդ ժամանակամիջումներին : Յուրաքանչյուր կոնսուլտանտին վեց կազմակերպում անց ենք կացը 5 մասսայական կոնսուլտացիա , ընդգրկելով 500 հոգի :

Բացի վերևում նկարագրած ձևերից , մենք ներկայումս գործադրում ենք կոնսուլտացիոն աշխատանքի մի նոր տիպ ևս — կոնսուլտացիա փորձի փոխանակությամբ : Այդպիսի կոնսուլտացիայի որինակ կարող է ծառայել այն աշխատանքը , վոր կատարված է գործիքային տնտեսության պլանայնացման գծով :

Տեխնիկական պրոպագանդի պլանում առաջին կվարտալի համար գրանցված է՝ «կազմակերպել ողնություն գործիքային ցեխին՝ պլանայնացման գործում» : Այսպես պիտի ասել , վոր մեր գործարանում գործիքային անտեսության պլանայնացման նկատմամբ գործն այն բարեհաջող չէ : Պլանի այդ բաժինը իրագործ-

ված եր հետևյալ կարգով . Ծանր արդյունաբերության  
ժողկամատի Արդյունաբերության խստիտուտից հրա-  
վիրված ելին յերկու մասնավետ՝ պլանավորելու հա-  
մարդորդիքային ցեխերը : Այդ մասնագետները տառն  
որվա ընթացքում ուսումնասիրեցին պլանայնացման  
գործի դրումը մեր գործիքային տնտեսության մեջ :  
Այնուհետև մշակելով հավաքած նյութը, նրանք ման-  
րամասնորեն քննարկեցին այդ նյութը պլանային աշխա-  
տողների և գործիքային ցեխի ղեկավարության հետ :  
Այնուհետև կազմակերպված ե այդ ընկերների կոնսուլ-  
տացիան ցեխի համար : Ցեղ վերջապես՝ ամբողջ հա-  
վաքած նյութը վերլուծված ե արտադրական տեխնի-  
կական խորհրդակցության ժամանակ : Արտադրական  
տեխնիկական խորհրդակցությունը մտցրեց մի շարք  
եյական առաջարկներ, վորոնք վերակառուցում ելին  
գործիքային ցեխում պլանայնացման սխատեմը : Վերջա-  
պես՝ Արդյունաբերության խստիտուտի նույն այդ յեր-  
կու ընկերները յերկու շաբաթվա ընթացքում կոնսուլ-  
տացիոն ոգնության կարգով ոգնեցին ցեխի աշխատող-  
ներին վերակառուցելու պլանայնացման սխատեմը : Այդ  
աշխատանքը ցեխի կողմից չերմ համականք և արձա-  
գանգ գտավ : Դրա արդյունքն այնչափ դրական եր, վոր  
աշխատանքի այդ մեթոդը մենք փոխանցում ենք նաև  
մյուս ցեխերը, իսկ պլանայնացման հարցերը՝ մեխանի-  
կական ու փականագործային ցեխերը :

Կոնսուլտացիայի կազմակերպումը ցեխում վարում  
է ցեխային տեխպրոպը : Բանվորների կողմից պահանջ-  
ների լավագույն հաշվառման համար ցեխերի Տեխնի-  
կայի Տիրապետման Ընկերությունը բոլոր բրիգադնե-  
րում առանձնացնում է կոնսուլտացիայի լիազորներ :  
Լիազորների խնդիրն է հավաքել բանվորներից հարցե-  
րը : Կոնսուլտացիոն աշխատանքի ընդհանուր ղեկավա-  
րությունն իրագործում է տեխպրոպի հրահանդիչը, այն  
հրահանդիչը, վոր վարում է խմբակների և կոնսուլտա-  
ցիաների աշխատանքը : Կոնսուլտացիոն աշխատանքի  
կազմակերպիչների համար կազմված ե հատուկ հրա-  
հանդիչը:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԶԲՈՒՅՑՆԵՐ

Բանվոր տեխպրոպագանդի իր՝ նշանակությամբ  
կարեռ հաջորդ ձևերն են հանդիանում դասախոսու-  
թյուններն ու տեխնիկական գրայցները : Այդ ձևերը  
մենք սկսեցինք զարգացնել տեխպրոպագանդի կազմա-  
կերպման հենց սկզբից : Սակայն թե՛ դասախոսական աշ-  
կերպման և թե՛ զրույցները հինգ ամավա ընթացքում  
խատանքը և թե՛ զրույցները հինգ ամավա ընթացքում  
կերպեցին մի շարք կազմակերպչական ու մեթոդական վե-  
րակառուցումներ, վորպիսի վերակառուցումներն ան-  
հետաքրքիր չեն նշել :

Դասախոսությունների կազմակերպման ժամանակ  
մենք հենց սկզբից նկատի ունենինք այնպիսի թեմատի-  
կա, վորը տվյալ լսարանին իրազեկ գարձներ նեղ,  
կա, վորը տվյալ լսարանին իրազեկ գարձներ նեղ,  
կոնկրետ հարցի բովանդակության մասին : Դասախո-  
սությունները կառուցվում ելին, միշտ ել հաշվի առնե-  
լով վորոշ լսարան, թե՛ իր զարգացման մակարդակի և  
թե՛ կարեռքություն տեխնիկական այնպիսի հարցերի  
մասնագիտության վերաբերյալ, վորոնք յենթակա յեն  
մեր արտադրության սխատեմի մեջ արմատացման և  
ճշտման : Տեխնիկական դասախոսությունների ոգնու-  
թյամբ գործարանին առաջադրված ելին այնպիսի հար-  
ցեր, ինչպիսին են տեխնոլոգիական պրոցեսների ար-  
մատացումը՝ ձուլում ճնշման տակ, պլաստիկ զանդ-  
գածներ, ջերմացրած շտամպովիկա, ելեկտրոզոլում և  
այլն : Դասախոսությունների միջոցով մենք իրազեկ ե-  
լինք դարձնում մեր աշխատողների հիմնական մասսա-  
յին ամեն տեսակ այն նվաճումների մասին, վոր ձեռք  
են բերված մեր արտադրության տեխնիկայի բնագա-  
վառում, դասախոսությունների միջոցով մենք փոխան-  
ցում ելինք այլ գործարանների փորձը և ոտարերկյա-  
տեխնիկայի փորձը :

Հաջողությամբ չպահպեցին դասախոսություննե-  
րի միջոցով մշակելու այն կոնկրետ նեղ հարցերը, վոր-  
նկատի ելին ունեցված բանվորների փոքր խմբակի հա-  
մանգ:

ժար, որինակ, Փրեղերական գործը, փականագործական աշխատանքի զանազան ոպերացիաներ և այլն։ Այդ բացատրվում է նրանով, վոր հարկավոր եր գործարանում կարդալ հսկայական թվով այդպիսի դասախոսություններ՝ բավարարելու համար գործարանի բոլոր առջնակարգ պրոֆեսիաներից, սակայն այդ բանը մեզ չելին թույլ տալիս վո՛չ ժամանակը և վո՛չ ել չենքը։

Ներկա մեմենտում բյուրեղացված ե դասախոսական աշխատանքի յերկու ձև, —վերևում նկարադրված կարդի դասախոսություններ և նեղ կոնկրետ տեխնիկական զրույցներ, վոր մենք անց ենք կացնում ճաշերի ընդմիջումներին։

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՅՆԵՐ

Ճաշերի ընդմիջումների ժամանակ կեսժամյա տեխնիկական զրույցները մենք կառուցում ենք արտադրական նեղ հարցերի շուրջը։ որինակ, ինչպես ողտագործել չափական գործիքները, ճնշող—կտրող ոպերացիաները մետաղների փականագործային մշակման մեջ, ինչպես վարվել «դյուրալի» հետ, Փրեղերական հաստոցի խնամքի հիմնական կանոնները, ամենապարզ հանգույցների առանձին կառուցվածքի նկարադրությունը և այլն։

Տեխնիկական զրույցների առավելագույն արդյունավետության նպատակով տեխպրոպիկն կից կազմակերպված ե առարկայական ձեռնարկների բազա։ Բազայի մեջ են մտնում շարժական կինոն՝ իր բոլոր պատկանելիքներով՝ ծալովի եկրան, շենք մթնացնելու համար վարագույր, վորտեղ զրույցներ են տարվում, եպիդիոսկ, մողելներ, տեխնիկական պլակատներ, տեխնիկական լուսանկարներ, դիապոզիտիվներ և շարժական ցուցահանդեսներ։

Ընդունված ե տեխնիկական զրույցների կազմակերպման հետեւյալ կարգը։ — տեխնիկական զրույցից մի որ առաջ այն ցեխում, վորտեղ տարվելու յե զրույցը,

փակցվում է հայտարարություն, հայտարարություն ե արվում ռադիոյով։ Զրույցը սկսվելուց յերկու ժամ առաջ ցեխն են զալիս կինո-մեխանիկը և տեխնիկական զրույցների կազմակերպիչը, վորոնք ցեխային տեխնիկովի և ակտիվի հետ միատեղ սարքում են ապարատուրան, կախում են վարագույրները և անհրաժեշտ նախապատրաստություններ են տեսնում։ Ճաշվա ընդմիջման համար տրվող զանգից հետո՝ բանվորներին նորից են հաղորդում, թե ինչն է զրույցի թեման և ո՞վ ե անցկացնելու զրույցը, ինչպիսի առարկայական ձեռնարկումներով ե ուղեկցվելու զրույցը։ Զրույցները, վորպես կանոն, տեսում են վոչ ավելի քան կես ժամ։ Այդ զրույցներին հաճախում են 100—300 հոգի (նայած ցեխի ու շենքի մեծության)։ Սովորաբար զրույցից հեցին մեծության մի շարք հարցեր, վորոնց պատասխանները տրվում են հաջորդ որերին, գրավոր ձևով, յեթե դասախոսը ժամանակ չի ունեցել տեղն ու տեղը տալու այդ հարցերի պատասխանը։ Ապրիլ ամսին մենք ունեցել ենք 35 այդպիսի զրույցներ։

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեխնիկական դասախոսություններին, վոր անց են կացվում ամսական 5—6 անգամ, հավաքվում են սովորաբար 50—150 հոգի, ըստ վորում տեխնիկական դասախոսությունները աշխատանքի պրակտիկայում մի շարք հարցերի գծով վերածում են արտադրական-տեխնիկական խորհրդակցությունների։

Այն դեպքում, յերբ մեր առաջ խնդիր ե դրվում կազմակերպել տվյալ հարցի վերաբերյալ վոչ թե դասախոսություններ, այլ արտադրական տեխնիկական խորհրդակցություններ, նրա նախապատրաստության կառուցման համար ընդունվում է հետեւյալ կարգ։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասախոսությունը ներածական և հանդիսանում արտադրական տեխնիկական խորհրդակցության համար. վերջինս անց է կացվում դասախոսությունից մի քանի որ անց: Ըստ վորում դասախոսության և արտադրական տեխնիկական խորհրդակցության միջև յեղած ժամանակամիջոցն ուղարկությունը և առաջարկներ հավաքելու համար: Բուն արտադրական տեխնիկական խորհրդակցության աշխատանքին մասնակցում և դասախոսը և այստեղ արդեն քննարկվում են հավաքված առաջարկները: Այսպիսի յեղանակով մեղ մոտ անց է կացված խորհրդակցություն փայտնի ռացիոնալ մշակման հարցի վերաբերյալ, մեխանիկական ցեխի ներքին ուսուրանությունից մորիլիզացիայի վերաբերյալ և այլն: Մեծ և նման խորհրդակցությունների տնտեսական արդյունքը:

Լեզցիոն աշխատանքը կապված է տեխնիկական կոնֆերանսներ կազմակերպելու աշխատանքի հետ: Մենք արդեն ունենք տեխնիկական յերկու կոնֆերանսի անցկացման փորձ, ըստ վորում առաջին տեխնիկական կոնֆերանսը, վորը հրավիրված եր գործարանում տեխպրոպի կազմակերպման հենց սկզբից, ցուցադրական չի հանդիսանում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Առաջին կոնֆերանսում որակարգում դրված եյին յերկու հարց՝ գործարանում տեխնիկական պրոպագանդի ծավալման հարցը և գիտական-հետազոտական ինստիտուտի դերի հարցը գործարանի արտադրական կյանքում:

Առաջին հարցը մշակված եր բավականաչափ ընդհանուր կարգով: Պարզն ասած, նրա դրումը թելադրությունը եր՝ գործարանի ՃՏՄ ու բանվորների լայն մասնաների ուշադրությունը դեպի տեխնիկական պրոպագանդի հարցերը մորիլիզացիայի անհրաժեշտությամբ:

Իսկ յերկրորդ հարցը մշակված եր ավելի խորն ու բովանդակալից ձևով:

Տեխնիկական խորհրդակցության ժամանակ գետական-հետազոտական ինստիտուտի/և արտադրության փոխհարաբերությունների հարցը նախապատրաստոված եր նախորոք: Այդ նախապատրաստումը կատարված եր սեկցիոն աշխատանքի ձևով: Հատուկ ստեղծված սեկտարիան քննարկված եյին այն զեկուցողի թեզիսնեցիաներում քննարկված եր հետազոտական-ինստիտուտը, վոր առաջարկել եր հետազոտական-ինստիտուտը, հավաքված եյին ամեն տեսակ առաջարկներ և առարկություններ՝ թեզիսների վերաբերյալ և վաղությունը նախապատրաստված եյին բանավեճերում յելույթը ունեցողները, ըստ վորում վերջիններիս յելույթների թեզիսները քննարկված եյին սեկցիաներում կոնֆերանսից առաջ:

Յերկրորդ հարցի առթիվ կոնֆերանսում յելույթունեցան տասը հաետոր: Յելույթ ունեցողները մտցւենում եյին մի շարք ամենալուրջ առաջարկներ, վորպես սի առաջարկները մտան կոնֆերանսի բանաձիր մեջ և սի առաջարկները ընդունվեցին մեր Միավորության Տեխնիայնուհետև ընդունվեցին մեր Միավորության կոնֆերանսում, վորը տեկական Համամիութենական կոնֆերանսում, վորը տեկական կազմակերպությունների մեջ ու կես ամիս անց, գործարանային կոնֆերանսից հետո:

Մասնավորապես առաջին կոնֆերանսում ընդունված եյին վորոշումներ «Տեխնիկայի տիրապետման վաճ և յերկության կազմակերպման մասին» և գործարանի տեխնիկական պլանը կազմելու մասին:

Այս յերկու վորոշումն ել ներկայումս մենք իրադրել ենք:

Հետաքրքիր ե բուն կոնֆերանսի անցկացման մեթոդը: Մենք մեզ խնդիր առաջադրեցինք կոնֆերանսը կազմակերպել այնպես, վոր նրա մեջ շաղկապվեն ակադեմիկական մոմենտը, գրավչության մոմենտը (վոչ թե ընդհանրապես գրավչության, այլ այնպիսի գրավչության, վորը մասնակցողների համար:

ոդապետ լինի), վերջապես՝ որակարգի իրոք գործառար քննարկման մոմենտը: Առաջին տեխ-կոնֆերանսում մենք ուզեցինք խուսափել տրաֆարետից, այն ե' 1) զեկուցում, 2) զեղարվեստական մաս: Առաջարած խնդիրները լուծված եյին լիովին և վերին աստիճանի բավարար ձեռվ:

Կոնֆերանսի որակարգը բնութագրում և գործառնի առաջին տեխնիկական կոնֆերանսի կառուցման մեթոդը, ուստի և մենք բերում ենք այդ որակարգը լիովին:

1. Գործարանի կուսակցական կոմիտեյի ներածական խոսքը՝ տեխնիկայի տիրապետման համար մղվող պայքարի խնդիրների մասին.

2. Գործարանի տեխսպրոպի 15 ըոպե տեսող զեկուցումը՝ կատարած աշխատանքի և այդ աշխատանքի հետանկարների մասին:

3. Գործարանի վարժական կոմբինատի 15 ըոպե տեսող զեկուցումը՝ աշխատանքի դրության և այդ աշխատանքի խնդիրների մասին:

4. Յերկու լավագույն ցեխերի ուսպորտները՝ տեխսպրոպագանդի դրման մասին:

5. Լավագույն ցեխերի պարզեատրումը՝ տեխսպրոպի լավագույն կաղմակերպման համար:

### Հնդմիջում

#### Հնդմիջումից հետո

6. Պրոֆ. Ալեքսանդրովի զեկուցումը՝ մեր արտադրության զարգացման ուղիների մասին (զեկուցման հետ միաժամանակ ցուցադրվում եյին դիալոգիովիշներ):

Բանավեներ զեկուցման առթիվ, վորոշման ընդունումն:

Այնուհետև ցուցադրվեցին մեր արտադրության վերաբերյալ խորհրդային և արտասահմանյան լավագույն կինո-ժապավեններ, և տեղի ունեցավ ընկերական ընթրիք:

Ի հարկե, կոնֆերանսն արտաքին կողմից ձևավորված եր պատշաճ կերպվ:

Կոնֆերանսի պատրաստության կարգով (կոնֆերանսը հրավիրելուց 10 որ առաջ) մասսայական քանակով բաժանված եյին զեկուցումների թեզիսները:

Յերկրորդ կոնֆերանսը զուտ տեխնիկական կոնֆերանս եր գործարար որակարգով, խնամքով մշակելով այդ որակարգը սեկցիաներում: Կոնֆերանսը նվիրված եր գործարանի մեծ վերակառուցման հարցերին:

Բուն կոնֆերանսից առաջ տեղի ունեցավ գործարանի մեծ վերակառուցման (ռեկոնստրուկցիայի) հարցի մշակումը զանազան սեկցիաների 12 խորհրդակցություններում, ըստ վորում սեկցիաներն առաջադրեցին մեծ վերակառուցման վերաբերյալ հիմնական զեկուցման առթիվ 17 հարակից զեկուցող: Կոնֆերանսը տեսայի յերեկո: Բացի հիմնական զեկուցումից և 17 հայցի յերեկո: Բացի հիմնական զեկուցումից և 17 հայցից զեկուցումներից, բանավեճերին մասնակցեցին մոտ 50 հոգի: Աշխատանքների ընթացքում ստացվեց մոտ 100 առաջարկ, վորոնց մեծամասնությունն ընդունվեց, վորպես հիմք, կոնֆերանսի բանաձեռի համար: Կոնֆերանսի վորոշումները հանձնվեցին համապատասխան այն կազմակերպություններին, վորոնք աշխատում եյին գործարանի վերակառուցման գծով:

Լեկցիոն աշխատանքի, արտադրական-տեխնիկական խորհրդակցությունների ու կոնֆերանսների փորձը մեղ այն մասին, վոր վոչ մի դեպքում վկայում է մեղ այն մասին, վոր վոչ մի դեպքում չի կարելի ի չարը գործադրել կոնֆերանսները, վորպես տեխնիկական պրոպագանդի ձև: Պետք չե հաճախակի հրավիրել տեխնիկական կոնֆերանսներ: Տեխնիկական կոնֆերանսները պետք ե հրավիրվեն բացառապես արտադրության կարևորագույն վիճական սկզբունքային հարցերի առթիվ, ըստ վորում նրանց պատրաստության վորակից, վորոշումների իրացման աշխատանքների վորակից և կախված նրանց հաջողությունը: Միայն տեխնիկական կոնֆերանսների խնամքով ու մանրամասնորեն մտածված պատրաստությունը

ատեղծում և նրանց համար հեղինակություն և նպատակահարմար ե գարձնում այդ կոնֆերանսներն արտադրության համար:

Ավելի մանր կարգի հարցերը հարկավոր ե լուծել արտադրական տեխնիկական խորհրդակցություններում, իսկ փորձի փոխանակությունն ու նոր հարցեր գնելը հարկավոր ե պլանայնացնել դասախոսություններ կազմակերպելու միջոցով:

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԲՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Արտադրական տեխնիկական փորձի փոխանակման և տեխնիկայի տիրապետման չափազանց կարևոր ձևերի թվին են պատկանում տեխնիկական եքսկուրսիաները, վորոնք հենց սկզբից մեղանում տարածվեցին լայն չափով: Տեխնիկական եքսկուրսիաների հիմնական թերությունը նրանց մեթոդական անպլանացնությունն է:

Եքսկուրսիաները մենք կառուցում ենք հետեյալ պլանով (պլանը մշակել ե մեթոդական բյուրոն):

1. Եքսկուրսիաներ մեր գործարանի ներսում, նպատակ ունենալով ծանոթացնել բանվորներին մեր արտադրության ամբողջ կոմպլեքսի հետ, իսկ վոր գլխավորն ե՝ ցույց տալ այն դետալների ուղիները, վորոնց վրա աշխատում ե տվյալ արտադրողը:

Դեռ մոտավորապես մի տարի առաջ գործարանի ակումբում կազմակերպվեցին «բանվորական հնարամտության» յերեկոներ, վորտեղ տրված առաջարկների թվում առաջարկներ կային բանվորների եքսկուրսիաներ կազմակերպել մեր գործարանում: Այդ պատճառաբանվում եր նրանով, վոր բանվորը ճշտորեն իրեն չի պատկերացնում այն դետալների նշանակությունը, վորոնց վրա նա աշխատում ե, հետեւապես նա չի պատկերացնում այն պահանջների կարևորությունը, վոր առաջարկում են տվյալ դետալին: Ըստ ելության այդ առաջարկի առթիվ ժողով չափազանց հեղինակավոր նախագահությունը հայտարարեց, վոր այդ առաջար-

կը սակայ կարեւոր առաջարկ ե, վոր նրա իրազործումը կարելի յե հանձնել ակմբին, բայց ամենենին չի կարելի վորակել, վորպես արտադրության համար եցական առաջարկ: Յեվ ահա այժմ, յեր անցել ե այդ առաջարկից մի տարի, մենք տեխնիկապես փորձով համոզվեցինք, վոր չափազանց նպատակահարմար են եքսկուրսիաներն արտադրության մեջ: Գործարանում ցուցաբերվեց հըսարտադրություն գեղագիտական գործարանում կազմակերպվելու հայական հետաքրքրություն գեղագիտական գործարանում կառուցվում են հետեյալ կարգով:

1. Եքսկուրսիաներ դեպի վերջնական (հավաքման) ցեխը.

2. Եքսկուրսիաներ տեխնոլոգիական պրոցեսի առթիվ.

3. Եքսկուրսիաներ դեպի գործարանային լաբորատորիաները:

Ներկա մոմենտին գործարանում կատարած տեխնիկական եքսկուրսիաներին արգեն մասնակցել ե ամբողջ բանվորական կոլեկտիվի 80 առկոսը: Սակայն մենք հետազում մտադիր ենք չգաղտարեցնել աշխատանքի այդ տեսակը. մենք խնդիր ունենք խորացնել գործարանում կատարվող եքսկուրսիաների բովանդագությունը և առավելացնել չափով կոնկրետացնել դաշտային նպատակածդտում:

Եքսկուրսիաները դեպի հարանման ձեռնարկությունները, հարանման արտադրություններն անցնում են վոչ պակաս հաջողությամբ, քան գործարանում կատարվող եքսկուրսիաները: Այս եքսկուրսիաների հիմնական թերությունն այն ե, վոր վորոշ չափով մակերեսային ուսումնական են սահում եքսկուրսիոն նյութից: Այդ տեղի յե ունենում այն պատճառով, վոր եքսկուրսիաների կազմակերպելու բավականաչափ մեթոդական ձևով չեն նախապարագատում և բավականաչափ չեն մշակում այդ եքսկուրսիաների պլանները: Բայց այդ թերությունը կարելի յե վերացնել միայն ստեղծելով համապատասխան եքսկուրսիոն կազմակերպություն, վորը

ինամքով կմշակի արդյունաբերության տվյալ ճյուղի  
եքսկուրսիաների մեթոդիկան:

Այստեղ պետք է ասել, վոր եքսկուրսիոն բյու-  
րոյի Փունկցիաները (անկախ նրանից, թե կըս-  
տեղծվի այդ բյուրոն ճյուղային միավորություն-  
ներում, թե գիտական-հետազոտական ինստի-  
տուտներին կից), պետք է իրենց մեջ ընդունեն նաև  
Եկցիոն աշխատանքը: Ներկայումս լեկցիոն աշխա-  
տանքի համար կադրեր գտնելը կապված է հսկայական  
դժվարությունների հետ:

Նախ՝ գործարանի համար չափազանց դժվար է ճանա-  
չել բոլոր այն մասնագետներին, վորոնք կարող են ողտա-  
գործել մեղ հետաքրքրող թեմաների մասին դասախոսու-  
թյուններ կարգալու համար:

Յերկրորդ՝ այդպիսի մասնագետների հետ հարկ է  
լինում համաձայնության դալ անհատական կարգով,  
վոր կապված է ժամանակի ավելորդ ծախքի հետ (մեկ-  
նումներ, հեռախոսով անվերջ դանդահարություններ և  
այլն):

Յերրորդ՝ միանդամայն բացակայում է մեթոդական  
աշխատանքը դասախոսների հետ, վորն անկասկած իջեց-  
նում է դասախոսությունների վորապերը:

Եքսկուրսիոն աշխատանքին բավականաչափ նման-  
վում են գործուղումները: Ինչպես կոնսուլտացիոն,  
այնպես և գործուղման հետևանքով վոչ միայն բարձրա-  
նում է եքսկուրսիաների վորապեր, այլև մի շարք առա-  
ջարկներ են ծագում, վոր այնուհետև արմատանում են  
արտադրության մեջ:

### ԳԻՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Հինգ ամսվա ընթացքում մենք կազմակերպել ենք Գ  
դիտական-տեխնիկական գործուղումներ: Գործուղման  
են ուղարկվել՝ ծարտարապետներ, վարպետներ, վորա-  
պելու բանվորներ, գյուտարարներ և ուցնալիզատոր-  
ներ: Հետաքրքիր գործուղում գուրս յեկավ իր արդյուն-  
քով թերմական արհետանոցի վարպետ ընկ. Աստախովի  
գործուղումը դեպի Տուլայի գործարանը: Գործարանի

թերմական արհետանոցը մինչև այժմ մի պատուհաս եր-  
մեր գործիքային տնտեսության համար: Վիթխարի յեր-  
այն խոտանքի քանակը, վոր գալիս եր թերմական մշա-  
կումից, և ահա ընկեր Աստախովի գործուղման հետեւան-  
քով մենք ներկայումս թերմական, տեխնոլոգիական  
սլրոցեսների մեջ մտցրել ենք մի շարք զողման ու այրման  
այնպիսի մեթոդներ, վորոնք գործիքների մի քանի տե-  
սակների նկատմամբ համարյա լիովին վերացնում են  
իյոտանքը:

Վոչ պակաս հետաքրքիր եյին գործիքային տնտե-  
սության վերաբերյալ գործուղումները դեպի Լենին-  
գրադ: Այս գործուղմների հետևանքով գործիքային ցեխը  
մտցրեց մի շարք նոր հարմարանքներ և մի շարք նոր փո-  
փոխություններ տեխնոլոգիական պլրոցեսների մեջ: Գոր-  
ուես կանոն, գործուղվողների հետ տեխպրոպը պայմա-  
նագիր է կնքում, վորով գործուղվողը պարտավորվում  
է մշակել գործուղման սլրոցեսում մի շարք վորոշակի  
հարցեր և այնուհետև տալ գործուղման արդյունքների  
վերաբերյալ գրավոր գեկուցմունքը՝ մեր արտադրու-  
թյան առթիվ առաջարկներով: Գործուղվողների ընտ-  
րությունը կատարում է գործարանի ՃՏՄ բյուրոն գոր-  
ծարանի վարչության տեխնիկական մասի հետ միատեղ:  
Գործուղվողների համար առաջադրությունները կազմում  
են ցեխի աղմինիստրացիան, ցեխի տեխնիկական աշխա-  
տողների հետ միասին: Այդ առաջադրությունները հաս-  
տատում են ՃՏՄ բյուրոն ու գործարանի տեխնիկական  
դիրեկտորը: Գործուղվողները, վորապես կանոն, պար-  
ապավոր են, բացի գրավոր գեկուցում ներկայացնելուց,  
հաշիվ տալու իրենց գործուղման մասին ցեխի ար-  
տադրական խորհրդակցության ժամանակ, գեկուցում  
անելու ռադիոյով և հողված տալու մեր գործարանային  
թերթին կից լույս տեխնող տեխնիկական եղին:

Շյժմ անցնենք տեխնիկական պլրոպադանդի առար-  
կայական ձևերին: Մեր գործարանի պրակտիկայում  
առաջին տեղն են բռնում տեխնիկական ֆոտոն ու տեխ-  
նիկական մամուլը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹՈՏՈՆ ՎՈՐՊԵՍ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ինչպես վերեւում ասված է, մենք աշխատանքի տն-  
յանք, յերբ մեր տրամադրության տակ չկար աշխատան-  
քը ծավալելու համար տեխնիկական վոչ մի բաղա։ Առա-  
ջին յերեք ամսվա ընթացքում մենք ստեղծեցինք տեխ-  
պրոպի Փոտո-լաբարատորիա։ Մեծ դժվարություններով՝  
մենք Փոտո-լաբարատորիայի համար շենք նվաճեցինք  
դործարանի ակմբից։ Լաբարատորիայի սարքավորումը  
տեխպրոպին նույն 8000 ոռորի։ Ապարատուրայի և  
համապատասխան հարմարանքների ձեռք բերելը կապ-  
ված եր անասելի դժարվությունների հետ։

Մատակարարման վոչ մի կազմակերպություն մինչեւ  
այժմ չի հետաքրքրվում տեխպրոպին՝ ապարատու-  
րա հայթայթելու գործով և այդ պատճառով ապարա-  
տուրան հարկ ե լինում գնելու մաս-մաս վոչ միայն  
Մոսկվայում, այլև Լենինգրադում։ Բայց վորում հար-  
մարանքների մեծ մասը տեխպրոպը պատրաստում է  
տնտեսական կարգով՝ հենց գործարանում։ Այստեղ չար-  
ժե նկարագրել այն չարաբաստիկ դրությունները, վոր  
մեզ վիճակիում ելին՝ գտնելու համար զանազան մանր  
մասեր, դիցուք հենց ջրմուղի համար յեռածունկեր։  
Մենք մեր Փոտո-լաբարատորիան կառուցեցինք այն հաշ-  
վով, վոր բաց թողնենք մասսայական արտադրանք։  
Հատկապես այդ պատճառով մեզ հարկավոր եր կատա-  
րելադրձված տպագրական հաստոցներ, բարձրորակ  
ուղղագրությունն սեղաններ, մեծացնող ապարատներ և  
այլն։

Փոտո-լաբարատորիան աշխատում է գործարանա-  
յին Փոտո հասարակությանը տեխ Փոտոյի աշխատանքին  
ներդրավելու հիման վրա։ Ներկայումս լաբարատո-  
րիային կից աշխատում են հինգ Փոտո թղթակցային  
բրիդադ 40 հոգու կազմով և կինո-կոլեկտիվ։ Այս ամբողջ  
տնտեսության զեկավարության և աշխատանքի կազմա-

կերպման համար մենք ստիպված յեղանք տեխպրոպի  
հաստիքի մեջ մտցնել Փոտո-լաբարատորիայի վարիչ։

Ներկայումս տեխպրոպի Փոտո-լաբարատորիայում  
կա հետեւյալ արտադրանքը։

Դիապոզիտիվներ «Ճուղում ճնշման տակ», «Պլաս-  
տիկ զանդվածներ», «Ինչպես ողտադրել չափական  
գործիքները», «մեքենաշինության նորություններ»։  
Բացի դիապոզիտիվներից լույս են ընծայված նույն այդ  
հարցերի վերաբերյալ Փոտո-նկարներ՝ քանակով 2000  
հատ։

Յուրաքանչյուր ցեխում պատրաստված են հատուկ  
տախտակներ, վորոնց վրա սիստեմաբար դրվում են  
տեխպրոպի լաբարատորիայի արտադրության սերիա-  
վոր Փոտոներ։

Մի քանի սերիաներ, ինչպես որինակ «չափական  
գործիքներից ողտադրելու» սերիան յենթադրվում է  
պատրաստուել ալբոմների ձեռվ և բաժանել բանվորներին,  
ըստ վորում բանվորներից վերցվում է փոքրիկ վճար  
այդպիսի ալբոմների համար՝ ալբոմի ինքնարժեքը ծած-  
կելու նպատակով։ Տեխ Փոտոյի այլրոմի ինքնարժեքը  
համեմատաբար մեծ չէ։

Տեխ Փոտոն տալիս է վորոշակի արտադրական ար-  
դյունք. այսպես որինակ, դործիքային պահեստարանի  
գծով մենք ներկայումս տեսնում ենք, վոր իջել է չափա-  
կան գործիքի խեղումը, փչացումը, վորը վորպես կա-  
նոն նկատվում եր առաջներում։

Մասսայական Փոտոն այնչափ մեծ հետաքրքություն  
ե առաջ բերել, վոր մենք ներկայումս ունենք վարպետ-  
ների և առանձին ՃՏՍ աշխատողների առաջարկներ՝ այս  
կամ այն սերիաները յերկրորդ հրատարակությամբ բաց  
թողնելու մասին։

Մասսայական սերիավոր տեխ Փոտոյի մշակման հա-  
մար ներդրավում են մասնագետների համապատասխան  
խմբակներ, վորոնք մեծ հոժարությամբ մասնակցում  
են այդ աշխատանքին։ Տեխ Փոտոյի լրացանկացում

պրոցեսները չափաղանց հետաքրքիր են և նպաստում են դրանց վրա աշխատողների վորակի բարձրացմանը:

Տես-Փոտոյի լուսանկարումն ինքը պահանջում է հատուկ այնպիսի մեթոդիկա, վորը դժբախտաբար մինչեվ այժմ դեռ մշակված չե: Ֆոտո-լաբարատորիայի աշխատանքի պրոցեսում տեխնոլոգիան արդեն իսկ ներկայումս հայտարերում է տեխնիկական լուսանկարման հիմնական մեթոդների մշակման ուղիները: Այսպես որինակ՝ մենք դտել ենք լուսանկարման նոր մեթոդներ:

Սակայն կա մի հանգամանք, վորին անխուսափելուորեն կհանդիպեն տեխնոլոգիաներն իրենց հատուկ Փոտո-լաբարատորիաները կազմակերպելու ժամանակի: Հենց վոր Փոտո-լաբարատորիան ստեղծվեց, անմիջապես նրա առթիվ ակնկալություններ ունեցան հսկայական թվով գործարանային հասարակական կազմակերպություններ: Ակսեցին պահանջել գործարանի հասարակական կյանքի դանաղան մոմենտների կենցաղային լուսանկարումներ: Այս բոլոր պատվերները ծանրաբեռնում են մինչև ներկա մոմենտը մեր Փոտո-լաբարատորիան և մեզանից հսկայական ժամանակ են խորհ, այդպիսով իսկ իջեցնելով նրա աշխատանքի արտադրողականությունն իր անմիջապես կոչման, այսինքն՝ տեխնիկայի համար պայքարելու տեսակետից:

Անհրաժեշտ է հասնել այնպիսի գրության, վոր գործարաններում հասարակական կազմակերպությունները լիովին յուրացնեն տեխնոլոգիան կից յեղած տեխնիկական ամեն տեսակ բաղաների (կինո բազա, ֆոտո լաբարատորիա, ռադիո-կայան և այլն) նշանակությունը. և ոգնեն այդ բազաներին ապահովելու նրանց աշխատանքի առավելագույն արտադրողականությունն իրենց անմիջապես կոչման վերաբերյալ՝ առանց ծանրաբեռնելու նրանց կենցաղային պատվերներով:

Տեխնիկական լուսանկարչության հետ սերտորեն կապված են տեխնիկական ցուցահանդեսները: Մեզանում բավականաչափ փորձ է կուտակվել տեխնիկական ցուցահանդեսների կազմակերպման գործում: Բնդամենը գոր-

ծարանում կազմակերպված է 13 տեխնիկական ցուցահանդես: Բայց վորում նրանցից մի չարք ցուցահանդեսներ արժանի յեն հատուկ ուշադրության:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Մենք այստեղ կնկարագրենք յերեք տիպի տեխնիկական ցուցահանդեսներ, ըստ վորում վերջին տիպը Երագործում ենք մենք միայն ներկայումս:

Առաջին ցուցահանդեսը, վոր մենք ստեղծեցինք, մետաղների սառն մշակման ցուցահանդեսն եր: Այդ ցուցահանդեսը մշակել եյին գործարանի լաբարատորիաները: Այս ցուցահանդեսում մենք ցույց ենք տալիս կտրելու թերթիայի հիմնական որենքները, հաստոցների կինեմատիկական, կտրող գործիքի ախպարը և զանազան դեպքերում նրա գործադրությունը: Ցուցահանդեսը բաղկացած է տեխնիկական 20 պլակատից, կտրիչների ցուցահանդեսից, հաստոցների կինեմատիկայի 10 այլ ցուցահանդեսից, բոմից և այն մետաղների տեսակների ցուցադրումից, բոմից և այն մեր գործարանում, միաժամանակ վոր գործադրությունը են մեր գործարանում, մեխանիկական համանանշելով նրանց հիմնական, մեխանիկական հատկությունները:

Մետաղների սառն մշակման ցուցահանդեսի հիմնական թերությունը բերած նյութի վորոշ բարդությունն է: Այդ ցուցահանդեսից ամենից նպատակահարմար է ոգտվել կունսուլտացիաների, զրույցների և խմբակների ոգտվել կունսուլտացիաների ժամանակ: Ինքնատինքյան ցուցահանդարապմունքների ժամանակ: Վիճակների մինչև վերջ այդ դեսը հարուստ նյութ է տալիս և սկզբից մինչև վերջ այդ դեսը կարուստ նյութ է տալիս և սկզբից մինչև վերջ այդ դեսը կարուստ նյութ է տալիս և սկզբից մինչև վերջ այդ դեսը կարուստ նյութ է տալիս և սկզբից մինչև վերջ այդ դեսը:

Տեխնիկական ցուցահանդեսների մյուս տեսակը, վոր արժանի յե մեծ ուշադրության, մեր գործարանում խոտանքի ցուցահանդեսն է: Պետք է սեղ, վոր խոտանքի ցուցահանդեսը նոր գործ չե, սովորաբար այդպիսի ցուցահանդեսները իրենցից ներկայացնում եյին մի հատուկ

տախտակ, վորի վրա ամրացվում են առանց վորեե սիստեմի մի քանի խոտանած դետալներ, կցելով նրանց կոնտրոլ-քննարկման բաժնի քարտերը, ըստ վորում այդ քարտերում չափաղանց ընդհանուր ձևով մատնանշվում են խոտանքի ձևական պատճառները։ Այդպիսի ցուցահանդեսում չի լինում վոչ մի ցուցում բանվորներին՝ տվայլ խոտանքի վերացման յեղանակների մասին։ Մենք հիմնովին վերաքննեցինք խոտանքի ցուցահանդեսների կազմակերպման մեթոդիկան։

Խոտանքի ցուցահանդեսը կազմակերպվում է հետեւյալ հիմունքներով.

1. Ցույց ե տրվում ճիշտ պատրաստված դետալ.
2. Ցույց ե տրվում խոտանված դետալ.
3. Ցույց ե տրվում ճշտորեն այն պատճառը, վորով առաջացել ե խոտանքը և այն կորուստի գումարը, վոր կրել ե գործարանը տվյալ խոտանքի պատճառով։
4. Տրվում են տեխնիկական ճիշտ կոնկրետ ցուցումներ, տվյալ դետալի մշակման մեթոդիկայի վերաբերյալ, վորպեսզի խոտանք թույլ չարվի։

Այս սկզբունքով ներկայումս կազմակերպված են խոտանքի ցուցահանդեսներ, գործարանի բոլոր հիմնական ցեխերում, ըստ վորում այդ ցուցահանդեսների նյութերը պարբերաբար փոխում են այն հատուկ խմբակները, վորոնք կցված են ցուցահանդեսների շուրջն աշխատանք կատարելու համար։ Խոտանքի ցուցահանդեսների համար հաստումները պատրաստել ե տեխսպուպը՝ կենտրոնացված կարգով յուրաքանչյուր ցեխի համար։

Խոտանքի ցուցահանդեսը հսկայական հետաքրքրություն ե առաջացրել բանվորների մեջ։ Հաճախակի կարելի յե դիտել, թե ինչպես ցեխերում դիսկուսիաներ են տարվում այդ ցուցահանդեսների շուրջը։

Խոտանքի ցեխային ցուցահանդեսների կազմակերպումը մենք անցկացրինք ցեխերի մրցակցության հիման վրա։

Տեխսպուպի տրամադրության տակ մենք ներկա-

յումս ունենք խոտանքի կենտրոնական շարժական ցաւցահանդես։ Խոտանքի կենտրոնական ցուցահանդեսը կազմակերպել ե խոտանքի դեմ պայքարող սեկտորը, վորը գոյություն ունի գործարանի տեխսպուպին կից, ըստ վորում այդ ցուցահանդեսի հիմքում դրված ե խոտանքի ցեխային ցուցահանդեսներից փոքր ինչ տարբերվող սկզբունք։ Խոտանած դետալները, վոր ցուցադրվում են խոտանքի կենտրոնական ցուցահանդեսում, մշակվում են հետեւյալ սիսեմայով։

1. Դետալի համարը։
2. Դետալի անունն ու նրա նշանակումը։
3. Գոյություն ունեցող տեխնոլոգիական պրոցեսը և լյալ դետալը պատրաստելու համար։
4. Խոտանքի բնութագիրը։
5. Խոտանքի պատճառների նկարագրությունը։
6. Խոտանքի վերացման ուղիները։
7. Տեխնոլոգիական պրոցեսի վերակառուցման առաջարկներ։

Խոտանքի կենտրոնական առաջին ցուցահանդեսի համար խոտանքի դեմ պայքարի սեկտորը մշակել ե բոլոր հիմնական ցեխերի վերաբերյալ 42 դետալ, ըստ վորում ընտրված եյին ամենից տիպիկ դետալները։ Մշակման հետեւանքով մտցված եյին ռացիոնալացման առաջարկներ, վորոնք գործարանին տալիս եյին մոտ 50.000 սուրլի խնայողություն։

Զափազանց հետաքրքրի ե այն կառուցվածքը, վորով գասավորված ե խոտանքի կենտրոնական ցուցահանդեսը։ Այդ արված ե վոչ միայն այն հաշվով, վոր տոավելագույն չահավետ ձևով ցույց տրի նյութը, այլև այն տեսակետից, վոր ցուցահանդեսը արագ և հարմար ձեռով տեղափոխվի մի ցեխից մյուս ցեխը (կոնստրուկտոր-նկարիչն ե՝ Գ.Ի. Լազրեվը)։

Պետք ե ասել, վոր մեզանում տակավին նոր գործ ե տեխնիկական ցուցահանդեսներ կազմակերպելը։ Յեվայտեղ թեկուզ հենց այդ ցուցահանդեսների արտաքին ձևագորման տեսակետից կան այնպիսի բազմաթիվ հար-

ցեր, վոր մենք դեռ պետք ե լուծենք: Վերցնենք, որինակ՝ հենց ցուցահանդեսի գունավորումը: Պետք ե գտնել հատկապես այնպիսի գույն, վորն ապահովի ցուցադրով նյութերի առավելագույն ուշյեփությունը: Իսկ տեխնիկական ցուցահանդեսի նյութերի մեծ մասը արտադրության դետալներ են: Յեվ այդ պատճառով, հատուկ մոտեցում են պահանջում իրենց դասավորման համար:

Տեխնիկական ցուցահանդեսի յերրորդ տիպը հանդիսանում են այսպես կոչվող ցեխային հանրային տեխնիկական ցուցահանդեսները: Նրանք հանրային են կոչվում նրա համար, վոր այդ ցուցահանդեսների կողմանուկցիաները, վոր պատրաստվում են յուրաքանչյուր ցեխի համար, մշտական ոգտագործման նպատակով նախատեսում են չորս բաժին:

1. Խոտանքի բաժին:
2. Տեխնիկայի նորության բաժին:
3. Տեխնիկական գրականության նորությունների բաժին:
4. Տեխնոլոգիական պրոցեսների բաժին:

Այս ցուցահանդեսներում նյութերը պետք ե փոխվեն պարբերաբար, ըստ վորում ցուցահանդեսի նյութերի մշակման համար կցված են ակտիվիտատների հատուկ խմբակներ, Տեխնիկայի տիքապետման ընկերության անդամներից, բանվորներից, վարպետներից, ճարտարապետներից: Խմբակների կողմից նյութերի առարկայական իրագործումը կատարում է առարկայական ձեռնարկների կենտրոնական արհետանոցը, վոր գոյություն ունի գործարանին-տեխնոլոգին կից, և վորը կազմակերպել ենք գարձյալ այս հինգ ամսվա ընթացքում:

Տեխնոլոգին կից առարկայական ձեռնարկների արհետանոց ստեղծելու պահանջը չափազանց հրատապ է: Վորչափ ավելի յե ծավալվում մեր աշխատանքը, այնչափ ավելի մեծ չափով մենք անհրաժեշտություն ենք զգում ունենալու ցուցահանդեսների համար, ստանդարտ տախատակներ՝ մոդելների, եկապողիցիաների, բաղմաթիվ նյութերի, պլակատների համար և այլն: Առարկա-

յական ձեռնարկների արհետանոցը, բացի ցուցահանդեսների համար տեխնիկական պլակատներից, արտադրել ե մի քանի մոդելներ: Մոդելները, վորպես կանոն, պատրաստվում են անմիջապես արհետանոցում՝ բանվորների և ճարտարապետական-տեխնիկական ակտիվի ձեռքով:

Մոդելների թվին են պատկանում զանազան տեսակ այն գյուտերի մոդելները, վոր մտցվում են մեր արտադրության մեջ և առաջարկված են մեր գործարանի բանվորների կողմից: Մոդելները, ինչպես և ցուցահանդեսները, պլակատներն ու լուսանկարներն, ողտագործվում են գառախոսությունների, զրույցների, խմբակների պարագաների և ցուցահանդեսների համար: Պետք է ասել, վոր տեխնիկական պրոպագանդի լավագույն առարկայական ձևը, ի հարկե, հանդիսանում է մոդելը: Սովորաբար յերբ զեկուցողը ճաշի ընդմիջումին գալիս է ցեխը, իր հետ բերելով մոդելը, նրա շուրջը խմբվում են մեծ քանակությամբ բանվորներ, վորոնք մեծ հետաքրքրությամբ քննում են մոդելը, քննարկում են նրա առավելությունը և հաճախ առաջարկներ են անում կատարելազործելու այդ մոդելը՝ վերացնելու համար նրա մեջ յեղած թերությունները: Մոդելներն առաջացնում են բանվորական առաջարկների հոսանք և գյուտարարական մտքի խթանման աղղակ են հանդիսանում: Ներկայումս մենք ստեղծել ենք սիրող-մոդելիստների խմբակ, այդ խմբակն աշխատանքի յե անցել և պատրաստում ե մի շարք նոր մոդելներ:

Ֆոտո-լաբարատորիան, առարկայական ձեռնարկների արհետանոցը, ֆոտո-խմբակները, մոդելի խմբակը աշխատում են սերտ կապ ունենալով միմյանց հետ և կապված են վոչ միայն ծրագրով այլև տերրիտորիալ իմաստով:

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մեր աշխատանքի սկզբին գործարանում գոյություն ուներ մի տեխնիկական գրադարան գործարանային վար-

Հության կից և մի գրադարան ակմբին կից, վորն իր մեջ պարունակում եր փոքր քանակով տեխնիկական գրականություն։ Տեխպրոսպը հենց միանգամից հարց գրեց գործարանի տեխնիկական գրադարանն իրեն հանձնելու մասին։ Սակայն այն անվտահության հետեանքով, վորն ոկքընական շրջանում ցույց եր արվում տեխնպրոպին, մենք հանդիպեցինք ուղողիցիայի՝ մի չարք ճարտարապետական-տեխնիկական աշխատողների կողմից։ Գործարանի վարչության տեխնիկական գրադարանը բաղկացած եր մոտավորապես հազար հատորից, վորի թվում կային մեծ թվով ոտարերկրյա գրականություն և ոտարերկրյա պարբերական մամուլի չափազանց արժեքավոր ֆոնդ։ Այդ տեխնիկական գրադարանն ուներ ընդամենը 100 ընթերցող՝ գլխավորապես ճարտարապետական-տեխնիկական աշխատողներից։ Գործարանային վարչության գրադարանը մասսայականացված չեր գործարանում, նրա գոյության մասին շատ քչերը գիտեյին և նրանով չեր հետաքրքրվում համարյա վոչ վոք, բացառությամբ մի խումբ ճարտարապետական-տեխնիկական աշխատողների։ Տեխպրոպն ակմբի հետ միատեղ, ակմբի դրականության ֆոնդերից, գործարանային վարչության և նոր ձեռք բերված գրականության ֆոնդերից կազմակերպեց կենտրոնական տեխնիկական գրադարան, վորն իր մեջ պարունակում ե 4000 հատոր և ցեխային տեխնիկական գրադարաններ 5000 հատորով։ Գործարանում տեխնիկական գրականության ֆոնդը հինգ ամսվանթացքում աճեց հինգ անգամ։ Տեխնիկական գրականության ընթերցողների քանակը տեխնիկական կենտրոնական գրադարանի գծով աճեց 5—6 անգամ։

Ընդամենն այդ ժամանակամիջոցում տեխնիկական գրականության համար մենք ծախսել ենք ավելի քան 7000 ռուբլի։ Գործարանում տեխնիկական գրքի շրջանառությունն աճեց 3 անգամ։ Այսպիսին են տեխնիկական գրքի հետ ունեցած մեր աշխատանքի քանակական ցուցանիշները։

Սակայն գրանով չի սպառվում այն աշխատանքը, վոր կատարված ե տեխնիկական գրքի գծով։ Տեխնիկական գրականության գրականության գծով մենք իրագործել ենք միասնական ճակատը, ակմբի գրադարանի հետ, և մեզ հաջողվեց ծավալել բավականաչափ լայն աշխատանք՝ տեխնիկական ինֆորմացիայի վերաբերյալ և արտասահմանյան տեխնիկական գրականության ոգտագործման վերաբերյալ։ Տեխնիկական գրքի հետ ունեցած ամբողջ մասսայական աշխատանքը, տեխնպրոպագանդի փոքր ձևերը (վիկտորինաներ, տեխնմարտեր և այլն), ինչպես նաև ցեխային գրադարանների հետ տարվող աշխատանքը կենտրոնական տեխնպրագարանն իրագործում է կուլտխորհրդի գրադարանի հիջոցով, ըստ վոլում այստեղ հարկավոր ենչել այն վիթխարի ակտիվությունը, վոր ցուցաբերել ե կուլտխորհրդի գրադարանը տեխնպրագի հետ կատարած աշխատանքի գործում։ Այն ժամանակ, յերբ գործարանային վարչության տեխնիկական գրադարանը չուներ վոչ միայն գրացուցակներ, այլև չուներ հատուկ հարմարեցված շենք և այստեղ աշխատում եր միայն մեկ գրադարանապետ, այժմ արդեն կենտրոնական տեխնիկական գրադարանում կան չորս հոգի (ներառյալ մի թարգմանիչ) և հաստիքից դուրս յերկու թարգմանիչ-պրակտիկանոտ, կան մշակված գրացուցակներ և աշխատանքի մեջ գործադրվում ե պարբերական ինֆորմացիոն բյուլետենների լույս ընծայումը։

### ԱՐՏԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Ի՞նչ ե տեխնիկական կարինետը։ Մեր կարծիքով տեխնիկական կարինետն իրենից ներկայացնում ե նյութապես կոնսուլտացիոն բազայի, ինֆորմացիոն բազայի, ընթերցարանային դահլիճի և տեխնիկական գրականության զուգակցում։ Այդ կոմպլեքսին միանում են նաև տեխնիկական ցուցահանդեսները, իսկ հետագայում՝

Նաև տեխնիկական գրադարանը: Յեվ իրոք, ի՞նչ ե պահանջում տեխնիկական կարինետի այցելուն: Նրան պետք է տեխնիկական գրքույկ, պետք են խորհուրդ, տեղեկանք, կոնսուլտացիա, պետք է հարմար վայր աշխատանքի համար: Նա պետք է բավարարի իր պահանջները՝ տեխնիկայի ամեն տեսակի նորությունների ծանոթացման տեսակետից, նորություններ, թե՛ գործարանի և թե՛ արդյունաբերության մեր ճյուղի վերաբերյալ:

Դժբախտաբար այն շենքը, զոր գրավում է մեր տեխնիկական գրադարանը և արտադրական տեխնիկական կարինետը, մեծ չե իր չափերով: Տեխնիկական կարինետ են հաճախում որական 30—40 հոգի: Արտադրական, տեխնիկական կարինետին կից պարբերաբար անց են կացվում ամսական մինչև 30 կոնսուլտացիաներ և տեխնիկական կարինետի շենքում կազմակերպվում են 1—2 ցուցահանդես:

Բացի վերոհիշյալ մասսայական աշխատանքից, տեխնիկական կարինետի ու գրադարանի հետ անխղելիորեն կապված է մեթոդյուրոյի աշխատանքը՝ համարելու համար ցեխերի տեխնիկական գրադարանները, մշակելու համար գրքի հետ տարվող մասսայական աշխատանքի զանազան ձևեր, ինչպես որինակ, վիկտորինաներ և տեխնիկական մարտեր ու մասսայական կոնսուլտացիաների կազմակերպման վերաբերյալ աշխատանքը: Տեխնիկական կարինետում մենք հավաքում ենք այն ամբողջ նյութը, վոր բնութագրում ե տեխնպրոպի վերաբերյալ մեր կատարած աշխատանքի փորձը, ինչպես որինակ, խորհրդակցությունների, դասախոսությունների, զեկուցումների, կոնֆերանսների սղագիր-արձանադրությունները, լույս ընծայվող տեխնլուսանկարների, ճողելների որինակներ և այլն:

Մեծ աշխատանք է կատարված արտասահմանյան գրականության հետ: Այս հինգ ամսվա ընթացքում արված է արտասահմանյան հոդվածների 50 թարգմանություն, ըստ վորում թարգամանությունների համար

նյութի ընտրությունը կատարվում է հետևյալ կարգով: յուրաքանչյուր ստացվող ամսագիր կամ նամանավանդ հետաքրքիր գիրք, հատուկ մշակված ուղեգրով ուղարկվում է հատուկ կոնվեյերով այն աշխատողների աշխատանքային տեղերը, վորոնց կարող է հետաքրքրել տվյալ նյութը: Յուրաքանչյուր աշխատող ամսագիրը կամ գիրքը ստանալուն պես նշում է ուղեգրում այն հոդվածները, վորոնց առթիվ ցանկալի յեր ստանալ թարգմանությունները, ուժերենցիաները, աննոտացիները: Դրանից հետո ամսագիրը կամ գրքույկը գրադարան է վերադառնում և արդեն ուղեգրի վրա արած նշումների հիման վրա կատարվում են թարգմանությունները, կազմվում են աննոտացիաները, ուժերենցիաները:

Գրադարանի պրակտիկայի մեջ մտցված են տեխնիկական գրականության վերաբերյալ կոնսուլտացիաներ, չարունակ ալիքի լայն չափով նրանք գործադրվում են ցեխերում, ցեխային գրադարաններին կից: Գործադրվում է նույնպես՝ հետաքրքիր գրականության առաջնորդությունը՝ կարծիք հայտնելու համար: Մի քանի գեպքերում քումը՝ կարծիք հայտնելու համար: Մի քանի գեպքերում է գիրքը՝ այսպես կոչված ձեռքի բաժանությամբ: Այսպես, որինակ, մենք վարվեցինք զոդման գործի վերաբերյալ մասսայական բոլցուրի հետ, վործ հակայական քանակությամբ բաժանեցինք զոդողներին: Բաժանած գրքի մի մասը վերադառնում եր մեզ, իսկ մի մասն ել մնում եր ձեռքերում: Այն կորուստները, վորացութիւնը մենք կրում ենք նյութապես, չափազանց չնչին են և ամբողջովին հատուցվում են այն ոգուտով, զեկուցումների, կոնֆերանսների սղագիր-արձանադրությունները, լույս ընծայվող տեխնլուսանկարների,

ՈՎԴԻՈՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Պետք է ասել, վոր ռադիոյի ոգտագործման ընադարձում մեր գործարանի աշխատանքի պրակտիկայում

թերես հանդիսանում ե ամենից թույլ բնագավառը: Վո-  
րովհետև այդ բնագավառի հետամնացության պատ-  
ճառները չափազանց բնորոշ են, մենք այդ պատճառները  
կնկարագրենք ավելի մանրամասնորեն, վորակեսզի ըն-  
կերները: ծանոթանալով մեր փորձի հետ, կարողանան  
հաշվի առնել այն իրենց աշխատանքում:

Յերբ մենք մոտեցանք ուղղիոն ողտագործելու հար-  
ժին, պարզվեց, վոր գործարանում գոյություն ունեցող  
ուղիո-հանդույցը կես տարվա ընթացքում չի աշխատել  
տեխնիկական պատճառներով: Հանդույցն ու դիմք  
գտնվում էյին այնպիսի դրության մեջ, վոր ուղղիոն  
բատ եյության աշխատել չեր կարող: Այդ դեռ քիչ ե.  
ուղիոն այնչափ խայտառակ կերպով եր ողտագործ-  
վում առաջ, վոր անգամ ուղիո-ունկնդրումը ծայր աս-  
տիճան վարկարեկված եր: Մենք պետք ե վերակառու-  
ցեյինք ուղիո-հանդույցը և կազմակերպեյինք ուղիո-  
հաղորդումն այնպես, վոր նրա համար հեղինակություն  
նվաճեյինք:

Ուղիո-հանդույցի վերակառուցումը չափազանց  
շատ ժամանակ խլեց: Այն կազմակերպությունները,  
վոր կոչված եյին ուղիոֆիկացիայի յենթարկելու  
ձեռնարկությունները, մինչև այժմ ել չափազանց վատ  
են աշխատում, այդ պետք ե ասել առանց թագդնելու:  
Մոսկվայի հեռախոսային կայանը, վորի հետ պայմա-  
նագիր եր կնքված ուղիո-հանդույցի վերակառուցման  
մասին, աշխատանքը ձգձգում եր համարյա չորս ամսվա  
րնթացքում, բատ վորում մինչև այժմ այդ աշխատանքը  
Մոսկվայի հեռախոսային կայանը չի հասցրել ի՞ր վախ-  
ճանին:

Այդ գործն արագացնելու համար՝ մենք ստիպված  
յեղանք Մոսկվայի հեռախոսային կայանին մատակա-  
րարել զանազան նյութեր՝ հեռախոսաթել, արմատուրա  
և այլն, վորովհետև յեթե մենք ինքներս ձեռնամուխ  
չինեյինք այդ գործին, Մոսկվայի հեռախոսակայանը  
համարար մինչև այժմ ել գործի չեր դնի ուղիո-  
հանդույցը: Վերջապես՝ մարտի 1-ին ուղիո-հանդույցը

հասցված եր փոքրի շատե տանելի դրության, և մենք  
կարող եյինք սկսել աշխատանքը:

Սկզբում նախատեսված եր ուղիոյով կազմակերպել  
«Եերածական դասընթաց» և ուղիոյի մեջ մտցնել  
«Տեխնիկայի տիրապետման» խմբակների սպասարկու-  
մը: Սակայն պարզվեց, վոր գործարանի պայմաններում  
հնարավոր չել լիովին նախատակահարմար ձևով ոգտա-  
գործել ուղիոն ներկայումս այդ ուղղությամբ: Այս-  
տեղ կային հետեւյալ պատճառները:

1. Մեր տրամադրության տակ չկային բավական  
քանակով ուղիո-Փիկացիայի յենթարկված շենքեր,  
վորտեղ մենք կարող եյինք կազմակերպել ուսուցումը  
ուղիոյով:

2. Ուղիոյով ուսուցման կազմակերպումը չեր կա-  
րող սահմանափակվել միայն նրանով, վոր լոկ բառեր  
տրվեն, նա պահանջում եր հատուկ կազմակերպված աշ-  
խատանք ցուցադրական ձեռնարկներով, պահանջում եր  
հատուկ կոնսուլտացիաների կազմակերպված ցանց և  
այլն:

Այս բոլորը դարձնում եր, առաջին տեսքից, այն-  
չափ մատչելի տեխնիկական միջոցը, ինչպիսին ուղիոն  
է, չափազանց բարդ սխտեմ, վորի կարգավորելը չա-  
փազանց դժվար է:

Մեթոդական խորհրդակցություններում մենք կանո-  
նադանք ուղիո-կեսոյորյակների կազմակերպման փորձի  
կարգի վրա: Ուղիո-կեսորյակները տեսում են կես ժամ,  
բատ վորում նրանք սովորաբար բաղկացած են լինում  
2—3 զեկուցումներից, վորից յուրաքանչյուրը տեսում են  
10—15 ըոպե: Զեկուցումների թեմաներն են լինում ար-  
տադրական հրատապ հարցերը, զեկուցողներն են ճար-  
տարապետական-տեխնիկական աշխատողները և գործա-  
րանի բանվորները: Բերենք կեսորյա հաղորդումների  
ծրագրերի մի քանի որինակ:

Առաջին որինակ, միկրօֆոնի մոտ գյուտարարները  
պատճեն են իրենց գյուտերի մասին, պատճեն են այն

ուղիների մասին, վորոնցով նրանք հասան այդ գյուտեարին, այն տնտեսական արդյունքի մասին, վոր ստացված է նրանց գյուտարարական աշխատանքի հետևանքով։ Նրանց յելութիւներից հետո ուացիոնալացման-գյուտարարական բյուրոյի ներկայացուցիչն ամփոփի հաղորդում է անում գյուտարարական աշխատանքների թեմաների մասին։

Յերկրորդ որինակ. մեխանիկական ցեխը մատնանշում է գործիքի տեխնիկական թերությունները և այն խոտանքը, վոր ստացվում է դրա հետևանքով։ Պատասխանի խոսքով հանդես է գալիս գործիքային ցեխի ներկայացուցիչը, վորտեղ նա պատմում է այն միջոցառումների մասին, վոր ձեռնարկում է գործիքային ցեխը՝ գործիքային տնտեսության ուացիոնալացման տեսակետից։ Վերջապես՝ յեղափակման խոսքով հանդես է գալիս գործարանի ճարտարապետական-տեխնիկական աշխատողների ներկայացուցիչը, վորն ամփոփում է գործիքային ցեխի խնդիրները։

Յերրորդ որինակ. հավաքման ցեխի ներկայացուցիչը դիմում է փականագործային ցեխին, կոնկրետ կերպով նկարագրելով այն խոտանքը, վոր ստացված է նրա արտադրածի հավաքումից։ Կոնտրոլ-քննական բաժնի ներկայացուցիչը տալիս է խոտանքի պատճառների մանրազնին նկարագրությունը և վերջապես՝ փականագործային ցեխի ներկայացուցիչը պատմում է տեխնիկական պլանի այն միջոցառումների մասին, վոր ցեխը ձեռնարկում է վերացնելու համար հիշյալ խոտանքը և այլն։

Բաղիո-աշխատանքի հաջորդ ետապը հանդիսանում է ուաղիո-պատասարկման կազմակերպումը ցեխներում։ Ուաղիո-պատասարկման մեջ վոչ մի կերպ չի կարելի հույսը դնել ինքնահօսի վրա։ Առանց ցեխում աշխատանքի համապատասխան կազմակերպման, անհնար և կազմակերպել բանվորների ուշադրությունը դեպի այս կամ այն ուաղիո-հաղորդման ունկնդրումը։ Այդ նպա-

տակով յուրաքանչյուր ցեխում, յուրաքանչյուր հերթափոխում առանձնացված են ուաղիո-ունկնդրման կազմակերպիչներ։ Մենք չենք կարող պարծենալ նրանք, վոր մեր ուաղիո-ունկնդրման կազմակերպիչներն ամենուրեք լավ են աշխատել։ Ուաղիո-ունկնդրման կազմակերպիչների հետ պետք է մեծ աշխատանք կատարել, նրանց պետք է հավաքել հրահանգակցությունների, ստուգել նրանց աշխատանքը, վերահսկել, բարձրացնել նրանց աշխատանքը և դնել պատշաճ բարձրության վրա, վորպեսզի նրանք զգան, վոր այն գործը, վորն իրենք կատարում են, չափազանց կարևոր գործ է։ Յեվ ահա ուաղիո-ունկնդրման կազմակերպիչների հետ աշխատանքի գծով մենք ներկայումս ճեղքվածք զգում ենք։ Այստեղ մեղանում դեռ ամեն ինչ կարգավորված չեն, և մենք մոտակա ժամանակներում պետք է գտնենք ուաղիո-ակտիվիտի հետ տարվող աշխատանքի ամենից հարմար ձևեր։

Մենք չենք հրաժարվում ուաղիոն ոգտագործելու և սխստեատիկ ուսուցում կազմակերպելու, և՛ ուաղիոյով մեծ զեկուցումներ տալու մտքից, սակայն ալյալ ետապում մենք մեզ խնդիր ենք առաջադրել, ինչպես հարկն է, ամրացնել ուաղիո-կեսորյակները և միայն դրանից հետո անցնել ուաղիո-ուսուցման կազմակերպման աշխատանքին։

Ինչ վերաբերում է մամուլին, մենք գործարանում ունենք տեխնիկական եջ ընդհանուր գործարանային տպագիր թերթին կից, տեխնիկական անկյուն՝ պատիթերթին կից, և վերջապես՝ տեխնիկական թռուցիկներ, վորոնց հրատարակումը մենք սկսել ենք այժմ։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԶԵՐ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏԻԹԵՐ

Գործարանային թերթին կից տեխնիկական եջը լույս է տեսնում համեմատարար կանոնավոր ձևով, նա ունի իր տեխնիթղթակիցների կաղըերը, վորոնք ի դեպ առաջմամբ տակավին շատ մեծ չեն և զբաղվում են

գործարանի հիմնական արտադրական հարցերի լուսաբանությամբ։ Այսպես որինակ, տեխնիկական եջում մշակվում են տեխնիկական պլանների հարցեր, արտադրանքի վորակի հարցեր, պլանայնացման հարցեր և այլն։ Տեխնիկական եջն այն հիմնական թերությունն ունի, վոր այնաեղ գտեղված նյութը հաճախ կրում է զուտ հրահանդչական բնույթ։ Այդ բացատրվում է նրանով, վոր տեխնիկական թղթակցիների կադրերը մեծ չեն և տեխնիկական եջը դեռ չի կարողացել զարգացնել բավականաչափ լայն չափով իր գործունեյությունը, վորպեսզի դառնա գործարանի տեխնիկական պլանի համար մղվող հասարակական պայքարի ամբիոն։

Տեխնիկական թղթակցային շարժման կազմակերպման ձևերը դեռևս միայն շոշափվում են։ Այդ տեսակետից չափազանց հետաքրքիր ե մեքենաների միտինգի լենինգրադյան փորձը և բանթղթակիցների տեխնիկական կոնֆերանսը, վոր կազմակերպված եր «Շարիկո-պող-չիպնիկ» գործարանում։ Մենք ներկայումս մեզանում, այդ յերկու փորձերի հիման վրա, վերակառուցում ենք տեխնիկական եջի աշխատանքը։

Պատի թերթերում տեխնիկական անկյուններն ունեն փոքր ինչ ավելի շատ տեխնիկակիցներ և, բացառությամբ մեխանիկական ցեխի թերթի, աշխատում են ավելի կոնկրետ նյութով։

Ամենից ակտիվ տեխնիկական պատի թերթը հանդիսանում է վերանորոգման ցեխի «Խուսլոր» թերթը վորը մարտականորեն պայքարում և ցեխի և հաստոցների կանխիչ վերանորոգման ռացիոնալացման համար և կազմակերպում ե իր շուրջը մեծ քանակով տեխնիկական թղթակիցներ՝ բանվորներից, վարպետներից, ճարտարապետներից տեխնիկներից։

Զնայած ուղղիոյի, տեխնիկական եջի և տեխնիկական պատի թերթի աշխատամնքի վերոհիշյալ թերթյուններին, այնուամենայնիվ նրանք ներկայումս տվյալ ետապում բավականաչափ ոգուտ են տալիս գոր-

ծարանին։ Այսպես որինակ, հատկապես հենց տեխնիկական եջը հանդիսացավ նախամարտիկը՝ ճնշման տակ ձուլելն արմատացնելու համար, պլաստիկ զանգվածների և ելեկտրո-դողման համար մղած պայքարում։ Գործարանի տեխնիկական եջում առաջին անգամ լայնորեն դրվեց մետաքսե սղոցների հարցը։ Եջն ունի իր արժանիքը նաև գործարանի տեխնիկականի համար մղվող պայքարում, մասնավորապես գործիքային արտեսության հարցերում։

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻԿՏՈՐԻՆԱ. ՅԵՎ. ՏԵԽՄԱՐՏ

Տեխնիկական վիկտորինաները, տեխնիկական մարտերը և տեխնիկական խնդիրների հավաքածուները կազմակերպվում են արտադրական տեխնիկական կարինեաների միջոցով։ Այս ձևերը լայն տարածում են ստացել և ժողովրդականացել են գործարանում։

Տեխնիկական վիկտորինաները, տեխնիկական մարտերի անցկացման մեթոդիկան քանիցս լուսաբանվել ե մամուլում։ Այդ պատճառով դրա վրա մենք կանգ չենք առնի, վորովհետև մենք մեր պրակտիկայում վոչ մի նոր բան այստեղ չենք ձեռնարկել։ Միայն կասենք, վոր տեխնիկական վիկտորինաները և տեխնիկական մարտերը, վորպես գիտելիքների ստուգման միջոց, վորպես ընթերցողներին մորիլիքացիաի յենթարկելու միջոց, վորպես բանվորների և մինչև իսկ ճարտարապետական-տեխնիկական աշխատողների լայն խավերին տեխնիկական ուսուցման մեջ ներդրավելու միջոց, չափազանց մեծ արդյունք են տվել։ Մի քանի ցեխերում տեխնիկական վիկտորինաներն իրենց շուրջն եյին հավաքում 200 հոգուու ավելի։ Այսպես որինակ, հավաքման ցեխում տեխնիկական վիկտորինաներին ցեխում հավաքած-200 հոգուուց տեխնիկական վիկտորինային ակտիվ մասնակցել են 60 հոգի և այլն։

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

կանգ առնենք առանձնապես տեխնիկական խնդիրների հավաքածուի վրա, վորը միանդամայն նոր ձեւ է՝ վոր առաջադրվել ե մեր ձեռնարկությունում։ Տեխնիկական խնդիրների հավաքածուները հրատարակում ե արտադրական տեխնիկական կաբինետը՝ 8—10 վոչ բարդ արտադրական-տեխնիկական խնդիրների ձեռվ, վորեւե կոնկրետ հարցի վերաբերյալ։ Այդ խնդիրները, վոր զետեղված են մի թերթի վրա, բազմացվում են համապատասխան քանակով և բաժանվում են բանվորների համապատասխան խմբակներին, ըստ վորում, բացի բուն խնդիրներից, թերթերում մատնանշվում ե նաև այն գրականությունը, վոր հարկավոր ե մշակել այդ խնդիրների լուծման համար։ Թերթերում մատնանշվում ե առաջարկված խընդիրների լուծումները ներկայացնելու ժամկետը։ Լուծումները ներկայացնում են ցեխում հատուկ յեռյակին, վորն ստուգելով այն, պարզեատրում ե լավագույններին։

Խնդիրների լուծման քննարկումը և մրցանակաբաշխությունը կազմակերպվում են ճաշվա ընդմիջումին։ Տեխնիկական խնդիրների հավաքածուները մեծ ժողովրդականությունը են վայելում և մեր պրակտիկայում յեղել են դեպքեր, յերբ մեր բաժանած 300 թերթիկից, մենք յետ ենք ստացել լուծումներով 90 թերթիկ։

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեխնիկական տոնը մենք կազմակերպել եյինք ընկատալինի՝ տեխնիկայի տիրապետման մասին արտասանած պատմական ճառի տարեղարձին։ Տեխնիկական այն տոնը, վորով մենք հավերժացրինք այդ տարեղարձը, մենք ձեռնարկել եյինք վորպես մի միջոց՝ մասսաներին այն չափով մորիլիզացիայի յենթարկելու նպատակով՝ պայքարելու տեխնիկայի տիրապետման համար, պայքարելու գործարանի տեխնիկական պլանի համար։ Տոնակատարությանը մենք խնդիր առաջադրեցինք մաս-

այականացնել տեխնիկական պլանի հիմնական հարցերը, տեխնոլոգիական նոր պրոցեսները, ուսցիությունումները և այլն։

Տեխնիկական տոնը բաղկացած եր հետեւյալ տարրերից՝ տեխնիկական ցուցահանդեսներ, տեխնիկական զրույցներ, տեխնոլոգիական նոր պրոցեսների ցուցադրումներ, տեխնիկական կինո և տեխնիկական զվարժություններ, ըստ վորում միանդամայն վանելով գեղարվեստական ամեն մի մաս, մենք մեզ խնդիր առաջադրեցինք տեխնիկական տոնին տալով իրոք տոնական հանդիսավոր արամադրություն, համակել այն ամենալուրջ տեխնիկական նյութով, բայց այնպիսի ձեռվ, վոր այդ նյութն ընդունվի բանվորների կողմից մեծ հետաքրքրությամբ։

Տեխնիկական տոնի բովանդակությունը։

Ակումբը, վորտեղ անց եր կացվում տեխնիկական տոնը, ամբողջովին, սկզբից մինչև վերջ, տեխնիկացված եր զանազան տեսակ ցուցահանդեսներով, վորոնց մեջ մտան մոտորների ցուցահանդեսը, մոտորների հատված դետալների և այլ ցուցահանդեսը, մեծ քանակով մողելներ ու մեքենաներ, գիտական-հետազոտական ինստիտուտի ցուցահանդեսը, «Նոր կառուցումների մեծ պանորման» ցուցահանդեսը, տեխնիկական գրականության ցուցահանդեսը, գյուտերի ցուցահանդեսը և այն ամենահետաքրքիր ապարատների ցուցահանդեսը, վոր մտցվում ե մեր արտադրության մեջ։ Բացի գրանից, ցուցահանդեսներում ցույց եյին տրված տեխնոլոգիական նոր պրոցեսների դետալներ՝ պլաստիկ զանգվածներ, ձուլում ձնշման տակ, զողման հանգույցներ և այլն։

Ցուցահանդեսներում աշխատում եյին կոնսուլտանտներ, վորոնք անց եյին կացնում վիկտորինաներ և տեխնիկական այլ համարներ։

Հանդիսարանը՝ վորտեղ տեղի եյին ունենում զեկուցումներն ու ցուցադրումները, յենթարկված եր ուղիղոֆիկացման և կինոֆիկացման։

Տոնի նախաղահությունը տեղավորված եր հենց հանդիսաբանում, իսկ բեմը վերածված եր նոր տեխնոլոգիական պրոցեսների ցուցադրման հրապարակի:

Տոնի կարգով լսված եյին ակադեմիկ Բախի և պրոֆ. Նեկրասովի գեկուցումները, զեկուցում դործարանի տեխնիկանի մասին՝ գործարանի տեխնիկական դիրեկտորի կողմից և կուսկոմի գեկուցումը՝ ընկ. Ստալինի ճառի տարեղարձի մասին:

Ցուցադրման կարգով ցույց եյին տրված տեխնոլոգիական պրոցեսներ՝ ձուլում ճնշման տակ, պլաստիկ դանդամներ, մետաքսե սղոցներ, «փոխորդ» մետաղ, ելեկտրո զոդում և այլն:

Հետաքրքիր տեխնիկական նորույթների ցուցադրման կարգով ցույց եյին տրված ալֆոնսոկոս ապարատը, դինամիկ ուղղողութուրը և այլն:

Բացի գրանից, տոնին տրվեցին լավագույն ցեխերի ռապորտները, վորոնք փոխանցվում եյին հանդիսաբանը ռադիոյով:

Տեխնոլոգիական պրոսեցների ցուցադրումը մասմբ անց եր կացվում բնական ձեռով, մասսմբ դիմումների ձեռով, բացատրության հետ միասին և մասմբ ել կինոյի ձեռով:

Վերջում բեմական հրապարակի վրա կազմակերպվեց գործարանի լավագույն փականագործների մրցակցությունը՝ դետալների ամենաարագ և լավագույն պատրաստման համար՝ լավագույն արդյունքները ցույց տվողների պարզեատրումով։ Դահլիճի մեջ բաց եյին թողնված թռչող մողելներ։

Բուն տոնի ընթացքում տեղի յեր ունենում կինո հանույթ, մասսայական լուսանկարում, Փոտո-ապարատի, ռադիո-ապարատի հետ վարվել ցանկացողների ռաւուցում և այլն։

Տեխնիկական տոնի անցկացման փորձը վկայում է աշխատանքի այդ ձեռի կարևորության մասին, մի ձե, վորն, ի հարկե, վոչ մի դեպքում չի կարելի ի չա-

թը գործ դնել, և վորի վրա պետք ե նայել միայն, վորպես մի միջոցի՝ մորիլիզացիայի յենթարկելու համար ուշադրությունը դեպի վորոշ տեխնիկական հարցերը, վորպես արտադրական առանձին խնդիրների լայն մասսայականացման միջոցի, տեխնիկական պրոպագանդի համար մասսաներին մորիլիզացիայի յենթարկելու միջոցի։

Մենք մտադիր ենք այդպիսի տեխնիկական առներ տարվա ընթացքում կազմակերպել վոչ ավելի քան 2—3 անգամ, վորովհետև նրանց հաճախակի կազմակերպումը կդռեհ կացնի տեխնիկական տոնի գաղափարը և վոչ միայն չի արդարացնի նրա վրա ծախսված ենք դիմումները, այլև կանդրադառնա տեխնիկական աշխատանքի վրա՝ նրա ուշադրությունը լայն չափերի հարցերի վրա դենտրոնացնելու տեսակետից՝ առանց այդ հարցերի մանրազնին մշակման։

### ՏԵԽՊԼԱՆ ՅԵՎ ՏԵԽՊՐՈՊԱԳԱՆԴ

Գործարանի առաջին տեխնիկական կոնֆերանսում վորոշում եր ընդունված տեխնիկական պլանի մշակման մասին։

Այդ վորշումն իր իրագործումը գտավ միայն առաջին կվարտալի վերջում։

Վորոշումն ընդունելուց հետո սկզբնական շրջանում գործարանի աշխատողների մեջ չափազանց շատ տարակուսանք կար տեխնիկական պլան կազմելու մեթոդիկայի, նրա նպատակի ու նրա մշակման ձեռքի վերաբերյալ։ Սակայն գործարանի կուսակցական կազմակերպությունները, վոր ներգրավվել եյին տեխնիկական պլանի աշխատանքին և հանձն եյին առել նրա մշակման կազմակերպման ղեկավարությունը, հատուկ կուսակցական տեխնիկական կոնֆերանս հրավիրեցին այդ հարցի առթիվ, հասան այն բանին, վոր հունվարի վերջում տեխնիկական պլանը խոսակցությունների ձերից սկսեց ստանալ ռեալ ձեեր։

Գործարանի տեխնիկական դիրեկտորին կից  
ստեղծված եր բրիգադ առաջատար բաժինների ու ցե-  
խերի ներկայացուցիչների կազմով, վորը մշակեց տեխ-  
նիկական պլանի համար հիմնական խնդրադրումները:  
Այդ խնդրադրումների մշակումից հետո նրանք բաժան-  
ված եյին ըստ բնադավառների և մշակված եյին գոր-  
ծարանի արտադրական- տեխնիկական- տնտեսական  
բաժնի հատուկ փաստաթղթերի ձևով, վորից հետո  
տեխնիկական պլանի մշակման բոլոր փաստաթղթերն  
ուղարկված եյին գործարանի ցեխերն ու բաժինները, և  
սկսված եր մասսայական աշխատանքի ծավալումը:  
Գործարանի տեխնիկական պլանի մշակման կազմակերպ-  
ման մեջ նրան վիճակից տեխնպլանի մասսայական աշ-  
խատանքի կազմակերպումը, մի շարք խորհրդակցու-  
թյունների հրավիրումը, տեխնիկական պրոպագանդի  
պլանի մշակումը և լայն մասսաների մորիլիզացիան ցե-  
խերում, բրիգադներում ու բաժիններում:

Գործարանի ՃՏՍ Բյուրոյի հրավիրած մի շարք  
խորհրդակցություններում մանրամասնորեն մշակված  
եր տեխնիկական պլանի հարցը, կազմակերպված եր  
ՃՏՍ աշխատողների կցումն, այն աշխատողների, վո-  
րոնք/աշխատում եյին գործարանային վարչության ա-  
պարատում և կցվում եյին ցեխերին, տրված եյին ցու-  
ցումներ ճարտարապետական- տեխնիկական աշխատող-  
ներին ցեխերում տեխնպլանի մշակման ժամանակ ողտա-  
գործելու համար:

Սակայն պետք ե ասել, վոր տեխնպլանի մշակման  
համար մենք ստիպված եյինք վերցնել այնչափ կարճա-  
տե ժամկետներ, վորի հարկե, այդ ժամկետներում ան-  
հնար եր ապահովել տեխնպլանի այն խոր աշխատանքը,  
վոր մենք ուզում եյինք ստանալ: Բայց ե այնպես, չնա-  
յած դրան, գործարանի տեխնպլանը, վոր կազմել եյինք  
մենք առայժմ միայն յերկրորդ կվարտալի համար, գոր-  
ծարանին տվեց մի շարք ամենահետաքրքիր տեխնիկա-

կան միջոցառումներ, վորոնք ապահովում եյին գործա-  
րանի ծրագրի կատարումը և հեշտացնում եյին նրա կա-  
տարման ընթացքը, առաջ եյին գործարանին նշանակա-  
լից դրամական խնայողություն: Որինակի համար բե-  
րենք խնայողության մի քանի թվեր, վոր ձեռք ենք բե-  
րել մենք տեխնպլանի մշակման հետևանքով:

1. Արտադրանքի մի միավորի համար ժամերի մեջ  
խնայողությունը համեմատած արդֆինպլանի հետ— 657  
Ժմ:

2. Ծախքերի վերաբերյալ խնայողությունը՝ հա-  
մեմատած արդֆինպլանի հետ— 89·000 ռուբլի:

3. Բանվորական ժամանակի կորուստների խնայո-  
ղությունը՝ համեմատած արդֆինպլանի հետ— 3,27%:

4. Բանուժի խնայողությունը՝ համեմատած արդ-  
ֆինպլանի հետ— 250·000 ռուբլի:

5. Ծախատանքի արտադրողականության աճումը՝  
համեմատած արդֆինպլանի հետ— 16%:

6. Ծառայողների հաստիքների կրճատումը 214 հո-  
գով և այլն, և այլն:

Յերրորդ կվարտալի տեխնպլանի մշակումը գործա-  
րանի տեխնպլանի նախաձեռնությամբ սկսված եր ժամա-  
նակին:

Յերկրորդ կիսամյակի տեխնպլանը մշակում է հե-  
տեւյալ կարգով.

Գործարանի տեխնիկական դիրեկտորին կից ստեղծ-  
ված ե բրիգադ 12 հոգու կազմով, վորը յեղած փորձի  
հիման վրա մշակում է յերկրորդ կվարտալի տեխնպլանը  
և խնդրադրումներ յերկրորդ կիսամյակի տեխնպլանի հա-  
մար: Այդ խնդրադրումներն իրենցից ներկայացնում են  
ամբողջությամբ վերցրած յերկրորդ կիսամյակի տեխ-  
նպլանի մեթոդուոգիան, մեթոդիկան ու թեմատիկան:  
Բրիգադի կողմից մշակումից հետո՝ նույթն ուղարկվում  
է արտադրական- տեխնիկական- տնտեսական բաժինը,  
վորը ձեւակերպում է այդ նյութը, վորպես փաստաթղ-  
թեր և ապա այդ փաստաթղթերը կուղարկվեն ցեխերին

ու բաժինները կազմակերպելու համար հանդիպական տեխնիկանի մշակումը:

Նախքան հանդիպական տեխնիկանի մշակումը կհրապարվեն մի շարք ճարտարապետական-տեխնիկական խորհրդակցություններ և գործարանի տեխնիկական մեծ կոնֆերանս, վորտեղ կքննարկվեն թե՛ յերկրորդ կվարտավի տեխնիկանի արդյունքները և թե՛ յերկրորդ կիսամյակի տեխնիկանը:

Մենք խնդիր ենք առաջադրել կազմել մի քանի ցեղերում փորձի կարգով բրիգադային-տեխնիկաններ, դրա հետ միաժամանակ պատի թերթերում և գործարանային բազմատիրաժ թերթում կծավալվի լայն դիսկուսիա յերկրորդ կիսամյակի տեխնիկանի վերաբերյալ:

Որինակի համար բերենք յերկրող կիսամյակի տեխնիկանի թեմատիկայի նախնական նախագիծը, վոր մշակում և բրիգադը.

1. Ճշտել տեխնոլոգիական պրոցեսները:

2. Ճշտել նյութերի ծախքի նորմաները:

3. Մշակել հրահանդչական քարտեր:

4. Մշակել արտասահմանից ներմուծվող նյութերի և սարքավորման փոխարինման հարցը:

5. Ճշտել ոժանդակ նյութերի ծախքի նորմաները:

6. Սարքավորման անձնագրերը (պասպորտները) հասցնել մինչև բանվորական վայրերը:

7. Ճշտել աշխատանքի նորմաները:

8. Գործարաքայինի անցնելու և աշխատանքը մրցանակային սիստեմով վարձատրելու պլանը:

9. Միջոցառումներ պլանային կանխիչ վերանորոգման վերաբերյալ:

10. Մշակել անհատական մոտորների կցումների հարդրությունը:

11. Կոսինուս «Փի»:

12. Ցեխները նոր տերրիտորիա տեղափոխելու պլանը:

13. Փաստաթղթերի շրջանառության մշակման պլանը:

14. Տեխնոլոգիական նոր պրոցեսների (ձուլում ճնշման տակ): Ելեկտրոզոդում և այլն) արմատացումը:

15. Նոր նյութերի ներդրումը (պլաստիկ զանգվածներ, «փոխորդ» մետաղ):

16. Արտադրության կազմակերպումը:

17. Ճշտել պլանայնացումը:

18. Տնտեսաշվարկի փոխել արհեստանոցներն ու բրիգադները:

19. Տեխնիկական կոնտրոլի կազմակերպումը:

20. Խոտանքի կանխումը:

21. Կաղըքը:

22. Տեխնիկապայմանդ և այլն:

Վերոհիշյալ նախագծից յերեւմ ե, թե ի՞նչ չափով մեծ է և միենույն ժամանակ վորքան կոնկրետ և տեխնիկանի ընդգրկած հարցերի ծավալը:

Գործարանի տեխնիկական խորհուրդը վորոշեց կազմակերպել արտադրական-տեխնիկական-տնտեսական բաժնին կից հատուկ սեկցիա՝ ստուգելու համար տեխնիկանի կատարման ընթացքը: Սեկցիայի աշխատանքի մեջ ե մտնում վոչ միայն տեխնիկանի կատարման ընթացքի կոտնրություն, այլև ցեխներին ցույց տրվող աջակցության կազմակերպումը, այն դժվարությունների գծով, վոր նրանք հանդիպում են տեխնիկանի իրացման ժամանակ:

Այդ սեկցիան, վոր բաղկացած ե մի քանի մասնագետաշխատողներից, նշանակալից չափով կողնի տեխնիկանի նաև միջոցառումների կիրառմանը և թույլ չի տա առանձին աշխատողներին ու ցեխներին մոռանալու այն պարտավորությունները, վոր նրանք հանձն են առել տեխնիկանի մասնակիությունը:

Տեխնիկապայմանը ինդրի մեջ կմտնի լայն հասարակայնության մասնակցության կազմակերպումը՝ տեխնիկանի կատարման ընթացքի կոնտրոլում և հասարակայնության կողմից ոգնության կազմակերպումը՝ ամենա-

արագ կերպով նախագծված միջոցառումների կիրառման գրում:

Ինքը տեխնպոպն իր աշխատանքը կազմակերպում է գործարանի տեխնիկանի հիման վրա և նրա բոլոր միջոցառումներն ուղղված են հիմնականում տեխնպոպագանդի միջոցներով իրացնելու տեխնպոլանում նշված միջոցառումները. այսպես որինակ, յերբ տեխնիկանով մտցվում են նոր տեխնոլոգիական պրոցեսներ, տեխնպոպը կազմակերպում է բանվորների ուսուցումն ու ծանոթացումն այդ տեխնոլոգիական պրոցեսների հետ. յերբ տեխնպոլ մտցվում են նոր նյութեր, տեխնպոպը կազմակերպում է այդ նյութերի մասսայական ուսումնասիրություն. յերբ տեխնպոլ մտցվում են նոր գործիքներ, հարմարանքներ ու սարքավորում, տեխնպոպը կազմակերպում է այդ հարմարանքների, գործիքների ու սարքավորման ուսումնասիրությունը: Յերբ տեխնպոլ հայտարերել ե, վոր հնարավոր ե խտացնել սարքավորման բեռնագորումը, ավելացնել նրա ուժի ոգտագործման կոեֆիցիենտը՝ տեղը կազմակերպում է տվյալ սարքավորման ու նրա ոգտագործման ուսումնասիրությունը: Այդպիսով գործարանի տեխնպոլ հանդիսանում է այն հիմքը, վորի վրա ծավալում է իր աշխատանքը նաև տեխնպոպը:

### ՏԵԽՄԻՆԻՈՒՄ ՅԵՎ ՏԵԽՊԼԱՆ

Տեխմինիմումի մշակումը մենք ձեռնարկել ենք միայն այժմ, ըստ վորում փորձի կարգով մենք ընտրել ենք խոտանողների (կոնտրալյորների) համար տեխմինիմումի մշակումը:

Յեթե վորակի հարցը ներկայումս գործարանի համար կարեւորագույն հարց է, ապա կոնտրոլի աշխատանքի վորակի հարցն այդ տեսակետից մի շարք բնագավառներում վճռական նշանակություն ունի: Մեզանում, գործարանում մենք ունենք այնպիսի դրություն, յերբ վորպես կոնտրալյորները հաճախ աշխատում են այնպիսի բանվորներ, վորոնք քիչ են ծանոթ արտադրության

հետ, յերիտասարդ բանվորներ, վորոնք միանդամայն անբավարար են պատրաստված իրենց պարտականությունները կատարելու համար: Կոնտրալյորների տեխնիկական անդրագիտության վերացման նպատակով մենք կազմել ենք 40—50 ժամված տեխնիկմում, վորը բաղկացած է հետեւյալ մասերից:

1. Տնտեսական-քաղաքական հարցեր:
2. Գծագրական գրագիտություն:
4. Զափական գործիքներով ոգտվելու տեխնիկա:
4. Նյութերը, կիսաֆարբիկատներն ու պատրաստի արտադրանքներն ընդունելու տեխնիկական պայմաններ:

6. Մեքենաշինության հիմունքները:

Այս բոլոր հայրցերը կմշակեն կոնտրոլյորները խմբակային պարապմունքների ձեռվ, ըստ վորում խմբակային պարապմունքներին միանում են այդ 50 ժամերից գուրս եքսկուրսիաները դեպի հարանման ձեռնարկությունները:

Նրանից հետո, յերբ կիրագործի 200 կոնտրոլյորների համար տեխմինիմումի տիրապետումը, մենք ստացած փորձի հիման վրա մտադիր ենք մշակել տեխմինիմումի առաջատար պրոֆեսիաների բանվորների համար և նախագծել ենք յերրորդ կվարտալի վերջում լայնորեն ծավալել տեխմինիմումի աշխատանքը:

Արդեն իսկ ներկայումս տեխնուսուցման մշակման ժամանակ, մենք քանիցո դեմ ենք առնում այդ ծրագիրը կազմելու մեթոդիկայի հարցերին: Յեթե դեռ տեխմինիմումի հարցի դրումից առաջ մենք յեկանք այն յեզրակացության, վոր անհրաժեշտ է կոնցենտրիկ ձեռվ կառուցել տեխնիսուցման ծրագիրը (որինակ, ատրճանակատործների համար ծրագիրը բաժանված է յերեք կոնցենտրիկ կոնցենտրուր, Յերիտասարդ ատրճանակատործների համար՝ առաջին կոնցենտր, 3-րդ և 4-րդ կարգի ատրճանակատործների համար՝ յերկրորդ և կոնցենտր, 5 և 6-րդ կարգի համար՝ յերրորդ կոնցենտր), ապա այդ բացա-

տրվում է նրանով, վոր սովորական տիպի ծրագիրը մեզ այլես չի բավարարում և մենք ծայրահեղ կարիք զգացինք մշակելու այնպիսի տեխնիմումներ, վորոնք հարմարեցված են զանազան կատեգորիաների բանվորների համար:

Տեխնիմումներ մտցնելու հետևանքով, մենք ներկայումս մշակում ենք բանվորական ժամանակի մորթիլզացիայի ձեւ տեխնիկայի տիրապետման համար:

Մենք մեզ խնդիր ենք առաջադրել, մշակել այնպիսի ձեւ, վորը հնարավորություն տա մորթիլզացիայի յենթարկելու բանվորական ժամանակը՝ այդ ժամանակի կուլտուրական ոգտագոծման համար տեխնիկայի տիրապետման նպատակով: Վորպես այդպիսի ձեւ, առաջարկված ե բանվորական ժամանակի խնայողական գրքույի, վորտեղ հատուկ չեկերի ձեռվ արձանագրվելու յետ այն ժամանակը, վորն այդ գրքույի տերը նվիրել ե տեխնիկայի տիրապեմտանը, թե խմբակներում կատարած աշխատանքի ձեռվ, թե եքսկուրսիաների ձեռվ, դասախոսություններ հաճախելու ձեռվ և այլն: Այն խնայողական գրքույիների տերերը, վորոնք լավագույն ցուցանիշներ են տվել, մասնակցում են հատուկ ֆոնդի խաղարկմանը, վորի շահութը բաղկացած է հեռավոր տեխնիկական եքսկուրսիաներից:

Տեխնիմում կապահանջի մեզանից նշանակալից չափով ամբացնել և ուժեղացնել մեթոդական աշխատանքը: Կապահանջի խնամքով մշակել խմբակների աշխատանքների կազմակերպումը և ե՛լ ավելի մեծ չափով ընդդրկել բանվորներին տեխնիկական ուսուցումով և այլն: Հատկապես այդ առթիվ մեզանում առաջարկ ծագեց տեխնիպերի ապարատում կազմակերպել հատուկ վարժամեթոդական խմբակ, վորը պետք է կազմված լինի համապատասխան պարարատված աշխատողներից: Այդ խմբակի պարտականությունը պետք է լինի՝ կազմակերպել աշխատանքը՝ ծրագիրը կազմելու, հղասատվական կազմի ընտրության և հրահանդան, ուսումնական ձեռնարկների գասագրերի ընտրության, շեն-

քերի կահավորման, որացուցակները կազմելու, տեխնիկայի տիրապետման խմբակների աշխատանքի ընթացքի, մեթոդական կոնտրոլի վերաբերյալ: Ներկայումն տեխնիմումի հետ միասին մի շարք ցեխերում ծնունդ է առնում տեխնիկայի տիրապետման խրմակների այնպիսի սիստեմ, վորը կառուցված է ուսումնասիրվող տեխնիկական հարցերի առավելագույն շերտավորման հիման վրա: Այդպիսի խմբակները ստեղծվում են բառիս բուն իմաստով 4-5 պարապմունքներով, ըստ վորում այդ խմբակներում գրվում են գլխավորապես նորեկ բանվորները, վորոնք պետք է շտապ կերպով տիրապետեն իրենց աշխատանքի յեղանակներին:

## ԱՇԽԱՍԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՅԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Վերջում մի քանի խոսք ասենք տեխնիկական գրքի հեղինակների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ: Տեխնիկական գրքի բանվոր ու ճարտարապետ հեղինակների խմբակը մեզանում չորս ամիս ե, ինչ աշխատում է, և նրա կազմի մեջ մտնում են 38 հոգի: Արդեն ներկայումն 12 ձեռագիր հանձնված է հրատարակության և քննարկվում են 20 նոր պլան: Խմբակն աշխատում է իր բյուրոյի ղեկավարությամբ, ըստ վորում ըյօւրոյի աշխատանքի մեջ մտնում ե բանվոր հեղինակների համար կոնսուլտացիաներ կազմակերպելու, հեղինակներին տեխնիկական ոգնության կազմակերպումը գծակարներ, լուսանկարում, գրականության ընտրություն և այլն): Հրամակվել են խմբակի ժողովներ, վորտեղ քննարկվել են ներկայացված ձեռագրերը և կազմակերպվել են ներկայացրած ձեռագրերի կոլեկտիվ մշակում, թե հեղինակների կոլեկտիվի ժողովներում և թե ցեխերում:

Հեղինակների կոլեկտիվը մեզանում առայժմ բաժնագում չե ըստ ցեխերի և աշխատում է վորպես միասնական, կենտրոնական կազմակերպություն արտադրա-

կան տեխնիկական կարինետին կից: Մենք դեռևս վերջ-նականապես չենք լուծել հեղինակների ցեխային կոլեկ-տիվների կազմակերպելու հարցը: Այսպիսի վերակա-ռուցման նպատակահարմարությունն առաջմ յենթա-կա յէ զանազան կասկածանքների: Մենք կարծում ենք, վոր ապագայում պահպանելով հեղինակների միասնա-կան կոլեկտիվը, կերպմակերպենք բոլոր ցեխերում պոստեր, վորսնք աշխատանք կտանեն կոլեկտիվի կազ-մի մեջ նոր կաղըեր ներգրավելու ուղղությամբ:

Կոլեկտիվին կից կա հաստիքային զեկավար՝ մաս-սայական տեխնիկական գրքի մասնագետ, վորն աշխա-տում ե նաև վորպես գրական կոնսուլտանտ:

Տեխնոպան իր լաբարատորիաների միջոցով կատա-րում ե բանվոր հեղինակների համար գծանկարներ, լու-սանկարներ, ընտրում ե իր տեխնիկական գրադարանի միջոցով նրանց համար անհրաժեշտ նյութը:

Այսպիսին ե տեխնոպալի աշխատանքը մեր՝ գործա-րանում:

Այս գրքում մենք կամեցանք տալ գործարանում տեխնոպալաղանդի գրության փոքրիշատե լրիվ լու-սանկարը, ցույց տալ նրա գրական ու բացասական կող-մերը, արտացոլել այն գժվարությունները, վորոնց գեմ հարկ ե լինում պայքարել, և մեզ թվում ե վոր այս գրքույթը, վորպես փորձի փոխանակման միջոց, կողնի այն ընկերներին, վորոնք աշխատում են տեխնոպա-գանդի ճակատում, կողնի նրանց փոխանցելու իրենց ձեռնարկություններն այն արժեքավոր սկսանքները, վոր կան մեզանում, ինչպես նաև կողնի խուսափելու այն-սխալներից, վոր թույլ ենք տվել մենք մեր աշխատան-քում:

ՄԵԽԳՈՐԾԱՐԱՆԻ, ԿԱՐԲԻԴԻ ՅԵՎ ՅԵՐԵՎԱՆԻ ԴԵ-ՊՈՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ  
ՄԱՍԻՆ

Յերևանի Կոմիտեյի բյուրոյի վորոշումը

1. Քաղկոմի բյուրոն արձանագրում ե, վոր չնայած

Համ կ (բ) կ կե-ի և կվ. Հ-ի հունվարյան պլենումի վո-րոշումներին՝ «նոր ձեռնարկությունների և նոր տեխ-նիկայի յուրացման, տեխնիկական արտադրության ի-րոք տիրապետելու անհրաժեշտության մասին, մինչև այժմ ինչպես Մեխանիկական, այնպես ել Կարբիդի գոր-ծարաններն այդ վորոշումը կատարում են չատ անբա-վարար և վոչ բավականաչափ:

2. Քաղկոմի բյուրոն նշում ե, վոր Մեխ. գործարա-նը ողտագործում ե յեղած սարքավորման միայն 66 տո-կոսը, վորի չնորհիլ մի հերթափոխի (314 բանվորի) հնարավոր արտադրական ծրագրի՝ 2,826,000 ռ., իսկ յերկու հերթափոխի ժամանակ՝ 4·500·000 ռ. փոխա-րեն ունի միայն արտադրանքի բաց թողման 2.000.000 ռ. պլան, և այդ պատճառով ստանոկները չեն ծանրա-բեռնված (Մեխ. ցեխում չեն աշխատում 17 ստանոկ, 2 մամուլ, զոդման ստանոկը, ձեւալորող հարթարդակն ոգտագործվում ե վոչ լիովին, ձուլման ցեխում 100 տոնն արտադրողականություն ունեցող 2 վագրանկա-վաստորեն ոգտագործվում են 43 տ. չափով):

Գործարանն իր ժամանակին չի նախապատրաստվել նոր մասուների արտադրության յուրացման համար, չի կազմակերպել պլանային-նախազգուշական վերանորո-դում, գործարանում տեղի ունեն խոշոր գործալքումներ (1 յեռամսյակում 1013 ժամ), բանվորների վորակը շատ ցածար ե (խառատային ստանոկների վրա աշխա-տում են ՖԶՈՒ-ի աշակերտները), տեխնիկական պրո-պագանդի աշխատանքը փաստորեն խափանված ե, ճար-տարագիտութեան. կազմը թույլ ե աշխատում վորակը բարձրացնելու գծով (ոտարերկրյա գրականություն դուրս չի դրվում, թույլ ե դրված փորձի փոխանակման գործը և այլն). գործարանում անբավարար ե կազմա-կերպված բրակերածը. կան գործարանի համար վոչ պետքական մի չարք ստանոկներ, վորոնք ընկած են ա-ռանց ոգտագործման (2 ավտոմատ, 1 ծակիչ, 2 ատրճա-նակային, 1 ֆրեզերնի ստանոկներ):

## ԿԱՐԲԻԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Քաղկոմի բյուրոն նշում և վորոշ նվաճումներ տեխ-  
նիկայի յուրացման գործում, այն ե՝ ելեքտրածինների  
գործածության ժամկետի յերկարացնում, դրա հետևան-  
քով տնտեսում ելեքտրածինների ծախսման գործում  
(մեկ տոննին—88 կլդ.), տեխ-պրոպագանդի աշխատան-  
քի համեմատաբար ավելի լավ կազմակերպում, դրան  
առընթեր արձանագրել, վոր կարբիտի գործարանի կա-  
րողությունն ուղտագործվում ե միայն 90 տոկոսով, չի  
կազմակերպված պլանա-նախագծուշական վերանորո-  
գում, չի կազմակերպված տեխ. վերահսկողություն և  
դեկավարություն հերթափոխություններում (հերթա-  
փոխային տեխնիկներ, շատ թույլ ե անցկացված աշ-  
խատընկալ պրոցեսների մեխանիզացիան (կրաքարի  
մանրացում, ելեքտրածինային խառնիչ) :

### ՅԵՐԵՎԱՆԻ ԳԵՊՈ

Յերևանի գեպոյի վերաբերյալ Քաղկոմի բյուրոն  
արձանագրում ե, վոր 1932 թ. Հոկտեմբերից սկսած  
դեպոյում պարագ են 3 ստանոկ (խառատային, տաշիչ,  
ծակիչ), վորոնք առանց վերահսկողության մնայու-  
թատճառով ժանգոտել են: Շողեքարշայինների և վե-  
րանորոգման ցեխի բանվորների մեջ գրեթե լիովին բա-  
ցակայում ե տեխնպրոպագանդը. մասնագետները չեն  
աշխատում իրենց վորակի բարձրացման վրա, ճիշտ չեն  
բաշխված վորակյալ կաղդերը (մեքենավարները), բա-  
ցակայում ե պլանային—նախագծուշական վերանորո-  
գումը, մի շարք շողեքարշային բրիգադների ցածր վո-  
րակ (Մարության, Ղազարյան, Սիմոնյան և մյուսն.):

### ՄԵԽԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

1. Ստանոկների և ձեռափորող հարթարդակի լրիվ  
բեռնվածությունն ապահովելու համար յելնելով մեջ  
տարվա արտադրողականությունից՝ 9000 ո., արտա-  
դրական ծրագիրը հասցնել մինչեւ 2826000 ո. վորի հա-  
մար գործարանի դիրեկտոր ընկ. Մինասյանին առա-  
ջարկել լրացնել բանվորների թիվը՝ մինչ 314 մարդ:

Այս հարցը տեղափոխել կկ. վերջնական համտառ-  
ման համար:

2. Ծանր արդյունաբերության ժողկոմատին և գոր-  
ծարանի դիրեկցիային հանձնարարել մշակել 33 թ. 3-րդ  
յեռամսյակից գործարանը յերկու հերթափոխի անց-  
կացնելու հարցը:

3. Ընկ. Մինասյանին առաջարկել մեկ ամսվա ժամ-  
կետում գործարանում կազմակերպել սարքավորման  
պլանային-նախագծուշական վերանորոգում:

4. Կկ.-ին խնդրել՝ ծանար արդյունաբերության  
ժողկոմատին առաջարկել գործարանն ապահովել հում-  
քի պլանային մատակարարումով:

5. Ընկ. Մինասյանին առաջարկել 5 որվա ժամկետում  
մշակել կոնկրետ միջոցառումներ՝ մոտոռներ բաց թող-  
նելու տեխնիկայի լիակատար յուրացման ապահովման  
համար:

6. Կերջնականապես կազմել մոտոռների կալկուլա-  
ցիան:

6. Արտադրանքի վորակի բարելավման և բրակի  
դեմ պայքարելու համար ընկ. Մինասյանին առաջարկել  
տասնորյա ժամկետում կազմակերպել տեխնիկական  
վերահսկողության բաժին, այդ աշխատանքում դնելով  
լավագույն մասնագետներին:

7. Նկատի առնելով 400 մոտոռի (իրենց պահեստի  
մասերով) պատրաստման մասին (յուրաքանչյուր կոմպ-  
լեքտար 2000 ո. արժեքով) Գլավսիրյոյի հետ կնքած պայ-  
մանագրի կատարման վիճեցման ռեալ սպառնալիքը—  
ծանր արդ. Ժողկոմատին և գործարանի յեռանկյունուն  
հանձնարարել մինչև մայիսի 25-ը ձեռք առնել այն բոլոր  
միջոցները, վորոնք ապահովում են պլանի կատարումը  
(հումք, գծանկարներ, սերիական մասեր բաց թողնելու  
հարցը, մոտոռների պատրաստման ժամկետը, փորձիչ  
գործիքների ձեռք բերում և այլն):

Ընկ. Զուրաբովին և Մինասյանին պարտավորեցնել  
99

տվյալ հարցի մասին ինֆորմացիա տալ Քաղկոմի Բյուրոյին՝ ձեռք առած միջոցների վերաբերյալ:

8. Գործարնի վարչությանը և Ծանր արդ. Ժողկոմատին առաջարկել վերջնականապես մշակել պլանի կատարման հաշվառումն ըստ նատուր-պլոդուկցիայի կատարելու հարմար:

9. Ընկ. Մինասյանին առաջարկել 5 որվա ժամկետում կազմել առաջ Մեխագործարանում աշխատած վորակյալ բանվորների ցուցակը և նրանց Ծանր արդ. Ժողկոմատի միջոցով ուղարկել Մեխագործարանն աշխատելու:

10. Ծանր. արդ. Ժողկոմատին հանձնարարել՝ առաջարկել ՖԴՌՀ-ին վերջինս ավարտած և ուրիշ կազմակերպություններում աշխատողներին տեղափոխել աշխատելու Մեխագործարանում:

Ընկ. Մինասյանին և Շտիկանին առաջարկել անձնական պատասխանառվությամբ 5 որվա ժակետում կազմակերպել տեխ. խմբակների աշխատանքը (ծրագիր. զեկուցողներ, գրականություն, շենք):

Ընկ. Արաջանին պարտավորեցնել ապահովել տեխնմբակների աշխատանքի սիստեմատիկ վերահսկողությունն ու ղեկավարությունը:

12. Գործարկոմին և ՄՏԿ-ի բյուրոյին առաջարկել 3 որվա ժամկետում ձեռք առնել կոնկրետ միջոցառումներ ապահովելու համար ճարտարագետ-տեխ. անձնակազմի վորակի բարձրացումը: Ընկ. Բալյանին պարտավորեցնել ապահովել սիստեմատիկ վերահսկողություն ու ղեկավարություն, այդ նպատակի համար բաց թողնելով անհրաժեշտ միջոցներ:

13. Ընկ. Մինասյանին և Ռեմմաշտրեստի վիրեկուրին առաջարկել 2 որվա ժամկետում տեղափոխել յեղած առանց ոգտագործության ընկած ստանոկները:

Ընկ. Զարիֆյանին հանձնարարել հետեւ այս վորոշման կատարմանը:

## ԿԱՐԲԻԴԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

1. Կարբիդի գործարանի դիրեկցիային առաջարկել ապահովել ելեքտրածինների ոգտագործումը վոչ պակաս քան 8 որվա ընթացքում:

2. Գործարանի դիրեկցիային առաջարկել 5 որվա ժամկետում մշակել որական վոչ պակաս 10 տոնն կարբիդի արտադրությունն ապահովող միջոցներ: Հնոցի վերանորոգման հարցը հանձնարարել մշակելու ծանր. արդ. Ժողկոմատին և գործարանի դիրեկցիային, ինչորմացիա տալով Յերկոմի քարտուղարությունը:

3. Ժողկոմիսորհին խնդրել՝ առաջարկել համապատասխան կազմակերպություններին կրաքարով անխափան կերպով ապահովելու համար (մինիմում ամսական 45 վագոն):

4. Դիրեկցիային առաջարկել 3 որվա ժամկետում ապահովել հերթափոխային տեխնիկների ներկայությունը հիմնական ցեխերում ուժեղացնելով արտադրության ընդհանուր տեխնիկական ոպերատիվ ղեկավարությունը:

5. Յեռանկյունուն պարտավորեցնել 3 ամսվա ժամկետում տեխ. խմբակներով անցկացնել (տեխմինիմում) վոչ պակաս գործարանի բանվորների 50 տոկոսից, վորի համար 2 որվա ժամկետում ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները (գրականություն, ծրագրեր, ղեկավարներ, շենք):

6. Դիրեկցիային առաջարկել հանքանյութը նախապատրաստելու ժամանակ անպայման տեսակավորել կրաքարը, վորի համար Ծանր. արդ. Ժողկոմատին խնդրել բաց թողնել անհրաժեշտ միջոցներ՝ մանրիչ և ելեքտրածիններին խառնիչ ձեռք բերելու համար:

7. Ընկ. Աղաբարյանին պարտավորեցնել 5 որվա ժամկետում իրացնել 2 դրեսսիլային կոճեր, վորոնք հարկավոր չեն գործարանին:

## ՅԵՐԵՎԱՆԻ ԴԵՊՈՅՈՒՄ

1. Դեպոյի պետ ընկ. Խվաչենկոյին պարտավորեցնել 3 որվա ժամկետում միջոցներ ձեռք առնել 3 ստանոկների ոլահպանման և նրանց ոգտագործման համար:

2. Դատախազությանն առաջարկել անհապաղ գործ սկսել ստանոկների փչացման և այդպիսիները 1932 թ. ի վեր անդործ թողնելու գործում մեղավոր հանդիսացողների դեմ:

3. Դեպոյի յեռանկյունուն պարտավորեցնել 5 որվա ժամկետում ձեռք առնել բոլոր միջոցները 100 տոկոսով ապահովելու գուգերթը, ինֆորմացիա տալով քարտուղարությանը:

4. Դեպոյի պետին պարտավորեցնել անհապաղ միջոցներ ձեռք առնել սարքավորման պլանա-նախազգուշական վերանորոգման համար:

5. Կուսքջին պարտավորեցնել 3 որվա ժամկետում ինչպես շոգեքարշայինների, այնպես ել վերանորոգման ցեխի բանվորների մեջ կազմակերպել տեխ-խմբակներ, ապահովելով այդպիսիների սիստեմատիկ աշխատանքը:

6. Քաղկոմի բյուրոն բոլոր ֆաբրիկա-գործարանային բջիջներին առաջարկում ե բնեարկել այս վորոշումը և այդ հիման վրա ձեռք առնել կոնկրետ միջոցներ յուրացնելու համար յուր ձեռնարկության տեխնիկական կառողությունն ու տեխնիկան:

7. Քաղկոմի Բյուրոն Մեխագործարանի, Կարբիդի գործարանի և դեպոյի կուսակցական, կոմյերիտական և արհեստակցական կազմակերպություններից պահանջում ե մարտական ձեռվ կենսագործել այս վորոշումները, մորթիլիզացիայի յենթարկելով լայն բանվորական մասսաների ակտիվությունը:

Այս վորոշումը մշակել ցեխերում, բրիգադներում և լայն կուսակցական ժողովներում:

8. Ընկ. Կուբտիկյանին առաջարկել այս վորոշման կատարման ընթացքը լուսաբանելու համար կազմել խմբագործյան հատուկ բրիգադ, մտրակելով կոնկրետ

մեղավորներին: Այս վորոշումը հրաժարակել մամուլ լում:

9. Առաջարկել ընկ. ընկ. Մինասյանին, Աղաբաբովին և Գևորգյանին՝ 10 որվա ընթացքում մշակել կոնկրետ միջոցառումներ՝ տեխնորմիորվկայի աշխատանքների դրվագքի լավացման համար:

10. Հեշված ընկերներին առաջարկել 20 որվա ընթացքում անցկացնել բոլոր ստանոկների լրիվ պասպորտիզացիան:

ՀԿ(բ)Կ ՅԵՐԿՈՄԻ ՔԱՐԹՈՒՂԱՐ՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ



## ԲՈԱՆԴՎԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՌԿ տեխնոլոգի կողմից

<b>Ներածություն</b>	<b>3</b>
<b>Տեխնիկական պրոպագանդի ապարատը</b>	<b>9</b>
<b>Տեխնիկական գեռավագանդի մեջ</b>	<b>13</b>
<b>Տեխնիկական գանձավոր և առարկայական ձևերը</b>	<b>31</b>
<b>Տեխնիկայի տիրապետման խմբակներ</b>	<b>39</b>
<b>Տեխնիկական կոնսուլտացիաներ</b>	<b>40</b>
<b>Տեխնիկական կոնֆերանսներ</b>	<b>50</b>
<b>Տեխնիկական դասախոսություններ և դրույժներ</b>	<b>55</b>
<b>Արտադրական-տեխնիկական խորհրդակցություններ</b>	<b>58</b>
<b>Տեխնիկական կոնֆերանսներ</b>	<b>58</b>
<b>Տեխնիկական եքսկուրսիաներ</b>	<b>62</b>
<b>Դիտա-տեխնիկական գործուղումներ</b>	<b>64</b>
<b>Տեխնիկական ֆուսոն վորպես տեխնիկայի տիրապետման միջոց</b>	<b>66</b>
<b>Տեխնիկական ցուցահանդեսներ</b>	<b>69</b>
<b>Տեխնիկական գրադարաններ</b>	<b>74</b>
<b>Արտադրական-տեխնիկական կարիքներ</b>	<b>75</b>
<b>Ռազիսն տեխնիկայի տիրապետմանը ոպարսարկելու գործում</b>	<b>77</b>
<b>Տեխնիկական եջեր և տեխնիկական պատի թերթեր</b>	<b>81</b>
<b>Տեխնիկական վիկտորինա և տեխմարտ</b>	<b>83</b>
<b>ՏԵխնիկական խնդիրների հավաքածու</b>	<b>84</b>
<b>Տեխնիկական տոնակատարություն</b>	<b>84</b>
<b>Տեխպլան և տեխնոլոգագանդ</b>	<b>87</b>
<b>Տեխմինիմում և տեխպլան</b>	<b>92</b>
<b>Աշխանտանք տեխնոգրքի հեղինակների հետ</b>	<b>95</b>
<b>ՀԿԿ(բ) Ցերեանի Կոմիտեյի վորոշումը՝ Մեխործարանի, կարբիդի և Ցերեանի դեպոյի տեխնիկական կարողության յուրացման մասին</b>	<b>96</b>

ՀՀ Ազգային գրադարան



NL0263712

ԳԻՐ 80 ԿՈՊ.

47



Н. ГОНЧАОРВ  
Техпропаганда на предприятиях  
ГИЗ ССР Арм. — Эривань 1938 г